ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ 2



## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Անահիտ Արնաուդյան Մարինե Մանուկյան

# ՄԱՅՐԵՆԻ 2

## Մեթոդական ձեռնարկ

ՀՏԴ 373.016:811.19(07)
ԳՄԴ 74.268.19=51g7
Ա 919

*Երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության,*
*մշակույթի և սպորտի նախարարության կողմից*

**Առնաուդյան Անահիտ, Մանուկյան Մարինե**
Ա 919 **Մայրենի 2** (մեթոդական ձեռնարկ) / Ա. Առնաուդյան, Մ. Մանուկյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2023.- 180 էջ:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում «Վարդանանք» կրթահամալիրի դասվարներ Մերի Թոռունյանին, Լաուրա Խաչատրյանին, Աստղիկ Արշակյանին՝ «Մայրենի 2» դասագրքի ստեղծման աշխատանքներին աջակցելու, ուսումնական նյութերն ու առաջադրանքները բնական ուսումնական միջավայրում դիտարկելու համար:

ՀՏԴ 373.016:811.19(07)
ԳՄԴ 74.268.19=51g7

ISBN 978-9939-969-20-6
© Առնաուդյան Անահիտ, Մանուկյան Մարինե
© Էդիթ Պրինտ, 2023

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հասարակության նորացումն ինքնին ենթադրում է կրթության նորացում, իրական շրջադարձ դեպի մարդը, անհատը, նրա սոցիալականացման խնդիրները, նրա համամարդկային և ազգային արժեքները.

- **մարդակենտրոնություն,**
- **մարդու իրավունքների պաշտպանություն,**
- **հանդուրժողականություն,**
- **էկոլոգիական անվտանգություն,**
- **սոցիալական համերաշխություն**

Ոչ ոք չի կասկածում մարդուն որպես բարձրագույն արժեք, որպես չափանիշ ընդունելու, նրա ազատ զարգացման, իր անձնային որակների, ընդունակությունների, ներուժի ու հետաքրքրությունների հաշվառման ու պահանջմունքների իրագործման իրավունքների ճանաչման անհրաժեշտությանը: Ակնհայտ է նաև հասարակության համար մանկավարժի մասնագիտական <u>առաքելության կարևորությունը:</u>

Այսօր դպրոցի ուսուցիչների համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել: Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք հետևանք են տեղեկատվության դարաշրջանի: Այդ փոփոխություններն անխուսափելորեն հանգեցրել են նոր ուղղությունների, կազմակերպման ավանդական ձևերի կատարելագործման:

Կրթության համակարգը կոչված է ապահովելու.

- **սերունդների պատմական ժառանգության փոխանցումը,**
- **ազգային մշակույթի պահպանումը, տարածումն ու զարգացումը,**

- **համաշխարհային մշակույթի յուրացումը, միջմշակութային և միջանձնային հարաբերությունների զարգացումը,**
- **նոր սերնդի ամբողջական աշխարհընկալման և գիտական աշխարհայացքի ձևավորումը,**
- **համակարգային և ստեղծագործաբար մտածելու հմտության ձեռքբերումը՝ հասնելով կրթության բարձրագույն մակարդակի, ուսումնառության ողջ կյանքի ընթացքում և շարունակական ինքնակատարելագործման գիտակցության:**

Կրթության զարգացման ժամանակակից միտումներին համապատասխան ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն ու կուլտուրան դիտարկվում են որպես կոմպետենցիաների ինտեգրված բազմաբովանդակ, բազմագործառութային ամբողջություն, որոնց միջոցով իրականացվում է ուսուցչի ուսումնադաստիարակչական, տեղեկատվական, հաղորդակցական, հանրամշակութային գործունեությունը:

Այսպիսով, հանգում ենք նորացող հասարակության պահանջները գիտակցող, ակտիվ գործող անհատի ձևավորման անհրաժեշտությանը, որ գտնվում է մշտապես ընդլայնվող միջմշակութային փոխազդեցությունների ոլորտում, հարմարվում է փոփոխվող և անհատականության զարգացման համար բարենպաստ միջավայրին:

Կրկին ու կրկին համոզվում ենք, որ հասարակության շարքերն օրեցօր համալրող շրջանավարտ քաղաքացին պետք է ունենա քննադատական մտածողություն, լինի ճկուն, նախաձեռնող, հայտնի սեփական տեսակետն այս կամ այն երևույթի, փաստի վերաբերյալ, զինված լինի համապիտանի կարողություններով, ի վիճակի և պատրաստակամ լինի ակտիվորեն ներգրավվելու իր արժեքների, սկզբունքների, դիրքորոշումների, իրավունքների պաշտպանության գործին:

Ուստի, անհրաժեշտություն է առաջանում կրթել և դաստիարակել մի այնպիսի սերունդ, որը հասարակական կյանքում կլինի մասնակցային՝ ներմուծելով այնտեղ մնայուն արժեքներ:

21-րդ դարում որպես կրթական պահանջ ձևակերպվում է ոչ միայն գիտելիքներ կուտակելու, այլև ուսումնառության ընթացքում չափելի և իրատեսական արդյունք գրանցելու, քննադատական մտածողություն, վերլուծական և ստեղծագործական հմտություններ զարգացնելու օրախնդիր պահանջ:

Տեղեկատվությունն օրեցօր բազմապատկվում է, իսկ գիտությունը՝ հնանում, ուստի, հարկավոր է սովորողին զինել այնպիսի հմտություններով, որոնք նրան հնարավորություն կտան իր աշխատանքին ստեղծագործաբար մոտենալ, իր առջև ծառացած խնդիրներին տալ այլընտրանքային լուծումներ, պարբերաբար թարմացնել գիտելիքները:

Ամրագրելով կարողունակահեն մոտեցումը՝ հանրակրթության պետական նոր չափորոշիչը մանկավարժների ուշադրությունը բևեռել է ակտիվ սովորողի՝ որպես ուսումնական գործընթացի իրավասու սուբյեկտի վրա՝ նրան դիտարկելով որպես գործընթացի ակտիվ մասնակից, սեփական կրթության համահեղինակ, շփման մեջ ազատ, իր տեսակետն առաջ տանող, ինքնավստահ, իր և ուրիշների իրավունքները հարգող, նախաձեռնող, հանդուրժող, համագործակցող, առողջ քննադատություն լսող անհատ:

Միայն գիտելիքների վրա հիմնված ուսումնառությունը չի կարող լուծել վերոնշյալ խնդիրները, քանի որ գիտելիքահեն ուսուցում իրականացնում է հիմնականում ուսուցիչը՝ գիտելիքներ փոխանցող իր գործառույթով:

Մինչդեռ կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը սովորողին տալիս է ազատություն, պատասխանատվություն, իր նպատակներն ինքնուրույն սահմանելու, իր քայլերը պլանավորե-

լու, հետազոտություն կատարելու, դրանք ընկերների և դասավանդողի հետ քննարկելու, համագործակցելու, վերլուծություն կատարելու, հետադարձ կապ ապահովելու հնարավորություն՝ արդյունքում արձանագրելով ուսման որակի բարելավում:

Կարողունակահեն ուսուցումը ինքնաբացահայտման, սխալների վրա սովորելու մոտեցում է որդեգրել, իմաստալից իրավիճակ, երբ սովորողը կարող է զարգացնել համապիտանի կարողություններ՝ քաջ գիտակցելով իր կրթության տեսլականը: Կարողունակությունները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար: Վերջնարդյունքը ոչ թե տվյալ առարկայի հաջող յուրացումն է, այլ՝ կարողունակությունների ձևավորումը: Կարողունակությունները միայն տվյալ պահի համար չեն. դրանք պետք են սովորողին ամբողջ կյանքի ընթացքում:

Հանրակրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Միջնակարգ կրթության հիմնական կարողունակություններն են՝

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն.

2) սովորել սովորելու կարողունակություն.

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն.

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն.

5) թվային և մեդիա կարողունակություն.

6) մշակութային կարողունակություն.

7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն.

8) տնտեսական կարողունակություն.

Յուրաքանչյուր առանցքային կարողունակություն, որպես կանոն, կարող է գերակա լինել դասավանդող այս կամ այն առարկայում, ինչպես, օրինակ՝ «Մայրենի» առարկայում ***լեզվական գրագիտություն*** կարողունակությունը: Սակայն բոլոր կարողունակություններն մի ամբողջական համակարգ են՝ միջառարկայական և ինտեգրված կապերով:

Հանրակրթության պետական չափորոշիչն իր ռազմավարական նոր մոտեցումների շրջանակում բարձր պահանջներ է դնում նաև դասագրքերի առջև՝ որպես կարողունակություններ ձևավորող, մոտիվացնող և արժեքներ փոխանցող լավագույն միջոցի:

Այդ է պատճառը, որ «Մայրենի-2» դասագրքի ստեղծման գործընթացում, որպես կրթության կարևոր առանցք, կարևորել ենք ուսման նկատմամբ շարժառիթի և արժեքների ձևավորման հարցը:

«Մայրենի-2» դասագրքի հիմքում, որպես արդիական պահանջ, ընկած է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը՝ տարրական ծրագրով սահմանված վերջնարդյունքների ապահովմամբ:

# ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Սույն մեթոդական ձեռնարկը որոշակի ուղենիշ է «Մայրենի-2» առարկան դասավանդողների համար և նպատակ ունի նրանց աջակցելու աշխատել նոր չափորոշչով, ըմբռնելու կրթական դաշտի նոր մարտահրավերներն ու առաջնահերթությունները, նպաստելու դասագիրքը հասկանալուն, ճիշտ և արդյունավետ գործադրելուն,

սովորողների ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելուն:

Դասագրքերին կից մեթոդական ձեռնարկները միշտ էլ պահանջված են եղել, սակայն դրանց դերն ու նշանակությունն, ըստ էության, պարբերաբար փոխվում են, քանի որ  ներկայացվում են նոր դասագրքեր, որոնք իրենց կառուցվածքով, բովանդակությամբ, նպատակներով և խնդիրներով տարբերվում են նախորդներից՝ պայմանավորված կրթական դաշտը կանոնակարգող տարբեր նորմատիվային փաստաթղթերով, նոր պահանջների, պայմանների թելադրմամբ և նոր իրողություններով:

Ձեռնարկը զգալիորեն բարձրացնում է դասագրքերի օգտագործման արդյունավետությունը, քանի որ շատ դեպքերում ուսուցիչը դժվարանում է կանխատեսել հեղինակի կամ հեղինակների մտահղացումները, բացահայտել մեթոդական հնարների կամ մոտեցումների՝ իր կողմից գործադրման անհրաժեշտությունը: Ձեռնարկն այս առումով միջնորդի դերակատարում ունի, քանի որ օգնում է լուսաբանելու դասագրքի մեթոդական կառուցվածքը, նպաստում դրա արդյունավետ կիրարկմանը:

Յուրաքանչյուր ուսուցիչ, որը հարազատ է իր դասավանդած առարկայի գիտական սկզբունքներին, առաջնորդվում է կրթական նորարարական գաղափարներով, աշխատանքին մոտենում է ստեղծագործաբար, ձգտում է կատարելագործել իր մասնագիտական որակները՝ ձևավորելով աշխատանքի սեփական ոճ, միանշանակ հաջողում է իր աշխատանքում, եթե օգտվում է դասագրքերին կից ուսումնաօժանդակ նյութերից՝ ուսումնառությունը դարձնելով առավել հետաքրքիր, բազմազան և արդյունավետ:

Մեթոդական ձեռնարկը բաղկացած է յոթ բաժնից, որոնք շաղկապված են օրգանական ընդհանուր կապերով, սակայն  յուրաքանչյուր բաժին ունի բովանդակային ու կառուցվածքային առանձ-

նախատկություններ և յուրովի է մեկնաբանում դասագրքի մեթոդական ապարատը՝ օգնելով ուսուցչին կողմնորոշվել դասագրքում:

Ձեռնարկում զետեղել ենք հետևյալ ենթաբաժինները.

- բաժին I. «Մայրենի-2»-ի առարկայական ծրագիր,
- բաժին II . Խաչվող հասկացություններ,
- բաժին III. «Մայրենի-2» դասագրքի կազմման սկզբունքներն ու առանձնահատկությունները,
- բաժին IV. «Մայրենի-2» դասագրքի բովանդակային քարտեզը,
- բաժին V. «Աշխատենք այսպես» (ուսուցման որոշ մեթոդներ և հնարներ),
- բաժին VI. Գնահատում,
- բաժին VII. Դասերի պլանավորման նմուշօրինակներ,
- բաժին VIII. Օրինակելի թեմատիկ պլանավորում:

**ԲԱԺԻՆ I**

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության,**

**մշակույթի և սպորտի նախարարի**

**2022 թվականի նոյեմբեր 24-ի N 65 Ն հրամանի**

# ՄԱՅՐԵՆԻ

## 2-րդ դասարան

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| **Հիմնական նպատակներ** |
|---|
| 1. ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>2. ձևավորել ինքնակազմակերպման հմտություններ<br>3. զարգացնել կամային որակներ<br>4. հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը<br>5. զարգացնել կարդալու և գրելու կարողությունները<br>6. զարգացնել հոգեկան գործընթացները<br>7. ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները |
| **Վերջնարդյունքներ**<br>1. Մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային: |

2. Լսի հրահանգեր, իրեն ուղղված խոսքը և արձագանքի:
3. Ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին:
4. Ունկնդրի գրական և ոչ գրական տեքստեր, պատասխանի հիմնական բովանդակության վերաբերյալ հարցերին:
5. Հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում:
7. Ընթերցի ոչ գրական պարզ տեքստեր տեղեկատվություն ձեռք բերելու և ժամանցի համար, խոսի ընթերցածի բովանդակության մասին:
8. Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտի խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով:
9. Ձևակերպի հետազոտական պարզ հարցեր:
10. Արտագրի ոչ մեծ տեքստեր, կատարի տրված առաջադրանքները:
11. 2 - 4 նախադասությամբ գրավոր արտահայտի իր հույզերը տեսածի, լսածի, դիտածի վերաբերյալ:
12. Ճանաչի բառը որպես պատկերավորման միջոց:
13. Խոսքի մեջ առանձնացնի հոմանիշ և հականիշ բառերը:
14. Ճանաչի բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց):
15. Ճանաչի կետադրական նշանները (վերջակետ, ստորակետ, բութ, չակերտներ):
16. Համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները:
17. Սիրի ինքն իրեն, իր ընտանիքը, հարգի ընկերներին,

ուսուցիչներին, հոգատար վերաբերմունք դրսևորի մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ:

18. Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում, հաղորդակցվելիս պահպանի ուղղախոսական կանոնները:
19. Կարևորի բարությունը, կատարի հանրօգուտ աշխատանք:

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| 1. Պատմել իր, իր ընտանիքի կյանքի ու սովորությունների մասին, արտահայտել վերաբերմունք ընտանեկան ավանդույթների վերաբերյալ՝ ցանկության դեպքում օգտագործելով ընտանեկան ալբոմից լուսանկարներ, տեսաձայնագրություններ:<br>2. Ներկայացնել իր և մյուսների, ինչպես նաև տարբեր մարդկանց միջև առկա նմանություններն ու տարբերությունները, խոսել մարդկանց առանձնահատկությունների մասին:<br>3. Նկարագրել իր բնակավայրը, վերլուծել առկա խնդիրներն ու մտածել դրանց լուծման ուղիների մասին՝ կազմակերպելով խմբային քննարկումներ: | **Օրինաչափություն**<br>Որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ բնության և հասարակության մեջ:<br>**Պատճառ և հետևանք**<br>Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսումնասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:<br>**Կառուցվածք և գործառույթ**<br>Ի՞նչ է, ինչի՞ համար է հարցերի միջոցով առարկաների, երևույթների ճանաչում և կիրառում ըստ նպատակի: |

| | |
|---|---|
| 4. Քննարկել առողջության և դրա վրա ազդող գործոնների կապը, առաջարկել ուղիներ առողջության պահպանման և ամրակայման համար, պատրաստել նկարազարդ թռուցիկներ, պաստառներ, վահանակներ:<br>5. Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ:<br>6. Արտահայտիչ արտասանել բանաստեղծություններ, իմանալ մանրապատում ստեղծագործություններ՝ հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, պատմել տարբեր ժողովուրդների հեքիաթներ:<br>7. Հյուսել ոչ ծավալուն պատմություններ թեմատիկ նկարների, ունկնդրած երաժշտության, դիտած ֆիլմի, ներկայացման, նկարի, առաջադրված թեմաների վերաբերյալ, հորինել հեքիաթներ, պատմություններ:<br>8. Մասնակցել խմբային աշխատանքների՝ պատմություններ հորինելու, թեմատիկ աշխատանքներ ստեղծելու, փոքրիկ ուսումնասիրություններ կատարելու | **Կայունություն և փոփոխություն**<br>Բնության մեջ, մարդկության պատմության մեջ մնայուն անփոփոխ և փոխվող, զարգացող երևույթները:<br>**Անհատ և հարաբերություններ**<br>Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:<br>**Ժամանակ և տարածություն**<br>Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:<br>**Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br>Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը: |

| | |
|---|---|
| նպատակով:<br><br>9. Մասնակցել հոգեկան գործըն-թացների, մասնավորապես՝ ու-շադրության, երևակայության, հիշողության զարգացմանը նպաստող, դերային, ուսումնա-կան, շարժական, ժամանցային խաղերի՝ մտքերն ու զգացում-ներն արտահայտելով ինչպես բառերի, այնպես էլ դիմախաղի, շարժումների, գույների, ձայների միջոցով:<br>10. Կարդալ գրական և ոչ գրական արձակ և չափածո տեքստեր, խոսել բովանդակության մասին:<br>11. Բացատրել ունկնդրած և ընթեր-ցած տեքստի նորածանոթ բա-ռերն ու արտահայտությունները, կիրառել դրանք խոսքում:<br>12. Վերարտադրել գեղարվեստա-կան ստեղծագործությունը՝ նույ-նությամբ կամ ստեղծագործա-բար՝ հետևելով դեպքերի զար-գացմանը, հերոսների փոխհա-րաբերություններին:<br>13. Ստեղծել երկխոսություններ խոս-քային տարբեր իրավիճակների վերաբերյալ, արտահայտել հույզե- | **Զարգացում.**<br><br>Բնության և հասարակութ-յան մեջ բնականորեն կամ ուղղորդված փոփոխութ-յունները, որոնք ապահո-վում են զարգացում: |

| | |
|---|---|
| րը բառերով, բառակապակցություններով և նախադասություններով՝ պատասխանելով հարցերին:<br>14. Վերլուծել ընթերցած տեքստի հերոսների վարքագիծն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ:<br>15. Ընթերցած և ունկնդրած տեքստից հարցերի օգնությամբ առանձնացնել հոմանիշ և հականիշ բառերը:<br>16. Խմբավորել բառերը ըստ կազմության՝ որոշելով բաղադրիչները (արմատ, ածանց):<br>17. Տեքստից հարցերի միջոցով առանձնացնել գործողություն, առարկա, առարկայի որական և քանական հատկանիշ ցույց տվող բառերը:<br>18. Որոշել նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, ընդարձակել նախադասությունը՝ հարցերի օգնությամբ ավելացնելով հատկանիշ ցույց տվող բառեր: | |

| | |
|---|---|
| 19. Խաղալ լեզվական խաղեր ստեղծել և լուծել գլուխկոտրուկներ, խաչբառներ:<br>20. Կատարել ստեղագործական բնույթի արտագրություններ, փոխադրել ընթերցած և ունկնդրած փոքրածավալ տեքստեր, մի քանի նախադասությամբ գրավոր արտահայտել կարծիք, վերաբերմունք:<br>21. Ստեղծել շնորհավորական բացիկներ ընտանեկան տարբեր տոների վերաբերյալ:<br>22. Ստեղծել դասարանական գրադարան, կազմակերպել գրքերի ընթերցում, ներկայացում և համատեղ քննարկում՝ կարծիքներ և տպավորություններ փոխանակելով ընթերցածի վերաբերյալ:<br>23. Ձևավորել ստեղծագործական անկյուն («դասարանական թատրոն», «արվեստանոց», «նկարահանման հարթակ», «ձայնագրման ստուդիա», «գովազդային գործակալություն», «ցուցասրահ» և այլն)՝ աշխատանքներ իրականացնելով ունկնդրած ստեղծագործության, ընթերցած գրքի բեմադր- | |

| | |
|---|---|
| ման, նկարազարդման, ձայ-<br>նագրման, գովազդման ուղ-<br>ղությամբ:<br>24. Ձևակերպել հետազոտական պարզ հարցեր, նկարագրել դրանց պատասխանները գտնե-լու հիմնական քայլերը, օգտվել առաջարկվող պաշարներից: | |

**Միջառարկայական կապեր**

1. ***Մանկական և գիտահանրամատչելի գրականություն***. բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքնե-րի, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, աշ-խատանք ոչ ծավալուն գիտահանրամատչելի տեքստերի շուրջ:
2. ***Կերպարվեստ.*** տարբեր ոճերի և ժանրերի նկարների դի-տում, դրանց շուրջ պատմությունների հյուսում, քննարկվող թեմաներով նկարների, տարբեր նյութերով աշխատանքնե-րի ստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշեն գրքույկների նկարազարդում, պաստառների ձևավորում, ինքնաարտահայտում գույների միջոցով:
3. ***Տեխնոլոգիա.*** խմբային աշխատանքի միջոցով տարբեր նյութերով (սերմեր, թելեր, գործվածք, ստվարաթուղթ և այլն) բեմադրությունների դեկորացիաների ստեղծում, ինք-նաարտահայտում պատկերների միջոցով:
4. ***Երաժշտություն.*** քննարկվող թեմաների վերաբերյալ երգե-

րի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում, ինքնարտահայտում հնչյունների և ձայների միջոցով:

5. ***Մաթեմատիկա.*** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում հատկանիշ ցույց տվող բառերով, ներկայացումների համար ձևավորում ստեղծելիս չափումների կատարում, առանձին մասերի գծագրում:

6. ***Ֆիզկուլտուրա.*** օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի պահպանման միջոցով սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում, սեփական մարմնի կառուցվածքի ճանաչում, առանձին օրգանների և օրգան – համակարգերի աշխատանքի քննարկում:

7. ***Թատրոն.*** թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների ներկայացում բեմադրությունների միջոցով:

8. ***Պար***. հնչյունների, շարժումների, պատկերների համադրում պարի մեջ, ինքնարտահայտում շարժումների միջոցով:

9. ***Ես և շրջակա աշխարհը.*** բնության երևույթների, Երկիր մոլորակի առանձնահատկությունների, կենդանական և բուսական աշխարհի ուսումնասիրում, մարդկանց կյանքի/գործողությունների և մոլորակի փոխազդեցության

| | |
|---|---|
| | վերլուծում, սեփական վարքի ու վերաբերմունքի փոփոխություն՝ հանուն անվտանգ կենսագործունեության: Դասարանում և տանը կանաչ անկյունների ստեղծում, բույսերի խնամք և դրանց աճի ուսումնասիրում՝ համապատասխան գրառումներ՝ նշանային պարզ համակարգի կիրառմամբ: Ընտանի կենդանիների խնամք (ցանկության և հնարավորության դեպքում), դրանց վարքի և առանձնահատկությունների ուսումնասիրում |
| | Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ |
| | S1, S3, S7, S8, S10, S12, S13, S14, S16, S17, S18, S21, S22, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S31, S32, S33, S34, S35 |

**ԲԱԺԻՆ II**

# ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչվող հասկացություններն առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում: Դրանք պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների ուսուցման ժամանակ:

Ընդհանրական հասկացությունների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է առարկայի առանձնահատկությամբ, սակայն վերոնշյալ խաչվող հասկացություններից ոչ բոլորն են պարտադիր ուսումնական տվյալ առարկայի շրջանակում: Դրանք հարկ է կիրառել՝ ըստ թեմայի նպատակահարմարության՝ հաշվի առնելով հաղորդվող թեմայի յուրահատկությունը:

Սակայն, որպես ընդհանուր պահանջ՝ հարկ է, որ բոլոր առարկաներում խաչվող հասկացություններն ընտրվեն ու կիրառվեն իրական կյանքի հետ համադրման համատեքստում:

Առարկայական ծրագրերում ներառված են տասներկու առանցքային գաղափարներ՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք
- Մասշտաբ, համամասնություն, քանակ
- Կառուցվածք և գործառույթ
- Համակարգ և մոդել
- Էներգիա, նյութ
- Կայունություն և փոփոխություն
- Զարգացում
- Անհատ և հարաբերություններ

- Ժամանակ և տարածություն
- Անհատական և մշակութային արժեհամակարգ
- Համաշխարհայնացում

| Հասկացություն | Նկարագրություն | Օգնող հարցեր |
|---|---|---|
| **Օրինաչափություն** | ➢ երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվածություններ<br>➢ որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ հասարակության մեջ<br>➢ մարդու գիտակցությունից դուրս և նրանից անկախ բնության ու հասարակության մեջ տեղի ունեցող օբյեկտիվ գործընթացների արտացոլում ճանաչողության մեջ և գիտելիքների որևէ բնագավառում<br>➢ որևէ երևույթի պատմական զարգացման մեջ դրսևորվող (դրսևորված) օրենք և դրա հետևանքը՝ արդյունքը | Ի՞նչ եք նկատում:<br>Ի՞նչն է օրինաչափ: |

| | | |
|---|---|---|
| **Պատճառ և հետևանք** | ➢ յուրաքանչյուր երևույթի անհրաժեշտաբար մեկ այլ երևույթի նախորդումը<br>➢ պատճառահետևանքային փոխազդեցություններ<br>➢ պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար | «Ինչպե՞ս տեղի ունեցավ», «Ինչո՞ւ տեղի ունեցավ» «Ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա», «Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ»: |
| **Մասշտաբ, համամասնություն, քանակ** | ➢ մասշտաբը որևէ բանի հարաբերական մեծություն է, չափանիշ, չափի աստիճան<br>➢ համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին կօգնի հասկանալ իր կատարած աշխատանքի ծավալը՝ հարկ եղած դեպքերում՝ համեմատություններ, վերլուծություններ կատարել | «Ի՞նչ է, ի՞նչ չափով է, ինչպե՞ս է փոփոխվել ժամանակի ընթացքում: |
| **Կառուցվածք և գործառույթ** | ➢ «Կառուցվածք» հասկացությունը տարրերի միջև եղած համակարգաստեղծ, օրինաչափ կապերի ու հարաբերությունների ամբողջություն է:<br>➢ Կառուցվածքայնությունը բնութագրվում է նաև կազմակերպվածությամբ և ինք- | Ի՞նչ է, ինչի՞ համար է, ինչպե՞ս են փոխկապակցված: |

| | | |
|---|---|---|
| | նակազմակերպվածութ-յամբ:<br>➢ Կառուցվածքը միևնույն խմբին կամ դասին պատկանող օբյեկտների բազմություն է՝ դրանց հատուկ գոյության ու գործառնության համընդհանուր սկզբունքներով:<br>➢ Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ: | |
| **Համակարգ և մոդել** | ➢ Համակարգը միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն է, որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն:<br>➢ Համակարգի միջոցով սովորողն ունենում է ընդհանրական պատկերացում՝ նմանություններ ունեցող երևույթների մասին:<br>➢ Մոդելները համակարգի պարզեցված տարբերակներն են: Համակարգը՝ որպես օբյեկտ, հանդես է գալիս | Ինչպիսի՞ն է համակարգը. միասնական, թե՞ տրոհվող: Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: Ինչպե՞ս են փոխկապակցված համակարգն ու մոդելը: |

| | | |
|---|---|---|
| | միայն իր տարրերով և դրանց անկրկնելի ու եզակի փոխազդեցությամբ:<br><br>➢ Յուրաքանչյուր համակարգ օժտված է կա-ռուցվածքայնությամբ և բաղկացած է կոնկրետ քանակությամբ տար-րերից:<br>➢ Համակարգին հատուկ է ո-րոշակի կայունություն և հարաբերական ինքնուրույ-նություն, որով հանդես է գալիս ավելի մեծ համա-կարգի շրջանակում՝ ենթա-համակարգի կարգավիճա-կով: | |
| **Էներգիա, նյութ** | ➢ Այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շրջապատում, **նյութ է՝** կենդանի կամ անկենդան:<br>➢ Կենդանի նյութերը մշտա-պես ինքնանորոգվում են, իսկ անկենդանները միայն փոփոխվում են արտաքին ուժի ազդեցու-թյամբ:<br>➢ Մեր շուրջբոլորը նյութ է կամ էներգիա:<br>➢ Էներգիան նյյութի հիմնա-կան հատկություններից | Ի՞նչ է նյութը, քանի՞ տեսակ է լինում:<br>Ի՞նչ է էներգիան և ի՞նչ կապի մեջ է նյութի հետ: |

| | | |
|---|---|---|
| | մեկն է, նրա շարժման չափը, շարժման հզորությունը՝ ուժը (ջերմության, լույսի, էլեկտրականության, մեխանիկական շարժման ձևով): | |
| **Կայունություն և փոփոխություն** | ➢ Կայունությունն ու փոփոխությունը բոլոր համակարգերի բնութագրիչներն են: Համակարգերը կայուն են, երբ բոլոր մուտքերն ու ելքերը հավասարակշռված են, որպեսզի ներքին գործընթացները կարողանան շարունակվել կայուն վիճակում:<br>➢ Փոփոխություն՝ տեղի է ունենում, երբ մուտքերն ու ելքերը հավասարակշռված չեն, այդ դեպքում առաջանում է կայունության փոփոխություն:<br>➢ Փոփոխությունը կարող է գրանցել առաջընթաց կամ հետընթաց: | |

| | | |
|---|---|---|
| **Զարգացում** | ➢ Զարգացումը շարժման բարձրագույն տեսակ է, բնորոշվում է պարզից բարդ օրինաչափ անցումով:<br>➢ Զարգացումը այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական նոր առաջադիմական վիճակ: | Ի՞նչ է զարգացումը: Արդյո՞ք ամեն փոփոխություն զարգացում է: |
| **Անհատ և հարաբերություններ** | ➢ Անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում:<br>➢ Անհատն այն մարդն է, որը բնութագրվում է տարբերիչ, միայն իրեն հատուկ հատկանիշների համալիրով, ում մեջ զարգացած է անհատականությունը, ինքնուրույն, կատարելության | Ո՞վ եմ ես, ո՞վ ենք մենք<br><br>Ո՞վ է պատմական անհատը, ո՞րն է նրա բնութագիրը: |

| | | |
|---|---|---|
| | հասած մարդն է, որը ակտիվորեն ճանաչում և վերափոխում է իրակա-նությունը, իր ուրույն ներդրումն ունի հասա-րակության զարգացման առաջընթացում, հաջո-ղությամբ դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում: | |
| **Ժամանակ և տարածություն** | ➢ Տարածությունն ու ժամա-նակը որպես գոյության հիմնական բնութագրիչ-ներ:<br>➢ Գոյությունը լիարժեք ընկալելու համար անհրա-ժեշտ է «մոտենալ» տա-րածությանը և ժամանա-կին/ տարբեր մարդկանց կենցաղ, նրանց պատ-մություններ, ճանապար-հորդություններ, մարդկու-թյան պատմության շրջա-դարձային կետեր, հայտ-նագործություններ, գյու-տեր, ինչպես նաև ան-հատների և քաղաքակր-թության միջև հարաբե-րությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյու- | Որտե՞ղ և ե՞րբ: |

| | | |
|---|---|---|
| | նից: | |
| **Անհատական և մշակութային արժեհամակարգ** | ➢ գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում<br>➢ միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում<br>➢ ստեղծարարություն | Ի՞նչ է ստեղծարարությունը: Ինչպե՞ս է մարդը դառնում ստեղծարար:<br>Որո՞նք են մշակույթն արժևորող ուղիները:<br>Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյանքում: |
| **Համաշխարհայնացում** | ➢ տնտեսական, քաղաքական, մշակութային համաշխարհային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց,<br>➢ մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերություններ, | Ինչպե՞ս է աշխարհում ամեն ինչ կապակցված:<br>Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները: |

| | | |
|---|---|---|
| | հնարավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա: | |

**ԲԱԺԻՆ III**

# «ՄԱՅՐԵՆԻ-2» ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մայրենի-2» մեթոդական ձեռնարկի բովանդակությունը պայմանավորված է «Մայրենի-2» դասագրքի կառուցվածքով: Ուստի, անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալու մայրենիի նոր դասագրքի հիմքում ընկած հայեցակարգային դրույթներին, առանձնահատկություններին, կազմման սկզբունքներին:

«Մայրենի-2» դասագրքի հիմքում տասներկուամյա հանրակրթական ուսումնական հաստատության 2-րդ դասարանի «Մայրենի» առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներն են:

Գիտենք՝ առարկայական ծրագիրը կազմվում է ուսուցչի, իսկ դասագիրքը՝ սովորողի համար: Հետևաբար, դասագրքի կազմման հարցում բացառապես առաջնորդվել ենք սովորողների տարիքային առանձնահատկությունների, ըմբռնումների, հետաքրքրությունների և նախասիրությունների հաշվառմամբ:

«Մայրենի-2» դասագիրքն ***ընթերցանության, լեզվական գիտելիքների, ուղղագրության*** միասնական ուսուցման դասագիրք է: Այսինքն, գեղարվեստական ստեղծագործությունների հետ համատեղ՝ սովորողներն ուսումնասիրում են նաև քերականական հասկացություններ, կատարում լեզվական և ուղղագրական առաջադրանքներ, որոնք սերտորեն կապված են ընթերցանության նյութի հետ և սկզբունքորեն լեզվական նյութի կարևոր մասը սովորողները դիտարկում են բնագրի շրջանակում և յուրացնում բնագրի միջոցով:

Դասագրքում ներկայացված ընթերցանության նյութերը դասակարգված են ըստ վեց թեմատիկ խմբերի, որոնց խորագրերը առաջադրված են «Մայրենի» առարկայական ծրագրում:

Այդ խորագրերն են՝

- «Ով ենք մենք»,
- «Ով ենք մենք ժամանակի և տարածության մեջ»,
- «Ինչպես ենք ինքնակազմակերպվում»,
- «Ինչպես ենք ինքնաարտահայտվում»,
- «Ինչպես է աշխատում աշխարհը»,
- «Ինչպես ենք մենք ապրում մոլորակում»:

«Մայրենի-2» դասագրքում, հարազատ մնալով վերոնշյալ խորագրերի բովանդակությանը, ուսումնական նյութը ներկայացվում է վեց թեմատիկ խմբով, որոնք հիմնական հասկացությունների, գիտելիքների դասդասման և խմբավորման, ինչպես նաև հմտությունների և արժեքների ձևավորման միջոցով դասագրքի համար հիմք են և ուղենիշ :

Այդ թեմատիկ խմբերն են.

**1-ին՝ «Բա՛րև, ե՛ս եմ»,**

**2-րդ ՝ «Ես կարող եմ»,**

**3-րդ ՝ « Երբ նա փոքր էր»**,

**4-րդ՝ «Եկե՛ք՝ տանեմ»,**

**5-րդ՝ «Մի տանիքի տակ»,**

**6-րդ՝ «Թե, ինչո՞ւ ... »:**

Դասագիրքն ունի կայուն կառուցվածք.

1. **թեմատիկ խմբեր** (դասագրքում ներկայացված է ժապավենի տեսքով),
2. **մուտքի խոսք** ( ծածկագրով է ներկայացված),
3. **տեքստեր, դրանց շուրջ աշխատանք**.

- **բառատախտակ** (բառային աշխատանք)
- **հարցեր,**
- **առաջադրանքներ** (**անհատական, զույգով, խմբային**),

4. **ամփոփում,**
5. **բառացանկ:**

Ներկայացված վեց թեմատիկ խմբերն ամբողջական և ավարտուն միավորներ են իրենց ընդհանուր նպատակով. նոր գիտելիքներ, լեզվական նոր կաղապարներ, բառահումք, կարողությունների, հմտությունների, արժեքների ձևավորման համար անհրաժեշտ ու բավարար պայմանների հիմք և այլն: Սակայն յուրաքանչյուր բաժին ունի իր նպատակը, տվյալ թեմայի ավարտին սովորողից ակնկալվող **վերջնարդյունքները:**

Անդրադառնանք թեմատիկ խմբերից յուրաքանչյուրին:

## 1. ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԵՐ, ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԵՐ

### I. Լայն թեմա՝ «Ով ենք մենք»

### Նեղ թեմա՝ «Բա՛րև, ե՛ս եմ»

**«Բա՛րև, ե՛ս եմ»** թեմատիկ խմբում ընդգրկված նյութերի հիմնական նպատակը սովորողների սեփական աշխարհը բացահայտելու, նրա հույզերի, ցանկությունների մասին խոսելու, նրանց վերաբերմունքի և բնավորության գծերի ձևավորումն է:

Այդ ստեղծագործությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշակի ընդհանրացումներ կատարել՝ իրեն ճանաչելու, վերաբերմունք ցույց տալու, աշխարհայացք և արժեքներ ձևավորելու տեսանկյունից: Օրինակ՝ «Ծիածան» բնագրի շրջանակում սովորողը ճանաչում է իրեն՝ մյուսների հետ շփման, նրանց

հետ մտերմանալու շրջանակում, գնահատում ընկերներ ձեռք բերելու, նրանց հետ բարեկիրթ շփվելու կարևորությունը, ներկայացնում է իր սեփական կենսակերպը, պլանավորելու, վերլուծելու իր քայլերը, («Շաբաթվա իմ յոթ օրերը») մարդկանց հետ փոխհարաբերությունները, («Ես») քննարկել տարբեր իրավիճակներում մարդկանց մոտեցումները, բարեվարքության և բարեկրթության դրսևորումները («Շնորհակալությունը, Ներեցեքը, Խնդրեմը») բացահայտելու իրեն, իրեն շրջապատող աշխարհը վերջ չունեցող հարցերի միջոցով՝ համոզված լինելով որ իրեն և աշխարհը բացահայտելու գործընթացը տևական է (Հարցերի պարը):

**II. Լայն թեմա՝** «Ինչպես ենք ինքնակազմակերպվում»,

**Նեղ թեմա՝** «Ես կարող եմ»:

***Ես կարող եմ*** թեմատիկ խմբում ընդգրկված նյութերը մարդկանց փոխհարաբերությունների, պատասխանատվության և կյանքում ստանձնած սոցիալական դերերի, միմյանց հետ ունեցած ընկերական կապերի, օգնության և փոխգործողությունների, իրենց իրերի, գույքի պահպանման, իրավունքների և պարտականությունների մասին են:

**III. Լայն թեմա՝** «Ինչպես ենք ինքնաարտահայտվում»,

**Նեղ թեմա՝** «Երբ նա փոքր էր»:

«Երբ նա փոքր էր  թեմատիկ խմբում ներկայացված են նշանավոր մարդկանց որոշ կենսագրական պատումներ. Հանս Քրիստիան Անդերսեն (հեքիաթագիր), Առնո Բաբաջանյան (երգահան), Լեոնիդ Ենգիբարյան (կրկեսի դերասան), Տիգրան Պետրոսյան (շախմատիստ) Հ. Թումանյան (բանաստեղծ):

Նշանավոր այս մարդկանց կյանքն ուսումնասիրելու հիմնական նպատակը նրանց կյանքի՝ մանկության տարիների որոշ դրվագներ ճանաչելն է: Դրվագներ, որոնք կարող են դաստիարակչական և արժեհամակարգի ձևավորման խթան լինել, օգնեն սովորողին բա-

ցահայտելու իրենց հետաքրքրությունները, նախասիրությունները, ինչո՞ւ չէ կողնորոշվել նաև մասնագիտության ընտրության մեջ:

**IV. Լայն թեմա՝** «Ով ենք մենք ժամանակի և տարածության մեջ»,

**Նեղ թեմա՝** «Եկե՛ք՝ տանեմ»:

***Եկե՛ք՝ տանեմ*** թեմատիկ խմբի նպատակն է սովորողներին «տանել» իրենց հայրենիքի գեղատեսիլ ու հետաքրքիր վայրերով, ծանոթացնել Հայաստանի բնաշխարհի հետ, ներկայացնել ժամանակի մեջ տեղի ունեցող փոփոխությունները, գիտական հայտնագործությունները, գիտության զարգացման ազդեցությունը մարդկանց կյանքի և գործունեության վրա՝ (հայ գրերի գյուտ, աստղագիտություն) արժևորելով Մեսրոպ Մաշտոցի, Վիկտոր Համբարձումյանի դերերը՝ հայ ժողովրդի պատմության կերտման գործում:

Ուսումնասիրելով զետեղված բնագրերը՝ սովորողները ավելի լավ կճանաչեն իրենց հայրենիքը, կգիտակցեն, որ հայրենասիրությունն սկսվում է սեփական տնից, ընտանիքից, կապված լինեն իրենց ընտանիքի, հայրենի տան և օջախի հետ, կծանոթանան իրենց ժողովրդի անցյալի ու ներկայի հետ, և որպեսզի այդ սերը կոնկրետ նյութ ու բովանդակություն ունենա՝ աշակերտները կատարում են բազմաբնույթ առաջադրանքներ՝ նվիրված իրենց հայրենիքին, հայրենի տանը, ընտանիքին, բնակավայրին և այլն:

**V. Լայն թեմա՝** «Ով ենք մենք ժամանակի և տարածության մեջ»,

**Նեղ թեմա՝** «Մի տանիքի տակ»:

**Մի տանիքի տակ** թեմատիկ խմբում ներկայացվում են նյութեր՝ մարդկանց կատարած լավ ու վատ գործերի, արարքների մասին: Ծանոթանալով բնագրերի բովանդակությանը՝ սովորողները գիտակցում են, որ ամենից առաջ մարդը բնութագրվում է իր ծավալած գործունեությամբ, լավ ու վատ գործերով և որոնց ուսումնա-

սիրությունն ու վերլուծությունը, գնահատումն ու արժևորումը հսկայական նշանակություն ունեն նրա հոգեկերտվածքի, աշխարհայացքի և մտահորիզոնի ձևավորման համար:

Խոսելով ու ներկայացնելով մարդկանց տարբերությունները՝ («Տարբեր, բայց նույնը»), հայրենի տունը լքելը, մարդկային տեղաշարժերը (միգրացիան), («Քո տունը», «Ամենից լավ տունը»), մարդկանց միջև ծագած անհամաձայնությունները, աշխարհին ավելի խաղաղ պահելը, մի երկնքի տակ ապահով և անվտանգ ապրելը («Մեկ և յոթ», «Ինչքա՞ն է կշռում մի փաթիլ ձյունը») սովորողները ձեռք են բերում իրենց շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն ցուցաբերելու, հոգատար վերաբերմունք ունենալու կարողություններ: Թվարկած բոլոր ձևակերպումները ՀՊՉ-ում ամրագրված են որպես վերջնարդյունքներ, որոնք ժամանակի ընթացքում դառնում են կարողունակություններ՝ յուրօրինակ չափանիշ և ուղենիշ՝ սովորողների ողջ կյանքի համար:

**VI. Լայն թեմա՝** «Ինչպես է աշխատում աշխարհը»,

**Նեղ թեմա՝** «**Թե ինչո՞ւ ...**»:

**Թե ինչո՞ւ ...** թեմատիկ խմբի հիմնական նպատակն է ճանաչել բնության երևույթները, բացահայտել աշխարհի մասին սովորողներին հետաքրքրող մատչելի օրենքներն ու գործընթացները:

## 2. ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

Յուրաքանչյուր ենթաթեմա սկսվում է ***մուտքի խոսքով,*** որը հնարավորություն է տալիս նախնական պատկերացում ունենալ թեմայի բովանդակության մասին, կանխագուշակումներ անել, սովորողներին համառոտ ներկայացնում է թեմայից իրենց սպասելիքներն ու հստակեցնում անելիքները:

Դասագրքում ***մուտքի խոսքը*** ներկայացված է յուրաքանչյուր թեմատիկ խմբի վերնագրին կից զետեղված ծածկագրի ներքո (տե՛ս 1-ին մաս՝ էջ 4-րդ, էջ 27-րդ, էջ 53-րդ, 2-րդ մաս՝ ՝ էջ 4-րդ, էջ 30-րդ, էջ 59-րդ):

Ուսուցիչը գաղտնազերծելով ծածկագիրը՝ հնարավորություն կտա սովորողներին լսելու **մուտքի խոսքը,** որը կարող է ծառայել որպես խթանման փուլի նյութ:

## 3. ՏԵՔՍՏԵՐ

Թեմատիկ խմբերում ընդգրկված բառահյուսվածքներն (տեքստերը) ունեն ճանաչողական, լեզվական արժեք՝ արժեհամակարգային շեշտադրումներով, դասակարգված են՝ ըստ դիդակտիկական սկզբունքների՝ մատչելիության, հաջորդականության, գիտակցականության և ակտիվության, տեսականի և գործնական կապի համամասնության պահպանման, արձակի ու չափածոյի հերթագայության, դրդապատճառի, ստեղագործական և սոցիալական հմտությունների ձևավորման և այլ պայմանների պարտադիր պահպանումով:

Սա ենթադրում է, որ դասագիրքը «Մայրենի» առարկայի յուրաքանչյուր դասի ընթացքում ապահովելու է ստեղծագործական, համագործակցային աշխույժ մթնոլորտ՝ աննկատելիորեն մղելով սովորողներին հաղորդակցվելու, իր մտքերն ազատ արտահայտելու, գրավոր փորձեր անելու, ինքնուրույն գործելու, ինքնադրսևորվելու, ինքնարտահայտվելու և ինքնակազմակերպվելու:

Դասագրքի կառուցման սկզբունքների մասին խոսելիս հարկավոր է ներկայացնել նաև ***մեթոդական համակարգը***, որը տարաբնույթ նյութերի յուրօրինակ հավաքածուն վերածում է դասագրքի մեթոդական, մանկավարժական, հոգեբանական, լեզվական

կուռ կառույցի՝ դարձնելով ուսումնառության գործընթացը վերջնարդյունքահեն:

Դասագրքում ընդգրկված բնագրերը ընտրված են խնամքով՝ սովորողների տարիքային առանձնահատկությունների, հետաքրքրությունների և նախասիրությունների հաշվառմամբ:

Բազմաբնույթ բնագրերի միջոցով սովորողը տեղեկություններ է ձեռք բերում իր ներաշխարհի, հույզերի, ցանկությունների մասին, այս կամ այն անհատի կենսագրական որոշ փաստերի, բնության երևույթների, գիտական հայտնագործությունների, շրջակա միջավայրի վրա մարդու ունեցած ազդեցության, բախումների (կոնֆլիկտների) լուծման, մարդկանց տեղաշարժման (միգրացիայի) և այլնի վերաբերյալ (տե՛ս թեմատիկ խմբերի բովանդակությունը):

Բնագրերից դուրս բերած տեղեկատվությունը սովորողը բացահայտ ձևով է ներկայացնում, իսկ ոչ բացահայտ տեղեկատվության վերաբերյալ՝ եզրահանգումներ է կատարում:

Դասագրքում **արձակ** նյութերն իրենց քանակով գրեթե հավասար են **չափածո** նյութերին (11 չափածո, 26 արձակ ստեղծագործություն): Բացի դրանց ճիշտ համամասնության պահպանման՝ արձակ և չափածո ստեղծագործությունները դասագրքում բաշխված են նաև հետևյալ հերթագայությամբ, օրինակ՝ «Բարև՛, ես եմ» թեմատիկ խմբում «Ծիածան», «Մի օրով էլ մեծացա» բանաստեղծություններին հաջորդում են երեք արձակ տեքստեր, և թեման փակվում է «Հարցերի պարը» բանաստեղծությամբ:

Այս մոտեցումը մեթոդապես արդարացված է, քանի որ բանաստեղծությունների ընթերցումը մեծապես նպաստում է խոսքի, ռիթմի և երաժշտականության զարգացմանը՝ հենք դառնալով արձակ նյութերը արտահայտիչ, ռիթմիկ, հանգավորված կարդալու հմտության ձևավորմանը:

Դասագրքում յուրաքանչյուր բնագրի հաջորդում է բազմաբնույթ առաջադրանքների համախումբ: Հարկ է նշել, որ դրանք նախատեսված չեն մայրենիի մեկ դասաժամի համար: Այդ առաջադրանքները պետք է բաշխվեն մայրենիի դասաժամերի միջև՝ ըստ իրենց նպատակի, բնույթի, կատարման քայլաշարի, տրամաբանության և ակնկալվող վերջնարդյունքների: Օրինակ՝ դիտարկենք Կոստանտին Ուշինսկու «Չորս ցանկություն» բնագրի շուրջ նախատեսվող առաջադրանքների կատարման տրամաբանությունը: Նախ՝ բնագրի շուրջ աշխատանք՝ ըստ բացատրական ընթերցանության մեթոդի (ԲԸՄ) քայլաշարի, ապա՝ հաջորդիվ անդրադառնում ենք հարցերին և առաջադրանքներին: Առանձնացնենք 6-րդ, 12-րդ, 15-րդ առաջադրանքները, որոնց կատարմանը հարկավոր է տրամադրել առանձին դասաժամեր՝ դրանք լիարժեք իրականացնելու և վերջնարդյունքներին հասնելու համար:

Այսինքն՝ դասագիրքը չի հետապնդում ամեն օր նոր նյութ անցնելու նպատակ, այլ հակառակը՝ կարևորում է բնագրի բովանդակությունը բազմաբնույթ առաջադրանքների միջոցով խորացնելու, այն լիաժեք ըմբռնելու և յուրացնելու հարցը՝ աշակերտներին տանելով բնագրին առնչվող տարբեր հարցերի լուսաբանման և հետազոտման ճանապարհով:

Օրինակ՝ «Չորս ցանկություն» բնագրիրն տարվա եղանակների մասին է, սակայն առաջադրանքները սովորողին տանում են **մետաիմացության դաշտ:** Նրանք ներկայացնում են եղանակի տեսությունը, քննարկում անձևրևոտ եղանակին ինչպես հագնվելու հարցեր, պատրաստում զեկույց՝ տարվա եղանակների կերպարներով, քննարկում կենդանիների և բույսերի ապրելակերպը տարվա տարբեր եղանակներին և այլն:

Այսպիսով, որպեսզի ուսուցիչը կարողանա արդյունավետ օգտագործել դասագիրքը, հարկավոր է, որ նա քաջածանոթ լինի մայ-

րենիի չափորոշչին և ծրագրին, մանրամասնորեն ուսումնասիրի ծրագրային պահանջները՝ սահմանված վերջնարդյունքների համատեքստում:

Յուրաքանչյուր վերջնարդյունք դիտարկի դասագրքում ընդգրկված առաջադրանքների, դրանցից բխող նպատակների ու խնդիրների շրջանակում. ի՞նչ անցնել, ինչպիսի՞ կարողություններ և հմտություններ ձևավորել, ի՞նչ մնաց սովորողին, ինչպիսի՞ վերաբերմունք և վարքագիծ ձևավորվեց, ի՞նչ փոխվեց նրա աշխարհայացքում, ի՞նչ դրական բան նա տարավ հետ իր կյանք, առօրյա:

«Մայրենի-2» դասագրքով աշխատող ուսուցիչները դասարանում պետք է ապահովեն բաց միջավայր, որտեղ սովորողները ազատ գործունեություն ծավալեն, չվախենան սխալներ թույլ տալուց, համագործակցեն ընկերների հետ, ուսուցչի հետ քննարկեն բազմաբնույթ հարցեր, գան ինչ-որ եզրահանգման, վերլուծություն կատարեն՝ հետագա աշխատանքներն ավելի բարելավելու, թերությունները վերացնելու համար:

Կարևոր է ոչ միայն «Մայրենի» առարկայի ծրագրային նյութի յուրացումը, այլև այդ գիտելիքը զարգացնելը, աճեցնելը, ստեղծագործաբար կիրառելը, չափելի և կոնկրետ վերջնարդյունքներ գրանցելը: Այսինքն՝ նյութը ոչ թե մեկ դասաժամի համար է նախատեսված, այլ վերջնարդյունքները գրանցելուն է միտված:

## Բառային գրատախտակ

Դասագրքում յուրաքանչյուր բնագրին հաջորդում է «**բառային գրատախտակը**»: Հեղինակային խումբը բառերի ներկայացման այս ձևն է ընտրել, որպեսզի հուշի ուսուցչին նմանօրինակ գրատախտակ ունենալ նաև դասարանում՝ հնարավորություն տալով աշակերտներին իրենց անծանոթ կամ չհասկացած բառերն ամ-

րացնելու և երկար ժամանակ իրենց տեսադաշտում պահելու համար:

Գրատախտակի հենքը, ինչպես երևում է դասագրքում պատկերվածից, խցանն է, որը հնարավորություն է տալիս բառերն ամրակներով հեշտությամբ ամրացնելու: Բառային գրատախտակը մի տարածք է, որտեղ հնարավոր է ցուցադրել տեքստի բովանդակությունից բխող այն բառերը, որոնք օգնում են տեքստի ըմբռնմանը, ունեն բացատրության կարիք՝ դասագրքում դրանք ներկայացված են  ամրակով, կամ արտասանությամբ և գրությամբ տարբերվում են՝ դասագրքում դրանք ներկայացված են  ամրակով:

Դասագրքում գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի (ուղղագրական) բառացանկը ձևավորվում է առանձին բնագրերից՝ որպես ուղղագրական աշխատանքներ իրականացնելու համար հենք, ինչպես նաև միջոց՝ բնագրի բազմակողմանի յուրացման համար:

Ինչպես Բահաթրյանն է նշում՝ «Գեղագրության դասի ժամանակ հենց սկզբից աշակերտները պիտի վարժվեն նաև ուղղագրության մեջ»: Այսինքն՝ ուղղագրական արժեք ներկայացնող բառերի գրությանը սովորողները ծանոթանում են տառուսուցման շրջանից սկսած, ուստի, դրա շարունակականությունը ևս պահպանված է դասագրքում:

Բառային գրատախտակին զետեղված բառերի շուրջ կարելի է ամենատարբեր աշխատանքներ կազմակերպել՝ ծավալել բառային խոսակցություններ, այսինքն՝ բառերը բացատրել՝ կապելով սովորողների կյանքի որևէ իրողության կամ փորձառության հետ, նկարագրեն այդ բառի իմաստն իրենց իմացած բառերով՝ կապելով նաև ուրիշ բառերի հետ և այլն:

Զետեղված բառերը սովորողները կարող են նաև ենթարկել հնչյունային և բառակազմական վերլուծության, դրանցով կազմել

բառակապակցություններ, գտնել հոմանիշներն ու հականիշները և այլն:

Բառերը կարող են ինչ-որ ժամանակ՝ ըստ անհրաժեշտության, մնալ գրատախտակի վրա, աշակերտների աչքի առջև՝ հնարավորություն ստեղծելով դրանք պահել ուշադրության կենտրոնում:

Սակայն նշենք, որ այդ բառերի քանակը չպետք է գերազանցի 4-5 բառը:

Հաջորդիվ կարելի է այդ բառահումբի շրջանակում կազմակերպել բազմաբնույթ աշխատանքներ՝ պարբերաբար փոխելով առաջադրանքի պահանջները, օրինակ՝ բառերը դասակարգել՝ ըստ բառասկզբի կամ բառավերջի հնչյունի, ավելացնել ածանց կամ վերջավորություն, կամ բառերը կարող են թելադրել միմյանց և կատարել փոխադարձ ստուգում:

Բառային գրատախտակին կարող են ամրացնել նաև որոշ բառեր, որոնք ցույց կտան, օրինակ, թե սովորողներն ինչն են սիրում, ինչը չեն սիրում, խմբավորել այդ արդյունքները և ներկայացնել որպես դասարանի նախասիրությունների կամ հետաքրքրությունների մասին ընդհանուր տեղեկություն և այլն:

Մեթոդական համակարգը պարունակում է **հարցեր ու առաջադրանքներ**՝ հետապնդելով նյութը համակողմանիորեն քննարկելու, դրա յուրացմանը նպաստելու, եզրակացություններ անելու, բնագրի շուրջ բառային, լեզվական բազմաբնույթ աշխատանքներ կազմակերպելու նպատակ:

Յուրաքանչյուր բնագրին հաջորդում են **հարցեր**, որոնց միջոցով սովորողների կողմից տեքստի ընկալումն է ստուգվում: Նա պետք է կարողանա պարզ ու հստակ պատասխաններ տա կարդացածի վերաբերյալ, նկարագրի գործող անձերին, վերլուծի նրանց գործողությունները, վարքից ու բարքից կատարի տրամաբանական և արժեհամակարգին միտված եզրակացություններ, դիտարկի

բնագրի կապը թեմատիկ նկարների կամ նկարազարդումների հետ և այլն:

«Մայրենի- 2» դասագրքում բազմաթիվ առաջադրանքներին կից զետեղված են **թեմատիկ նկարներ**, որոնք ինչպես նյութը լուսաբանելու, ավելի զննական դարձնելու, բնագիրը տարբեր կողմերից ընկալելու, այնպես էլ խոսքի և մտածողության զարգացման, գեղագիտական ճաշակի, դաստիարակչական ներգործություն ունենալու նպատակ ունեն:

Նկարների դիտման արդյունավետությունն ապահովելու համար կարող ենք փոքրիկ զրույց անցկացնել, որի նպատակը սովորողների աշխատանքին որոշակի ուղղվածության հաղորդումը և առաջադրված նկարի ճիշտ և բազմակողմանիորեն ըմբռնելու անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետք է լինի:

Նախ՝ աշակերտներին պետք է սովորեցնել մանրամասնորեն դիտել նկարները՝ տեսնել դրանց մեջ օրինաչափություններ, նույնիսկ փորձեն տեսնել այն, ինչը փաստացի պատկերված չէ, սակայն ուսումնասիրվող հարակից առարկաներում հանդիպել են, կամ դրանք առօրյա կյանքին, դրան առնչվող երևույթներին բնորոշ են ու բնութագրական (***օրինաչափություններ, զարգացում, համակարգ, մոդել, կայունություն, անհափ և հարաբերություններ*** և այլն):

Խոսքը հավասարապես վերաբերում է նաև բնագրի շուրջ տարվող աշխատանքին (տե՛ս դասապլանների նմուշօրինակները):

Առաջադրանքներում **խաչվող հասկացություններն** ակնառուացված չեն, սակայն ենթադրվում են բազմաշերտ հարցադրումների ներքո :

«Մայրենի-2» դասագիրքը միայն չի սահմանափակվում բնագրի շուրջ կազմակերպվող աշխատանքով: Բավականին բազմազան և բազմաբնույթ են ընդգրկված **առաջադրանքների** համախմբերը:

Շատ դեպքերում դրանք սովորողին տանում է մի այլ հարթություն, որտեղ նա ազատ ստեղծագործում է, հորինում ոչ մեծ պատմություններ, կատարում գործնական առաջադրանքներ, հաղորդակցվում ընկերոջ հետ, քննարկում, եզրահանգումներ կատարում՝ աշխատանքը տեղափոխելով համագործակցային դաշտ՝ խումբ (տե՛ս էջ 7-րդ, առաջ. 14-րդ, էջ 14-րդ, առաջ. 10-րդ, էջ 16-րդ, առաջ. 10-րդ, էջ 24-րդ, առաջ. 7-րդ, էջ 29- րդ, առաջ. 14-րդ և այլն):

Դասագրքի էջը բազմապիսի աշխատանքներ կատարելու հնարավորություններ է ստեղծում, և այդ ամենն ուսուցիչը պետք է շատ լավ պատկերացնի, որպեսզի սովորողին հասցնի սահմանված վերջնարդյունքին(ներ), նպաստի նրանց խոսքի, մտածողության, բարոյական որակների և մարդ-քաղաքացու ձևավորմանը:

Կան **ինտեգրված առաջադրանքներ,** որոնք ապահովում են միջառարկայական կապ (կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն, շախմատ, ես և շրջակա աշխարհը): Այս աշխատանքները կարելի է կատարել և՛ մայրենիի, և՛ կերպարվեստի, և՛ տեխնոլոգիայի, և՛ երաժշտության, և՛ ես և շրջակա աշխարհը առարկաների դասաժամերին՝ պլանավորելով համատեղ դասեր (տե՛ս էջ 7-րդ, առաջ. 13-րդ, էջ 10-րդ առաջ, 11, էջ 60-րդ առաջ, 13, էջ 66-րդ, առաջ. 6-րդ, առաջ. 7-րդ,առաջ. 9-րդ, **2-րդ մաս՝** էջ 86-րդ, առաջ. 17-րդ, 18-րդ, էջ 90-րդ, առաջ. 12 և այլն) :

Դասագրքում ընդգրկված են նաև բարեվարքության ու բարեկրթության կանոնների մշակմանն ուղղված առաջադրանքներ (տե՛ս էջ 6-րդ, էջ 20-րդ, էջ 21-րդ և այլն ):

«Մայրենի-2» դասագրքում **գրավոր կարողությունները զարգացնող առաջադրանքներն** իրականացվում են մայրենիի յուրաքանչյուր դասի ընթացքում, քանի որ այդ առարկան միասնացված է և ցանկալի չէ այն արհեստականորեն տարանջատել՝ գրավորի

կամ բանավորի: Աշակերտը պետք է զարգացնի գրելու և կարդալու կարողությունները միաժամանակ:

Ինչպե՞ս ենք այս հարցին մոտեցել դասագրքում:

Դասագրքի էջերում հանդիպում ենք գրելու գործողություն մատնանշող խորհրդանիշների, որոնց կից տրված բազմաբնույթ առաջադրանքները (լեզվական, մարզողական, ստեղծագործական և այլն) ուղղակի ճանապարհով լուծում են գրավոր կարողությունների զարգացման կարևոր խնդիրը: Իսկ սովորողը ե՞րբ է ունենում զարգացած գրավոր խոսք, երբ անընդհատ գրելու փորձեր է անում՝ չվախենալով սխալվել: Կարևոր պահանջ է նաև, որ առաջադրանքները մոտիվացնեն նրանց ինչ-որ բան գրելու, այլապես մենք այս հարցում չենք հաջողի:

Կարծում ենք՝ դասագրքում զետեղված առաջադրանքները կնպաստեն վերառարկայական այդ կարևոր կարողության զարգացմանը:

Մասնավորապես, աշակերտները՝

- հավաքում են տարբեր մտքեր, գաղափարներ և գրավոր ներկայացնում ինքնուրույն, նաև միմյանց,
- կատարում են լեզվական առաջադրանքներ,
- առաջադրված հարցերին գրավոր պատասխանում են,
- ստեղծագործական աշխատանքներ՝ պատմություններ, նամակներ, խորհուրդներ, սցենարներ, հաղորդագրություններ են գրում,
- նախագծային աշխատանքներ են կատարում՝ հընթացս զարգացնելով նաև գրավոր կարողությունը և այլն:

Գրավոր աշխատանքի տեսակներին( **արտագրություն, թելադրություն, փոխադրություն, շարադրություն**) ուսուցիչը կարող է առանձին դասաժամեր հատկացնել՝ ելնելով իր առջև դրված նպատակից:

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դասագրքի յուրաքանչյուր բնագրի ուսումնասիրման շրջանակում զետեղված են նախագծային աշխատանքներ, որոնք սովորողը կարող է կատարել և՛ տանը, և՛ դպրոցում՝ պայմանավորված աշխատանքի կազմակերպման նպատակով և առաջնահերթությամբ (տե՛ս էջ 13-րդ առաջ. 10-րդ, էջ 24-րդ առաջ. 7-րդ, էջ 45-րդ առաջ. 13-րդ, էջ 50-րդ առաջ. 16-րդ և այլն)։

Դրանք փոքրիկ հետազոտություններ են, որոնց հաղթահարումը կենտրոնացած, համակարգված և մանրակրկիտ աշխատանք է պահանջում՝ զարգացնելով նրանց համագործակցային, հաղորդակցական կարողությունները, ստեղծագործական միտքը, քայլաշարային և տրամաբանական մտածողությունը (տե՛ս «Մայրենի» առարկայական չափորոշչում տարրական ծրագրի վերջնարդյունքների «Հետազոտում/նախագիծ» սյունակը)։

Նախագծային աշխատանքներից ոչ բոլորն են նախատեսված մեկ դասաժամի համար։ Դրանցից մի քանիսն իրենց բովանդակությամբ և իրականացման քայլաշարով կարող են ենթադրել կարճաժամկետ նախագծեր, որոնք ուսուցիչը կարող է իրականացնել 1-2 շաբաթվա ընթացքում՝ տալով հանձնարարություն և պարբերաբար անդրադառնալով դրա կատարման ընթացքին՝ ուղղորդելով և աջակցելով աշակերտին՝ իր աշխատանքը կատարելու գործում (տե՛ս էջ 13-րդ առաջ. 10-րդ, էջ 50-րդ առաջ. 16-րդ. էջ 42-րդ, առաջ. 13՝ 2-րդ մաս և այլն) ։

Թեմաները կարող են ընտրել նաև սովորողները՝ դուրս գալով դասագրքի շրջանակից՝ առաջնորդվելով բացառապես իրենց հետաքրքրություններով և նախասիրություններով։

Ներկայացնում ենք նախագծային աշխատանքի քայլաշար.

**1-ին փուլ՝ նախապատրաստական կամ շարժառիթային**

| **Ուսուցչի գործունեությունը** | **Սովորողների գործունեությունը** |
|---|---|
| Մտահղացման ներկայացում | Քննարկում |
| Դրական տրամադրության ստեղծում | Իրենց գաղափարների առաջարկում |

**2-րդ փուլ՝ նախագծի նպատակների ու խնդիրների ընտրություն**

| **Ուսուցչի գործունեությունը** | **Սովորողների գործունեությունը** |
|---|---|
| Պարզաբանում է՝<br>• ինչ նպատակ է հետապնդում նախագիծը,<br>• ինչու է անհրաժեշտ,<br>• ինչպես կարող է հետագայում օգտագործել այն: | հարցերի պատասխաններից ելնելով՝ նախագծի նպատակի ձևակերպում |

### 3-րդ փուլ՝ Լուծման ենթակա ընդհանուր բնույթի խնդիրների քննարկում ու ձևակերպում

| Ուսուցչի գործունեությունը | Սովորողների գործունեությունը |
|---|---|
| խորհրդատվությու: Նախագծին առնչվող հիմնախնդրի վերլուծություն | • նախագծի կատարման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում և ուսումնասիրում: • Նախագծին առնչվող հիմնախնդրի վերլուծություն: |

### 4-րդ փուլ ՝ Հիմնախնդրի վերլուծումը ենթախնդիրների, խմբերի պարտականությունների բաշխում

| Ուսուցչի գործունեությունը | Սովորողների գործունեությունը |
|---|---|
| • աշակերտների հետ ընդհանուր խնդրի բաժանում ենթախնդիրների • արդյունքների վերլուծում: | • յուրաքանչյուր խմբի կողմից ենթախնդրի ընտրություն • իրենց արդյունքների համատեղ վերլուծում: • շտկումների կատարում |

| | |
|---|---|
| • նախագծի պաշտպանության նախապատրաստում: | • պատրաստում նախագծի պաշտպանությանը |

**5-րդ փուլ ՝ Աշխատանքի արդյունքների ամփոփում և ներկայացում**

| **Ուսուցչի գործունեությունը** | **Սովորողների գործունեությունը** |
|---|---|
| • կատարված աշխատանքի գնահատում: | • իրենց աշխատանքների ներկայացում:<br>• մասնակցություն խմբային վերլուծությանը և արդյունքների գնահատմանը: |

Նախագիծը մանրամասնորեն պլանավորվում է ուսուցչի կողմից, քննարկվում է աշակերտների հետ: Պետք է սկսել նախագծի թեմայի ընտրությունից, նախագծի ձևից, մասնակիցների քանակից: Այնուհետև ուսուցչին անհրաժեշտ է ձևակերպել խնդիրների հնարավոր տարբերակները, որոնք կարող են հետազոտվել տվյալ թեմայի շրջանակում: Խնդիրները կարող են առաջարկվել նաև աշակերտների կողմից: Առաջադրանքները բաժանում են խմբերին, որոշվում են հետազոտական հնարավոր մեթոդները, տեղեկատվության որոնման ձևերը, քննարկվում են ստեղծագործական լու-

ծումները: Վերջում կատարվում է նախագծի պաշտպանություն, արդյունքների ներկայացում:

Յուրաքանչյուր նախագծային աշխատանք կատարելուց առաջ, ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչ պետք է անեն սովորողները, ինչպես պետք է այդ գործը կատարեն և ինչ հաջորդականությամբ, ապա նույնպիսի բանավոր բացատրություն կամ հիմնավորում պահանջեն նաև սովորողից, որպեսզի հավատացած լինեն, որ նրանք պատկերացնում են իրենց անելիքը և ճիշտ կկատարեն այն:

Ստորև ներկայացնում ենք նախագծի նմուշօրինակ /տե՛ս էջ 10-րդ, առաջ. 11-րդ/:

1. Տեղեկություններ նախագիծն իրականացնողների մասին:

2. Նախագծի հակիրճ նկարագրություն:

Նախագիծն իրականացնելու ենք «Մայրենի» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների շրջանակում: Թեման է՝ « Բույսերն իմ կյանքում»:

- Սիրելի՛ երեխաներ, մեր առողջությունն անմիջական կախում ունի շրջակա միջավայրի վիճակից: Շատ հիվանդությունների առաջացման պատճառը հենց շրջակա միջավայրի աղտոտումն է:

Մեր խնդիրն է շատացնել կանաչը մեր շրջապատում, մեր դասարանում: Եվ այդ գործը մենք կսկսենք սենյակային բույսեր աճեցնելով:

3. Ո՞ր առարկայի գիտելիքներից ենք օգտվելու:

4. Նախագծի տևողությունը՝ 2 շաբաթ:

5. Նախագծի հիմնահարցը՝ « Ի՞նչ կտա ինձ իմ ստեղծած կանաչ անկյունը»:

6. Խնդրահարույց հարցերի առաջադրում.

Ի՞նչ եք կարծում՝ բնությանը վնաս կհասցվի, եթե անտեղի կոտրենք ծառի մի քանի ճյուղ, քաղենք պտղի փթթած ծաղիկը, բռնենք թիթեռ...

Քննարկե՛ք, հիմնավորե՛ք ձեր բերած օրինակները:

7. Բաժանվե՛ք խմբերի. յուրաքանչյուր խումբ ընտրի որևէ բույս, ներկայացրե՛ք, թե ինչ է նրան անհրաժեշտ փարթամ և առողջ աճելու համար:

Ծանոթություն: Բացառել այնպիսի բույսերի աճեցումը, որոնք կարող են ալեգիա առաջացնել, կամ հակացուցված են տվյալ տարիքային խմբի համար օրինակ՝ (հալվեն կամ փշոտ այլ բույսեր):

8. Պատրաստե՛ք զեկույց «Ի՞նչ նշանակություն ունեն բույսերը մարդկանց և կենդանիների կյանքում» թեմայով:

## ԲԱՌԱՑԱՆԿ

Դասագրքում յուրաքանչյուր թեմայից հետո ներկայացված բառացանկն ընդգրկում է անցած դասերի բառահումբը՝ հնարավորություն տալով սովորողին այն մեկտեղված տեսնելու, ևս մեկ անգամ այդ բառերի բացատրությանն ու ուղղագրությանն անդրադառնալու:

Դասագրքում յուրաքանչյուր ենթաթեմայից հետո ներկայացված ամբողջական **բառացանկը** ևս կարող է, որպես ուսումնական նյութ, օգտագործվել բառային, գրավոր աշխատանքներ կազմակերպելու համար (տե՛ս 26-րդ էջը, 52-րդ էջը, 74-ը և այլն ):

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփման դասերին սովորողները պետք է վերհիշեն, երևակայեն, ստեղծագործեն, նկարեն, գծեն, համեմատություններ և հակադրություններ կատարեն, դրանց հիման վրա ձևակերպեն եզրա-

կացություններ, դատողություններ, հարստացնեն իրենց գիտելիքները, կարողությունները, բառապաշարը՝ նոր սովորած եզրույթներով, անցած նյութերի մեջ մեկ անգամ ևս հայտնաբերեն այն նորն ու հետաքրքիրը, որոնք չէին նկատել, զգացել, ըմբռնել ընթացիկ դասերի ժամանակ:

Ամփոփումն իրականացվում է հարց-առաջադրանքների միջոցով, որոնք համակարգող-ընդհանրացնող բնույթ ունեն: Դրանք ***որպես վերջնարդյունքներ*** ձևակերպված են նաև հանրակրթության պետական, առարկայական չափորոշիչներում և «Մայրենի -2» առարկայական ծրագրում(տե՛ս 1-ին մաս՝ էջ 25-րդ, էջ 51-րդ, էջ 73-րդ, 2-րդ մաս՝ էջ 28-րդ, էջ 57-րդ, էջ 92-րդ):

«Մայրենի-2» դասագրքով աշխատելիս հարկավոր է առաջնորդվել ուսումնական գործընթացում սովորողի մեջ այնպիսի որակների ձևավորման օրախնդիր պահանջով, որոնք պետք կգան նրան և՛ իր առօրյա գործունեությունը կազմակերպելիս, և՛ ամբողջ կյանքի համար: Այդ նպատակին են ուղղված բազմաթիվ առաջադրանքներ, որոնք սովորողի առօրյայից են, բխում են նրա կենսափորձից՝ ձևավորելով տարբեր կարողունակություններ (տե՛ս էջ 33-րդ առաջ. 11-րդ, էջ 45-րդ, առաջ. 13-րդ, էջ 67-րդ, առաջ. 9-րդ, էջ 71-րդ, առաջ. 15-րդ և այլն):

Դասագրքում զետեղված առաջադրանքները կարելի է իրականացնել ուսումնական գործունեության կազմակերպման բազմաբնույթ ձևերով՝ առավել հետաքրքիր դարձնելով «Մայրենի-2» դասագրքով աշխատելը:

Դասագրքի առաջադրանքների կատարման հիմքում ընկած են գործունեության հետևյալ տեսակները՝

- **անհատական**. ինքնուրույն մտածել ինքն իրեն հարց տալ. ի՞նչ եմ ես կարծում,

- **զույգով.** տեսնել միևնույն երևույթը մեկ ուրիշի տեսանկյունից, լսել մեկը մյուսին,
- **խմբային.** զարգացնել և փոխանցել իր՝ նախորդ երկու փուլում ձեռք բերած կարծիքը, լսել մյուսներին:

«Մայրենի-2» դասագիրքն հավատարիմ է մնացել նաև մայրենի առարկայական ծրագրով առաջարկվող գործունեության ձևերին, որոնք առաջադրանքների ձևավորման հիմքում են (տե՛ս «Մայրենի-2» առարկայական ծրագիրը):

Ստորև ներկայացնենք ուսումնական գործունեության ձևերը՝

- պատմում, ունկնդրում, նկարագրում,
- երկխոսությունների կազմում,
- հարցերի ձևակերպում
- ուսումնական, դերային, նմանակող խաղերի իրականացում
- իրավիճակների առաջադրում, վերլուծում, քննարկում:

Նշենք, որ վերոնշյալ գործունեության տեսակները դասագրքում ներկայացված են **պայմանական նշաններով՝** ըստ համապատասխան բայերի կիրառման առաջնահերթության:

# ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Կարդում եմ, խոսում եմ, ուսումնասիրում եմ, դիտարկում եմ, վերլուծում, հասկանում եմ, առաջարկում եմ, ներկայացնում եմ, եզրակացություններ եմ անում, հիմնավորում եմ, ինձ ստուգում և գնահատում եմ:

Գրում եմ, գծում, նկարում եմ, մոդելավորում եմ, վերլուծում եմ, առաջադրանքներ եմ կազմում, մտքերս եմ գրանցում, տվյալներ եմ հավաքում, եզրակացություններ եմ անում, ինձ ստուգում, գնահատում եմ, ներկայացնում եմ...

Խոսում ենք, լսում ենք, մտքեր ենք փոխանակում, կարդում ենք, ուսումնասիրում ենք, դիտարկում ենք, հասկանում ենք, վերլուծում ենք, քննարկում ենք, համեմատում ենք, գաղափարներ ենք փոխանակում, կարծիքներ ենք բարձրաձայնում, քննարկում, հիմնավորում, փաստարկներ ենք բերում, իրար ստուգում ենք, գնահատում ենք, ներկայացնում ենք...

Գրում ենք, գծագրում, նկարում, մոդելավորում ենք, դիտարկումներ և գրանցումներ ենք անում, հասկանում ենք, վերլուծում ենք, առաջադրանքներ ենք կազմում, տվյալներ ենք հավաքում, վերլուծում, եզրակացություններ ենք անում և գրանցում, ստեղծագործում ենք, իրար ստուգում և գնահատում ենք, ներկայացնում ենք...

Փոքր (3-4) կամ մեծ խմբով (ամբողջ դասարանով) աշխատում ենք դասասենյակում կամ դասասենյակից դուրս, կարդում ենք, գրում ենք, պատկերավորում, մոդելավորում ենք, դիտարկումներ և գրանցումներ ենք անում, հասկանում ենք, վերլուծում ենք, առաջադրանքներ ենք կազմում, տվյալներ ենք հավաքում ու վերլուծում, եզրակացություն ենք անում և գրանցում, ստեղծագործում ենք, ներկայացնում ենք, իրար ստուգում և գնահատում ենք...

## ԲԱԺԻՆ IV

# «ՄԱՅՐԵՆԻ-2» ԴԱՍԱԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Այս բաժնում ներկայացնում ենք «Մայրենի-2» դասագրքի բովանդակային քարտեզը, որն ամբողջությամբ կազմում է մայրենի լեզվի դասընթացի հիմքը և ներառում է մայրենի առարկայական չափորոշչով սահմանված հիմնական հասկացություններն ու դրանցով պայմանավորված վերջնարդյունքները:

Մասնավորապես, քարտեզում ներկայացված են «Ընթերցանություն/բառապաշար», «Լեզվական համակարգ», «Հաղորդակցում», «Մտածական կարողություններ», «Ինքնություն, արժեք» բաժինները, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված են վերջնարդյունքներ և ուսումնական գործունեության ձևեր:

Ուսուցիչն իր դասի պլանավորման վրա աշխատելիս, դասի նպատակն ու խնդիրները սահմանելիս կարող է օգտվել բովանդակային քարտեզից, սակայն նշենք, որ այն ընդամենն օգնող, կողմնորոշիչ քարտեզ է, և ուսուցիչն այն կարող է փոփոխության ենթարկել՝ ըստ անհրաժեշտության:

| Թեմա՝ **Բարև՛, ես եմ** (էջ 4 - էջ 26 ) | | | | |
|---|---|---|---|---|
| **Ընթերցանություն/բառապաշար** | **Լեզվական համակարգ** | **Հաղորդակցում**<br>- գրավոր<br>- բանավոր<br>- ոչ խոսքային | **Մտածական կարողություններ** (քննադատական, վերլուծական հետազոտական, ստեղծագործական) | **Ինքնություն, արժեք** |
| **Ծիածան** | Հնչյունաբանություն (հնչյուն և տառ) | - բարևել, ողջունել,<br>- երկխոսություն վարել<br>- պատմել նկարի բովանդակությունը | - ստեղծել երկխոսություններ տարբեր իրավիճակների վերաբերյալ<br>- ներկայացնել ստեղծագործական աշխատանքներ<br>- կազմակերպել տարբեր միջոցառումներ | - բարևելը որպես բարեկրթության դրսևորում<br>-բարևելու ձևերի կիրառում (ընկերոջը, ծանոթին, անծանոթին, հասակակցին, մեծահասակին) |
| **Մի օրով էլ մեծացա** | Հնչյունաբանություն (հնչյուն և տառ) | - արտահայտել սեփական զգացումները, ցանկությունները<br>- արտասանել անգիր | - արտահայտիչ արտասանել բանաստեղծությունը<br>- նկարաշար ստեղծել<br>-դիտարկել տարբեր պատճառահետևանքային կապեր | Կարևորել ուսումը, գնահատել իրեն ընձեռած հնարավորությունները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ես** | Հնչյունաբանություն (հնչյուն և տառ) | -բնութագրել, համեմատել | կապ տեսնել առակի բովանդակության և իր կյանքի միջև | ինքնադրսևորում, ինքնաճանաչում |
| **Շաբաթվա իմ յոթ օրերը** | Հնչյունաբանություն (հնչյուն և տառ) | գրավոր ներկայացնել շաբաթվա իր նախընտրած օրը | ներկայացնել գործողությունների քայլաշար, մշակել օրվա կանոնակարգ | զգալ ժամանակը, պլանավորել անելիքները |
| **Շնորհակալությունը, Խնդրեմն ու Ներեցեքը** | Հնչյունաբանություն (հնչյուն և տառ) | ներկայացնել դերային խաղ՝ օգտագործելով պատմվածքի բանալի բառերը | -մշակել քաղաքավարության, բարեկրթության կանոններ | դրսևորել բարեկիրթ վարք՝ կիրառելով ողջույնի, հրաժեշտի, խնդրանքի համապատասխան ձևեր |
| **Հարցերի պարը** | Հնչյունաբանություն (հնչյուն և տառ, կետադրության նշաններ) | ոչ խոսքային միջոցներով ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը | պատասխանել հեղինակի առաջադրած հարցերին, ձևակերպել և առաջադրել հարցեր | ինքնուրույն կամ մեծերի օգնությամբ գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները |

| Թեմա՝ **Ես կարող եմ** (էջ 27 - էջ 52) | | | | |
|---|---|---|---|---|
| **Ընթերցանություն/բառապաշար** | **Լեզվական համակարգ** | **Հաղորդակցում**<br>- գրավոր<br>- բանավոր<br>- ոչ խոսքային | **Մտածական կարողություններ** (քննադատական, վերլուծական հետազոտական, ստեղծագործական) | **Ինքնություն, արժեք** |
| **Արագիլն ու սագը** | Բառագիտություն (բառ, բառակապակցություն) | Պատմել տարբեր ժողովուրդների հեքիաթներ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը:<br>Գրել հաղորդագրություն: | մեկնաբանել կերպարների արարքները, արտահայտել սեփական տեսակետը | Գնահատել հնարավորությունները՝ ներկայացնելով սեփական եսի «ուժեղ» և «թույլ» կողմերը;<br>Օգնել ծմեռող թռչուններին: |
| **Կանաչ գորտի հեքիաթը** | Բառագիտություն (բառ, բառակապակցություն) | Նկարել կարդացածի վերաբերյալ իր հույզերը:<br>Կազմել բառակապակցություններ, դրանք օգտագործել խոսք կառուցելիս: | համեմատել դասակարգել, գտնել նմանություններ, տարբերություններ բնակության տարբեր վայրերի վերաբերյալ, նկարագրել իր բնակավայրը: | Կարողանալ արագ և ճիշտ կողմնորոշվել ցանկացած իրավիճակներում:<br>ճանաչել իր ծննդավայրն ու բնակավայրը: |
| **Համառ մրջյունը** | Բառագիտություն (բառ, բառակապակցություն) | Ձևակերպել հետազոտական հարցեր, նկարագրել դրանց պատասխանները գտնելու հիմնական քայլերը: | Հետազոտել միջատների (մրջյուն, ճպուռ և այլն) կենսակերպը, քննարկել ընկերների հետ և պատ- | Ստանձնել պատասխանատվություն՝ իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ, հոգ տանել նրանց |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | րաստել փոքրիկ հաղորդում: | մասին՝ չընկրկելով դժվարությունների առջև: |
| **Փիղն ու մրջյունները** | Բառագիտություն (առարկա ցույց տվող բառեր) | Պատասխանել ընթերցածի, վերաբերյալ հարցերին<br>Ձևակերպի հարցեր իրեն հետաքրքրող հարցերի մասին<br>**Խոսի** մարդու անձնական տարածք ունենալու իրավունքի մասին | Քննարկի հանդուրժողականության ու համագործակցությանն ուղղված հարցեր,<br>գտնի տարբեր ելքեր՝ դժվար իրավիճակից դուրս գալու համար: | **Գնահատել** սեփական հնարավորությունները՝ ներկայացնելով սեփական ես-ի «ուժեղ» և «թույլ» կողմերը: |
| **Մոռացված ծննդյան օրը** | Բառագիտություն (առարկա ցույց տվող բառեր) | Գրավոր արտահայտել հույզերը կարդացած ստեղծագործության վերաբերյալ: | Ներկայացնել ծննդյան օրվան նախապատրաստվելու քայլաշար: | Ուշադիր լինել սեփական նպատակների, կյանքի իրադարձությունների, հանգստի, նկատմամբ: |
| **Տատիկի ժամացույցը** | Բառագիտություն (առարկա ցույց տվող բառեր) | Հասկանալ տեքստի բովանդակության և իր կենսակերպի կապը: | Ներկայացնել իր ընտանիքի մոդելը:<br>Խոսել իր սիրած խաղալիքների ու դրանց պահպանման մասին | Ուշադիր լինել սեփական իրերի նկատմամբ:<br>Կարևորել աշխատանքը, դրա արդյունքները: Լինել խնայող: |

| **Թեմա՝ Երբ նա փոքր էր (էջ 53- էջ 77)** | | | | |
|---|---|---|---|---|
| **Ընթերցանություն/բառապաշար** | **Լեզվական համակարգ** | **Հաղորդակցում**<br>- գրավոր<br>- բանավոր<br>- ոչ խոսքային | **Մտածական կարողություններ** (քննադատական, վերլուծական հետազոտական, ստեղծագործական) | **Ինքնություն, արժեք** |
| **Մեծ երևակայողը** | Բառագիտություն (առարկա, ցույց տվող բառեր) | Նկարագրել մարդկանց, խոսել նրանց գործերի մասին, ձևակերպել հարցեր և վարել երկխոսություն, նշումներ անել: | Ռոդարիական հնարներն օգտագործել տարբեր պատմություններ հորինելու համար:<br>Համապատասխանեցնել «Անճոռնի ճուտիկը» հեքիաթի բովանդակությունը առօրյա որևէ իրողության հետ:<br>Փոփոխել հեքիաթի բովանդակությունը: | Կարևորել հանդուրժողականության դրսևորումները ցանկացած պարագայում, ունենալ բարձր ինքնագնահատական:<br>Ջանք չխնայել բացահայտելու այն ներուժը, որը կօգնի ինքնարտահայտվելուն: |
| **Կախարդված հանդիսատես** | Բառագիտություն (առարկա և գործողություն | Նկարագրել մարդկանց, խոսել նրանց գործերի մասին, բառերով և բառակապակցություններով արտահայտել/գրել իրենց զգացողությունները՝ ունկնդրած երաժշտու- | Հավաքել տեղեկություն հայ կամ օտարազգի որևէ երաժշտի մասին, հիմնավորել ընտրությունը (ինչո՞ւ է նախընտրել | Դրսևորել ողջամիտ և հարգալից վերաբերմունք մշակութային գործիչների նկատմամբ: Ջանք չխնայել բացահայտելու այն նե- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ցույց տվող բառեր) | թյան մասին: | խոսել այդ երաժշտի մասին): | րուժը, որը կօգնի ինքնարտահայտվել: |
| **Ծաղրածուների արքան** | Բառագիտություն (առարկա և գործողություն ցույց տվող բառեր) | Նկարագրել մարդկանց, խոսել նրանց գործերի մասին: Դաս-էքսկուրսիայի միջոցով այցելել կրկես, ներկայացնել տպավորությունները, մտորումներն այդ մասնագիտության վերաբերյալ, ստեղծել սահիկահանդես՝ կիրառելով մեդիա աղբյուրները: | Թիմային աշխատանքի միջոցով քննարկել կրկեսի՝ որպես թատերարվեստի ճյուղի վերաբերյալ տեղեկությունը: Ստեղծել խաղ՝ «Շրջիկ կրկես» թեմայով: | Ձևավորել վարքագիծ՝ արգելքները հաղթահարելու, իր ուժը և հնարամտությունը համադրելու գործում: Զանք չխնայել բացահայտելու այն ներուժը, որը կօգնի ինքնարտահայտվել: |
| **Աշխարհահռչակ շախմատիստը** | Բառագիտություն (հատկանիշ ցույց տվող բառեր) | Նկարագրել մարդկանց, խոսել նրանց գործերի մասին: Ներկայացնել շախմատի ձևերի և շախմատ խաղալու մասին, մշակել հրահանգներ/կանոններ ցուցադրել որևէ խաղ: Գրանցել խաղի արդյունքները աղյուսակի տեսքով: Գնահատել խաղացողի ջանքերը՝ /ինքնագնահատում,/ փոխադարձ/ նշելով այն անձնային որակները, որոնք դրսևորվում են շախմատ խաղալիս: | Անվանել շախմատի խաղաքարերը, բնութագրել շախմատի որևէ խաղաքար պատրաստել հաղորդում շախմատի ձևերի մասին: Առաջադրել վարկած՝ «Կարո՞ղ ենք նամակ գրելով կամ առցանց շախմատ խաղալ» վարկածը: Խմբային աշխատանքի միջոցով քննարկել: | Հետևողական լինել կարգականոնը պահպանելու հարցում: Հետևել ժամանակին, կարևորել համբերատարության, հանդուրժողականության դրսևորումները ցանկացած դեպքերում: Զանք չխնայել բացահայտելու այն ներուժը, որը կօգնի ինքնարտահայտվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Մեծ լոռեցին** | Բառագի-տություն (հատկանի 2 ցույց տվող բառեր) | Նկարագրել հայտնի մարդկանց, խոսել նրանց գործերի մասին: Ներկայացնել անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամա-կարգը՝ զուգահեռներ տանելով իր կենսափորձի հետ: Գնահատել մեծերի փորձը՝ դի-տարկելով այն որպես կենդանի օրինակ: | - ձևակերպի հետազոտա-կան հարցեր<br>- նկարագրի դրանց պա-տասխանները գտնելու քայլերը<br>- օգտվի անհրաժեշտ տե-ղեկույթից<br>- կարողանա տեղեկա-տվությունն ըստ ան-հրաժեշտության օգտագործել: | Կարևորել իրեն փոխանց-ած արժեքները, լինել դրանց կրողը: Արժևորել նշանավոր մարդկանց գործունությ-ունը մեր ժողովրդի կյան-քում: |
| Թեմա՝ **Եկե՛ք՝ տանեմ** (էջ 4 - էջ 29) | | | | |
| **Ընթերցանու-թյուն/բառա-պաշար** | **Լեզվա-կան հա-մակարգ** | ***Հաղորդակցում***<br>- գրավոր<br>- բանավոր<br>- ոչ խոսքային | **Մտածական կարողու-թյուններ** (քննադատական, վերլուծական հետազոտա-կան, ստեղծագործական) | **Ինքնություն, արժեք** |
| **Հայաստան-յան խճանկար** | Բառագի-տություն (հոմանիշ, հականիշ բառեր) | Նկարել տեքստի բովանդակու-թյունը կամ որևէ հատվածը: Ներկայացնել նկարն այնպես, որ չտեսնողը հասկանա ինչի մասին է այն: | Հավաքագրել տվյալներ Հայաստանի մասին և դ-րանք քարտեզագրել: | Կարևորել իր երկրիը ճանաչելու անհրաժեշտու-թյունը՝ այն սիրելու և պաշտպանելու տեսան-կյուններից: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Իմ հայրենիքը** | Բառագի-տություն (հոմանիշ, հականիշ բառեր) | Լսել, հասկանալ, արձագանքել լսածին, աղով, տրամադրութ-յունը՝ գույներով:<br>Անգիր արտասանել: | Ուսումնասիրել ծննդավայ-րը հավաքագրել տվյալներ և դրանք քարտեզագրել: | Գիտակցել իր դերն ու պա-տասխանատվությունը հայ-րենիքի պաշտպանության գործում: |
| **Անուշ անուններ** | Բառագի-տություն (հոմանիշ, հականիշ բառեր) | Լսել, հասկանալ, արձագան-քել լսածին, զգացողություն-ներն արտահայտել մնջախա-ղով, տրամադրությունը՝ գույ-ներով:<br>Անգիր արտասանել:<br>Ինքնաթելադրությամբ գրել ոտանավորը: | Իմանալ ընտանիքի ան-դամների անունները, ու-սումնասիրել դասընկերնե-րի անունների ծագման պատմությունը, պատրաս-տել անձնանունների փոք-րիկ բառարան: | Գիտակցել մարդու՝ իր ա-նունը պատվով կրելու կա-րևորությունն ու պատաս-խանատվությունը: |
| **Քո տունը** | Բառագի-տություն (հոմանիշ, հա-կանիշ բառեր) | Մտքերն արտահայտել անկաշ-կանդ, խոսել ըստ էության, հայտնել կարծիք և տարբեր փաստարկներով հիմնավորել այն: | Կարդալու, լսելու, քննար-կելու միջոցով բացա-հայտել իր ծննդավայրը/-բնակավայրը, ավելի լավ ճանաչել իր հայրենիքը: | Գիտակցել հայրենիքում մե-ծանալու, հայրենիքի բար-գավաճման համար իր սե-փական ներդրումն ունենա-լու, միգրացիայի /մարդկանց տեղաշարժի/ հնարավոր անհարմարությունները վեր հանելու կամ միգրացիայի պայմաններում՝ նոր միջա- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | վայրին հարմարվելու անհրաժեշտության մասին: |
| **Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը** | Բառագիտություն ( հոմանիշ, հականիշ բառեր) | Կազմել պլան, վերաշարադրել՝ ըստ պլանի: Գրավոր փոխադրել տեքստը: | Գտնել պատճառահետևանքային կապեր, պատրաստել սահիկահանդես՝ «Հայոց այբուբենը» թեմայով: | Գնահատել հայոց լեզուն՝ որպես ազգապահպան միջոց: Արժևորել մայրենիի դերը, հարգալից վերաբերմունք ունենալ մայրենի լեզվի հանդեպ: |
| **Նյուտոնի թիկնոցը** | Բառագիտություն (հոմանիշ, հականիշ բառեր) | Վարել երկխոսություններ և զրույցներ տեքստի շուրջ: | Վերլուծել տեքստի կերպարների վարքագիծը, կատարել պարզ դատողություններ: Խոսել իր նախասիրությունների, դրանք՝ հետագայում գործի վերածելու պլանների մասին: | Քննարկել հայ նշանավոր մարդկանց դերը հայ ժողովրդի պատմության կերտման գործում՝ ունենալով այն որպես օրինակ սեփական նախաձեռնություններում: |

| Թեմա՝ **Մի տանիքի տակ** (էջ 30 – էջ 58) | | | | |
|---|---|---|---|---|
| **Ընթերցանություն/ բառապաշար** | **Լեզվական համակարգ** | **Հաղորդակցում**<br>- գրավոր<br>- բանավոր<br>- ոչ խոսքային | **Մտածական կարողություններ** (քննադատական, վերլուծական հետազոտական, ստեղծագործական) | **Ինքնություն, արժեք** |
| **Ես իմ բաժին երկինքն եմ պահում** | Բառագիտություն (արմատ, ածանց) | Առանձնացնել գլխավոր միտքը և մեկնաբանել:<br>Վերաշարադրել տեքստը որևէ հերոսի անունից:<br>Գրավոր պատասխանել հետազոտական հարցին: | Ձևակերպել հետազոտական հարց՝ «Ես ի՞նչ եմ անում իմ բաժին «երկինքը» պահելու համար»:<br>Օգտվելով օրինակից՝ հորինել նմանօրինակ պատմություն: | Գիտակցի իր դերակատարության ու պատասխանատվության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, իր պարտականությունը համարի աշխարհին ավելի լավը դարձնելը: |
| **Ամենից լավ տունը** | Բառագիտություն (արմատ, ածանց) | Արծակ շարադրել, ամփոփ ներկայացնել բովանդակությունը:<br>Դերային խաղով ներկայացնել՝ ստանձնելով տարբեր դերեր: | Ուսումնասիրել, ներկայացնել բնակավայրը, հավաքագրել և ամբողջացնել տվյալներ դրա վերաբերյալ:<br>Իմանալ հասցեն:<br>Ներկայացնել մարդկանց տեղաշարժերը, | Գիտակցել իր դերն ու պատասխանատվությունը բնակավայրի զարգացման գործում:<br>Արժևորել հայրենիքում ապրելու ու արարելու գաղափարը:<br>Գնահատել մարդկանց |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | իրամարումը նոր միջավայրին, բացատրել այդ երևույթի շարժառիթը և բերել օրինակներ: Կանխատեսել, թե ինչը կարող է իր բնակավայրը/քաղաքը դարձնել ավելի բարեկարգ, մաքուր և քաղաքակիրթ: | տեղաշարժերի հնարավոր ռիսկերը: |
| **Ինչքա՞ն է կշռում մի փաթիլ ձյունը** | Բառագիտություն (արմատ, ածանց) | Վերլուծել ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը նկարագրվող իրադարձությունների նկատմամբ: | քննարկել մեր հայրենիքը, կամ առհասարակ աշխարհն ավելի խաղաղ ու ապահով դարձնելու՝ մարդկանց պատասխանատվությանը վերաբերող հարցեր: | Գիտակցել իր դերն ու պատասխանատվությունը աշխարհն ավելի խաղաղ ու ապահով դարձնելու համար: |
| **Ո՞րն է լավ** | Բառագիտություն (արմատ, ածանց) | Առանձնացնել գլխավոր միտքը և մեկնաբանել: | Սինթեզել իրական կյանքից դեպքեր, երբ մարդիկ օգնում են իրար՝ իրենց հնարավորությունների շրջանա- | Գնահատել իր ուժեղ և թույլ կողմերը, ունենալ բարձր ինքնագնահատական: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կում: | |
| **Մեկ և յոթ** | Բառագի-տություն (արմատ, ածանց) | Շարունակել տեքստը՝ ավելացնելով մի քանի հերոս, բացատրել ընտրության մոտիվացիան: | Վերլուծել միջանձնային փոխհարաբերությունները, քննարկել աշխարհին ավելի խաղաղ ու ապահով դարձնելու՝ մարդկանց պատասխանատվությանը վերաբերող հարցեր: | Կարևորել սեփական կարծիքն ու որոշումը՝ որևէ խնդրում դրական տեղաշարժ արձանագրելու համար: |
| **Տարբեր, բայց նույնը** | Բառագի-տություն (արմատ, ածանց) | Ոչ խոսքային միջոցներով գնահատել հերոսների զգայական վիճակը:<br>Առանձնացնել դուր եկած կամ դուր չեկած հատվածները և հիմնավորել ընտրությունը: | Քննադատել իրենցից տարբեր մարդկանց նկատմամբ անհարգալից, անհանդուրժող վարքագծերի դրսևորումները:<br>Սինթեզել իրական կյանքից դեպքեր, երբ մարդկանց միջև ծագած վեճերը կամ խնդիրները լուծվել են խաղաղ ճանապարհով: | Գնահատել մարդկանց՝ մեջ միմյանց նկատմամբ հանդուրժող ու հարգալից լինելու հանգամանքը, ջանք չխնայել շրջապատում նմանօրինակ վարք դրսևորելու համար: |

| Թեմա՝ **Թե ինչո՞ւ...** (էջ 59 – էջ 93) | | | | |
|---|---|---|---|---|
| **Ընթերցանություն/բառապաշար** | **Լեզվական համակարգ** | **Հաղորդակցում**<br>- գրավոր<br>- բանավոր<br>- ոչ խոսքային | **Մտածական կարողություններ** (քննադատական, վերլուծական հետազոտական, ստեղծագործական) | **Ինքնություն, արժեք** |
| **Եթե ուզում ես** | Շարահյուսություն (նախադասություն) | Արծակ շարադրել, բովանդակությունը: | Հետազոտել, թե ինչպես ենք սերմից ստանում ծաղիկ:<br>Ավարտել նախադասությունը՝ Եթե ես ունենամ ...., ապա կունենամ՝ ...: | Սիրի աշխատանքն ու, բնությունը, կարևորի դրանց ազդեցությունն իր կյանքի վրա: |
| **Սիրի՛ր կանաչը** | Նախադասության ուղղագրությունը: | Նկարագրել առարկաներ, երևույթներ՝ արտահայտելով տպավորություններ ու զգացողություններ:<br>Նամակ կամ հաղորդագրություն գրել՝ ուղղված ծառին: | Մեկնաբանիր՝ «Ծառը դարծավ պահարան» արտահայտությունը:<br>Առաջադրել վարկած «Եթե ծառերը կտրենք, ապա մարդու կյանքին վտանգ կսպառնա»<br>Բերել փաստարկներ, կատարել եզրահանգումներ: | Գնահատել բնության դերը որպես մարդկանց կյանքը բարեկեցիկ դարձնելու միջոց: |
| **Արտասովոր** | Ընդար- | Առանձնացնել այն հատ- | Ստեղծել տեքստ օրինակի | Ուշադիր լինել սեփական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **եղջերուն** | ձակ նա-խադա-սություն | վածները կամ մտքերը, որոնք իրատեսական են կամ երևա-կայական:<br>Ներկայացնել աղյուսակով:<br>Ավելացնել շարքերը սեփական 1-2 օրինակով: | համաձայն՝ օգտագործելով երևակայությունը: | նպատակների, հանգստի նկատմամբ: |
| **Ձկնիկն առ-վին խուտուտ տվեց…** | Ընդար-ձակ նա-խադա-սություն | Արտահայտիչ արտասանել ոտանավորը:<br>Արձակ շարադրել ոտա-նավորը: | Մեկնաբանել՝ «Առուն ճամ-փա ընկավ դեպի ծով» արտահայտությունը:<br>Պատկերել «Առուն ցած ընկավ քարափից:» նախա-դասությունը և ներկայացնել մեկ բառով:<br>Հայաստանում ի՞նչ ջրվեժ-ներ գիտես:<br>Պատմել դրանցից որևէ մե-կի մասին: | Ճանաչել բնության ե-րևույթները:<br>Պահպանել բնությունը՝ ծա-նոթ լինելով բնության օ-րենքներին: |
| **Անձրևը** | Համա-ռոտ նա-խադա-սություն | Խոսքային և ոչ խոսքային մի-ջոցներով ներկայացնել պատմ-վածքի բովանդակությունը: | Բացատրել՝ «Ինչպես է ա-ռաջանում անձրևը»:<br>Առաջադրել վարկած՝<br>Ինչ կլիներ, եթե պատմ- | Ճանաչել բնության ե-րևույթները:<br>Ներողամիտ լինել, գործել ի բարօրություն մարդ- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | վածքի հերոսները մինչև վերջ նեղացած մնային մարդկանցից:<br>Ի՞նչ են հագնում մարդիկ անձրևի ժամանակ:<br>Ինչով են մարդիկ պաշտպանվում անձրևից: | կանց: |
| **Առավոտ** | Նախադասության գլխավոր անդամներ | Նկարագրել օրվա պահերը՝ ըստ բանաստեղծության: | Ժամացույցի վրա ցույց տալ՝ որ պահը ժամը քանիսի հետ է համընկնում:<br>Ո՞ր տողերն են մարդու աշխատանքի ու գործերի մասին: | Կարևորել օրվա պահերը՝ որևէ օգտակար գործ կատարելու տեսանկյունից: |
| **Ո՞ւմ համար է խնձորը** | Նախադասության գլխավոր անդամներ | Շարունակել տեքստը՝ ավելացնելով մի քանի հերոս: | Մոդելավորել պատմվածքը՝ կազմելով գործողությունների քայլաշարը: | Ճանաչել բնության երևույթները:<br>Կարողանալ բնության բարիքներից օգտվել՝ ըստ անհրաժեշտության; |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Չորս ցանկություն** | Ամփո-փում | Վերարտադրել պատմվածքը՝ բնութագրելով հերոսին:<br>Գրել որևէ ցանկություն, բա-ցատրել մոտիվացիան: | Մեկնաբանել մարդու գի-տակցությունից անկախ՝ բ-նության մեջ տեղի ունեցող գործընթացները, բացա-հայտել օրինաչափությունը:<br>Լսել Վիվալդի՝ «Չորս եղա-նակներ ստեղծագործու-թյունը՝ հընթացս նկարելով տարվա՝ իրենց նախընտ-րած եղանակը:<br>Կազմակերպել ցուցադրու-թյուն՝ ներկայացնելով իրենց աշխատանքները: | Ճանաչել բնության ե-րևույթները:<br>Գնահատել բնության ան-կրկնելիությունն ու հրա-շագործությունը:<br>Գիտակցել բնության կա-րևորությունը մարդու կյան-քում:<br>Արժևորել մարդու և բնու-թյան փոխազդեցությունը, կյանքի տարբեր շրջափու-լերում աշխարհին ընկալե-լու կարողությունները: |

## ԲԱԺԻՆ V

# ԱՇԽԱՏԵՆՔ ԱՅՍՊԵՍ

Ստորև ներկայացված են մեթոդական ընթացակարգեր, որոնք կօգնեն աշակերտներին առավելագույնս կիրառելու իրենց լեզվական գիտելիքները: Այս ճանապարհով մեծանում են հնարավորությունները խոսելու, զրուցելու, բանավիճելու, քննարկելու, փաստարկելու, հիմնավորելու և այլ լեզվահաղորդակցական միջոցներով ամրապնդելու խոսքային կոմպետենցիաները:

## Վ ե ն ի   դ ի ա գ ր ա մ

- Վենի դիագրամն օգտագործեք «բույսեր», «կենդանիներ» գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:




- Վարժությունը կարող եք կատարել անհատապես, զույգով կամ խմբով:
- Դիագրամը լրացնելուց հետո քննարկում կազմակերպեք:

*Հուշում*




## Պ ր ի զ մ ա

- Տրված է մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, ինչը ենթակա է ուսումնասիրության: Ձեր ցանկությամբ կարող եք փոխել մեկնաբառը:
- Սխեմայի հաջորդ երկու վանդակներում առանց քննարկման գրանցեք մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը:
- Հնարավորինս կանխեք գիտակցական մակարդակում ծնված բառերն ու հասկացությունները գրանցելը:
- Խրախուսեք ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը:
- Ասոցիատիվ մտածողության վրա հիմնվող այս ընթացքը շարունակեք մինչև վերջ: Առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման (տես՝ օրինակում):
- Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:
- Ամփոփման համար փորձեք մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնել:




**Ք ա ռ ա բ ա ժ ա ն**

- Առաջադրանքը կատարեք անհատական, զույգով կամ խմբերով:
- Մաքուր թուղթն (գրատախտակը...) անհրաժեշտ է բաժանել չորս մասի:
- Ձեր մտքերը համապատասխանաբար գրի առեք չորս բաժիններից յուրաքանչյուրում՝ ըստ ստորև ներկայացված քառաբաժան աղյուսակի:

| 1. **Ի՞նչ էիք տեսնում հեքիաթը կարդալիս:** | 2. **Ի՞նչ էիք զգում հեքիաթը կարդալիս:** |
|---|---|
| զգայություններ.<br>• տեսողական, լսողական<br>• համի և հոտի | վերաբերմունք<br>• հույզեր<br>• զգացմունքներ |
| **3. Կապը ձեր և իրական կյանքի հետ:** | **4. Նոր վերնագիր:** |
| • ասոցիացիաներ<br>• առնչություններ<br>• օրինակներ | • ընդհանրացում<br>• վերաիմաստավորում<br>• գնահատում |

## Խ մ բ ա վ ո ր ու մ

(բ ա ռ ա յ ի ն  խ ա ղ - ա ռ ա ջ ա դ ր ա ն ք)

- Գրե՛ք «Քաղաք» բանալի-բառը թղթի կամ գրատախտակի կենտրոնում:
- Ժամանակ պահեք:
- Սկսեք գրել բանալի բառին առնչվող բառեր ու արտահայտություններ:
- Գծերով միացրեք այն բառերը, որոնք ձեր կարծիքով իրար հետ ինչ-որ կերպ առնչվում են:
- *Խմբավորումն օգտագործելիս անհրաժեշտ է պահպանել մի քանի հիմնական կանոններ.*
  - գրի առեք մտքին եկած բոլոր գաղափարները, չդատելով դրանց ճիշտ կամ սխալ լինելու մասին, պարզապես գրեք,
  - այդ պահին մի անհանգստացեք նույնիսկ ուղղագրության կամ ուղղախոսության կանոնների մասին,

- անդադար գրեք, քանի դեռ մտքեր և գաղափարներ են ծագում,
- եթե գաղափարների հոսքը մի պահ դադարում է, իսկ դեռ ժամանակ կա, ապա՝ շարունակեք խզմզել թղթի վրա, մինչև նոր մտքեր ծագեն,

*Խմբավորման վարժությունը կարող եք կապարել անհատապես, զույգերով կամ խմբերով:*




## Т-աձև աղյուսակ

- Т-աձև այս աղյուսակն օգտագործեք Մուշեղ սպարապետի արածը գնահատելու, նրա արարքի հակասական կողմերը համեմատելու համար: Աղյուսակի երկու բաժիններում, գրանցեք, թե ձեր կարծիքով ինչ դրական կամ բացասական կողմեր ուներ սպարապետի որոշումը: Ձեր կարծիքը բանավոր ձևով վերլուծեք և հիմնավորեք:

| Դրական կողմեր | Բացասական կողմեր |
| --- | --- |
| | |
| | |

## M/m-աձև աղյուսակ

- M-աձև աղյուսակի օգնությամբ քննարկեք «Տարբեր սերունդների միջև մշտապես վեճ և անհամաձայնություն կա՝ ինչը լավ է...» արտահայտությունը:
- Աշխատանքը կատարեք անհատապես, զույգով կամ խմբով:
- Երեք բաժնից կազմված այս աղյուսակում գրանցեք դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները,
- բերեք անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ:
- Կարող եք տալ երեք տարբեր պատասխաններ՝ այո, ոչ, չգիտեմ կամ կողմ եմ, դեմ եմ, ձեռնպահ եմ:

| Դրական կողմեր | Չեզոք կողմեր | Բացասական կողմեր |
| --- | --- | --- |
| | | |
| | | |
| | | |

## Հասկացությունների քարտեզ

- Նախ շրջանի մեջ գրեք թեման կամ հիմնանական հասկացությունը՝
- օրինակ «ԵՍ»:
- Այնուհետև գրեք հիմնանական հասկացության հետ անմիջական առնչություն ունեցող ուղեկից բառեր՝ ասենք «բնավորության գծեր», «սիրելի զբաղմունք». «հետաքրքրություններ» և այլն:
- Ապա նույն կերպ գրեք նշված բառերի հետ կապված ենթահասկացությունները՝
  օրինակ՝ «ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» – «նախասիրություններ», «հոբիներ»:




- Քարտեզի «ճյուղերը» կարող եք ավելացնել, տարածել՝ ցանկացած ուղեկից բառից դուրս բխեցնելով նոր հասկացություններ:
- Որոշեք ճյուղավորումների քանակը և բազմազանությունն ըստ ձեր քննարկումների:
- Քննարկումներ կազմակերպեք առանձին ճյուղերի վերաբերյալ անհատապես, զույգով կամ խմբով:

# ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## (մեթոդական)

## Բ Ա Ն Ա Վ Ե Ճ



- Բանավեճի թեմայի կամ խնդրի ներկայացում (տեսալսողական միջոցներ, մուլտֆիլմ, ֆիլմ, տեսագրություն, ձայնագրություն, նկար և այլն ),
- «փորձագետի» կողմից տեղեկատվության ներկայացում (իբրև փորձագետ կարող է հանդես գալ խմբի ցանկացած անդամ, ուսուցիչ կամ աշակերտ),
- լրացուցիչ տեղեկությունների հաղորդում ցանկացողների կողմից,
- խթանող հարցերի տրամադրում, ինչպիսիք են՝ «ի՞նչ», «ինչ-պե՞ս», «ինչո՞ւ» ...
- խնդրի վերաբերյալ առնվազն երկու տարբեր կամ հակադիր տեսակետների ձևակերպում:

## Ընթացքը

- Բանախոսները ձգտում են ունկնդիրներին համոզել իրենց դիրքորոշման ճշմարտացիությունը:
- Պնդումը ժխտող կողմը՝ ընդդիմախոս կողմը փորձում է ապացուցել, որ ներկայացված դիրքորոշումը կամ փաստարկները հիմնավոր չեն:
- Փաստարկների միջոցով կարելի է ունկնդիրներին համոզել, որ տվյալ դիքորոշումն ամենաճիշտն է:
- Փաստարկները կարող են լինել թույլ և ուժեղ:
- Ունկնդիրներին թույլատրվում է փաստարկներին թերահավատորեն մոտենալ:
- Նրանք փորձում են փաստարկների մեջ տեսնել հորինված ու շինծու տարրեր բացթողումներ:
- Ապացույցներ, փաստարկների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել սեփական դիրքորոշումները հաստատող նյութեր (մեջբերումներ, փաստեր, վիճակագրական տվյալներ):
- Բանավեճերի ընթացքում յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է տրվում պատասխանելու բանախոս- ընդդիմախոսի հարցերին:
- Հարցերը կարող են նպատակ ունենալ ինչպես դիրքորոշումների վերաբերյալ բացատրություն տալուն, այնպես էլ հակառակորդի՝ ընդդիմախոսի հնարավոր սխալները բացահայտելուն:

Ունկնդիրների գնահատականը

- Գնահատողները լսում են թեմայի վերաբերյալ երկու կողմերի փաստարկները, լրացնում են արձանագրություններ, որոնց մեջ ամրագրում են, թե որ կողմին է տրվել առավելությունը բանավեճի անցկացման արդյունքում:
- Այս փուլի արդյունքները պետք է ամփոփել՝ մանրամասն վերլուծելով ելույթները: Մասնակիցների մոտ պետք է ձևավորել այն վերաբերմունքը, որ վերջիններիս ներկայացրած միտքը հիմնավոր, փաստարկված և համոզիչ էր:
- Բանավեճը կարող է անցկացվել ինչպես երկու անհատների այնպես էլ երկու խմբերի միջև:

# ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ

- Նա, ով չի մասնակցում խաղին, դիտորդի դեր է կատա-րում. նշումներ է անում դերային խաղի մասնակիցների վարքի, դրսևորումների վերաբերյալ:
- Դերային խաղը հաճախ կառուցվում է որոշակի կոնֆլիկտային իրավիճակների շուրջ, որոնք կարող են առաջանալ անգամ թյուրիմացությունների հետևանքով (խմբի անդամներից յուրաքանչյուրը կարող է քննարկման ներկայացնել որևէ կոնֆլիկտային իրավիճակ):
- Խրախուսվում է ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ ունեն:
- Դերային խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ պարունակող թեմաներ, հետևաբար դրան մասնակցողները պետք է ներկայացնեն տարբեր տեսակետներ (ըստ այդմ որոշեն դերեր):



Խ ո ր հ ո ւ ր դ ն ե ր   ա ն ց կ ա ց մ ա ն   վ ե ր ա բ ե ր յ ա լ

- Մշակել մանրակրկիտ պլան
- Դերային խաղն անցկացնել ըստ որոշակի հետաքրքրություն ներկայացնող նյութի, խմբի անդամների համատեղ որոշմամբ (տրանսպորտ, առևտուր, բժշկի մոտ և այլն):
- Արդյունավետ է դերային խաղի այն տարբերակը, երբ մասնակիցը կատարում է այն դերը, որ հակառակ կամ հակադիր է իր տեսակետին, կամ որը արմատապես հակասում է իր սովորական գործողություններին և սկզբունքներին (սա օգնում է իրերն ու երևույթները դիտարկել հակադիր տեսանկյունից...)
- Ամենատարածվածը դերերի պատահական բաշխումն է:
- Այնուհետև բաժանել գլխավոր դերերն ըստ ցանկության,
- Դերերը տրամադրել ըստ դերերին մասնակցի համապատասխանության,
- Ընտրությունը թողնել մասնակիցներին,

# Դ Ե Բ Ր Ի Ֆ Ի Ն Գ

- Դերային խաղից հետո կարևոր է անցկացնել դեբրիֆինգ. այսինքն՝
- հանել մասնակիցներին դերերից,
- հստակություն մտցնել կատարվածի մեջ / փաստերի մակարդակով/,
- վերացնել թյուրիմացությունները և քննարկել եզրահանգումները,
- հանել լարվածությունը,
- բացահայտել դիրքորոշումները, զգացմունքները, փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել դերային խաղի ժամանակ,
- մասնակիցներին ինքնադիտարկման հնարավորություն տալ,
- վարքի վերաբերյալ հետևություններ անել,
- առաջ քաշել նոր թեմաներ և գաղափարներ քննարկումների համար,
- վարքը փոխելու ուղիներ մշակել,
- անդրադառնալ այլ իրավիճակների,
- մշակել ընդհանուր տեսակետ
- Վերլուծել այս կամ այն վարքագծի պատճառները,
- Եզրակացություններ անել,
- Նշել՝ ինչ կարելի է անել իրավիճակը լավացնելու համար:

## Հ Ո Ւ Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

1-ին փուլ

- Ցանկալի է կիրառել  բաց հարցեր՝ ինչպե՞ս, ինչո՞ւ, ի՞նչ:
- Չգնահատել «լավ է», «վատ է» սկզբունքով:
- Պետք չէ ժխտել ճիշտ չհասկացված հրահանգը:
- Խոսել եղածի մասին, այլ ոչ թե ինչ կարելի էր անել:

2- րդ փուլ

- Պարզել պատճառները՝ ինչո՞ւ, ինչպե՞ս, ո՞վ, ի՞նչ կլիներ եթե, ինչո՞ւ ոչ:
- Փնտրել այլընտրանքային տարբերակներ:
- Կա՞ր արդյոք այլ հնարավորություն այլ կերպ վարվելու, թե ոչ:

# ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դեպքի ուսումնասիրությանե մեթոդն ունի երեք հիմնական տարբերակ.

1. Երբ սովորողների քննարկմանն է ներկայացվում իրական դեպք (պատմական իրադարձություն, դատական գործընթաց, հասարակական հնչեղություն ստացած վեճ), որն իր ժամանակին քննարկվել և համապատասխան լուծում է ստացել:

2. Երբ դեպքն իր ողջ կարևորությամբ սովորողների քննարկմանն է ներկայացվում առանց այդ մասին հայտնի եզրահանգումների, և հնարավորություն է տրվում սեփական վերլուծությունները համեմատել հայտնի իրադարձությունների հետ:

3. Երբ ուսումնասիրվող նյութը մտացածին է, երևակայական, հնարավոր են դեպքի վերլուծության ամենատարբեր արդյունքներ, բազմակի լուծումներ:

Իրենց հերթին վերոնշյալ երեք տարբերակները կարող են հանդես գալ զանազան տարատեսակներով՝ կախված դեպքի առանձնահատկություններից:

Այսպիսով մեթոդն իր ամբողջական նկարագրով մի տևական գործընթաց է՝ սովորողների անընդհատ փոփոխվող գործուն, դերային մասնակցությամբ: Մեթոդի նպատակը կոնկրետ **դեպքի, իրադարձության, պատահարի** բազմակողմանի կամ հան-գամանալից ուսումնասիրությունն է, որի արդյունքում գնահատ-վում-արժևորվում է դեպքը, արվում են եզրահանգումներ:

## Դ ե պ ք ի  ն կ ա ր ա գ ր ու թ յ ու ն ը

- Վեր հանել խնդրո առարկա(ները) դիպվածը
  - առաջնային և երկրորդական փաստերի տարանջատում
- Ներկայացնել խնդրի էությունը, ցուցադրել իրավիճակը (խաղալ, բեմադրել)
- պատկերավորում,
- անհրաժեշտ միջոցների ընտրություն
- հաղորդակցական, հռետորական կարողությունների կիրառում
- Բացահայտել ներկայացնողի տեսակետը
  - անհրաժեշտ կամ ճշգրիտ հարցադրումների ձևակերպում
  - պակասող կամ թերի ինֆորմացիայի ճշգրտում
- Ընդունել տարբեր տեսակետների առկայությունը
  - հանդուրժողականություն, փոխըմբռնում
  - սեփական տեսակետի հիմնավորում
- Հետազոտել առկա գրավոր և այլ նյութերը տվյալ դեպքի մասին
  - անհրաժեշտ ինֆորմացիայի ձեռքբերում

- տեքստի, գրավոր տվյալների, նյութերի հետ աշխատելու կարողություններ

- Մեկ, երկու էջ ծավալով ներկայացված ընդհանուր նկարագրություն
  - անհրաժեշտ փաստերի գրավոր շարադրանք
  - գրավոր խոսքի վերլուծություն, մշակում
- Հնարավոր լուծման առկայություն կամ լուծման տարբերակի բացակայություն
  - վերլուծական կարողություններ
- Դիպվածի ներկայացում մեկ կամ մի քանի տեսանկյուններով, պարզեցված կամ բարդեցված տարբերակներով
  - երևակայական, ստեղծագործական կարողություններ
- Նյութը մատուցել որպես համաձայնեցված որոշման ուսումնասիրություն կամ քննարկման ներկայացվող դեպքի անմշակ նկարագրություն
  - խմբային (թիմային) աշխատանքի կարողություններ
  - միասնական պատասխանատվություն
  - որոշումների համատեղ կայացում:

## Ը ն թ ա ց ք ը

- Առաջին կարևորագույն քայլը ուսումնասիրվելիք դեպքի հնարավորին ամբողջական նկարագրությունն է, ինչի համար անհրաժեշտ է նկատի ունենալ հանգամանքներ, որոնք անհրաժեշտ են դեպքի նկարագրությունը շարադրելիս.
  Տեսակետներ, որոնցով կարելի է առաջնորդվել այս փուլում

  - հեղինակի կամ ներկայացնողի դիրքորոշում
  - կողմնակի անձի կամ մի երրորդ կողմի տեսակետ:

- Հիմնական, բացահայտված փաստեր, որտեղ՝
  - առկա են որոշակի կոնֆլիկտներ
  - հայտնի են մարդիկ, որոնք ունեն տարբեր տեսակետներ, կարծիքներ
  - կան մշակութային, քաղաքական, սոցիալական բնույթ կրող իրողություններ
  - տեսանելի են հակասությունը՝ կոնֆլիկտը լուծող իրավիճակներ:
- «Լավ» և «վատ» կողմերի այնպիսի հավասարակշռում, որպեսզի շատ պարզունակ և միակողմանի չլինի ճիշտ կողմնորոշումը:
- Դեպքի ուսումնասիրման ընթացքում բարձրացված խնդիրների լուծման հնարավոր գաղափարների առաջադրում:
- Լավագույն լուծումների սահմանում այն բանից հետո, երբ բերված բոլոր լուծումները քննարկված կլինեն լսարանի կողմից:

## Դեպքի վերլուծություն

- Անցյալի և ներկայի միջև հակասությունների պարզաբանում:
- Զուգորդումներ հայտնի նմանատիպ իրավիճակների կամ նախադեպերի հետ:
- Դեպքի ուսումնասիրմանը տալ քննարկման բնույթ կամ հարցադրումները տանել համոզելու, ներկայացված տարբերակն ընդունելու ուղղությամբ:
- Ոչ միանշանակ պատասխաններ պահանջող հարցերի կարևորում կամ պատրաստի որոշումների քննարկում և ընդունում՝ ըստ որոշակի համոզմունքների:

## Հուշում դեպքի ներկայացման վերաբերյալ

- Դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է շարադրվել փաստագրական տեսքով (հաղորդագրություն), կամ ներկայացվել խոսքային և տեսողական միջոցներով (տեսագրություն կամ լուսապատկերների ցուցադրություն):
- Իրավիճակին վերաբերող նյութի ընտրությունը կամ ինքը՝ իրավիճակը, պետք է արտացոլի այն պրոբլեմները, որոնց հետ կարող են առնչվել սովորողները իրականության մեջ: Խումբն իր տրամադրության տակ պետք է ունենա անհրաժեշտ տվյալներ, բայց միևնույն ժամանակ չծանրաբեռնվի տեղեկատվությամբ: Լրացուցիչ տվյալները կարելի է հաղորդել ավելի ուշ կամ խմբի պահանջով:
- Այլընտրանքի (ալտերնատիվի) առկայություն.

Ընտրված հարցը պետք է բավականին ընդգրկուն լինի, որպեսզի տարբեր լուծումներ առաջադրելու հնարավորություն ընձեռի: Պրոբլեմները, որոնք ունեն մեկ ճիշտ պատասխան, այս մեթոդի կիրառման ժամանակ ցանկալի չեն:

- Փոքրաթիվ խումբ. որքան մեծ է խումբը, այնքան ծանր և ոչ ճկուն է դառնում այս մեթոդի կիրառումը: Դիպվածի ուսումնասիրման մեթոդով օպտիմալ արդյունք ստանալու համար ցանկալի է սահմանափակել մասնակիցների քանակը: Սակայն եթե խումբը մեծ է, կարելի է այն բաժանել փոքր ենթախմբերի (4-5 հոգուց բաղկացած), որոնցից յուրաքանչյուրը կզբաղվի ներկայացված պրոբլեմի մասնավոր հարցով:

## ԲԱԺԻՆ VI

# ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձեռնարկում  ուսուցման արդյունքների ստուգմանն ու գնահատմանն անդրադառնալը նպատակ ունի հիմնախնդիրը դիտարկել տարրական ծրագրի առանձնահատկությունների տեսանկյունից: Առաջին հերթին կարևոր է **գնահատումը** դիտարկել որպես ուսուցման գործընթացի անքակտելի մաս, ապա քննարկել նրա գործիքակազմը: Եվ, երբ ասվում է, որ տարրական դպրոցում «չենք գնահատում»՝ նկատի ունենք թվանշանը, բալը կամ դրանց զուգադրվող այլ միջոցներ (աստղիկներ, ծաղիկներ…) բացառելը:

Դպրոցի կարևորագույն խնդիրներից է հասնել այն բանին, որ աշակերտն իր կրթությունը չընկալի միայն որպես իր նկատմամբ կիրառվող արտաքին ազդեցություն, այլ այն լինի ինքնազարգացման նրա ներքին ձգտումը, պատասխանատվությունը, այսինքն՝ սովորողի մեջ ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնակատարելագործման պահանջը:

Սրան նպաստելու ճանապարհներից մեկը սովորողներին սեփական ուսումնառության և գնահատման գործընթացի մեջ ընդգրկելն է, այսինքն՝ ինքնագնահատման հմտություններ զարգացնելը՝ սեփական առավելություններն ու թերությունները հասկանալը, տեսնելն ու ընկալելը, ուսուցման գործընթացում դրանց ուղղությամբ աշխատելու ուղենիշներ ձեռք բերելը:

Ուրեմն, գնահատումը ևս ուսումնական գործընթաց է՝ ապահովելու սովորողի ձեռքբերումների և թերացումների գիտակցումն ու դրանցով պայմանավորված հետագա քայլերի հստակ պատկերացումը:

Գնահատումը, երբ այն իրականացվում է, որպես քննարկում, մեկնաբանություն, վերլուծություն, ինքնաստուգում, փոխստուգում և այլն, կարող է.

- Համոզել սովորողին՝ արդյո՞ք ճիշտ է հասկացել ուսումնական խնդիրը, նպատակը, ուսումնական պահանջները (դա կարելի է անել ուսուցչին հարցեր տալով, ճշտելով առաջադրանքի պայմանները, տվյալները ճշտելով):
- Առաջադրանքի կատարման ընթացքում ստուգել միջանկյալ արդյունքները, վերահսկել յուրացման ընթացքը:
- Ամփոփել, վերանայել և ստուգել ստացած արդյունքները:
- Առաջ բերել հարցեր, պնդումներ, կարծիքներ. «ինչո՞ւ սխալվեցինք», «ուրիշ ի՞նչ տարբերակ կարելի էր ընտրել», «ապացուցենք, որ պնդումը ճիշտ է կամ՝ ոչ»: «Մեկնաբանել պատասխանը», «Ի՞նչ ես կարծում...», «Համաձա՞յն ես.....», «Առաջարկի՛ր խնդրի լուծման քո տարբերակները» և այլն:

Գնահատման հմտության ձևավորման կարևոր պայման է սովորողների ներգրավումը փոխադարձ ստուգման և գնահատման տարբեր ձևերի մեջ: Այս նպատակով դասագրքում բազմաթիվ են առաջադրանքները, որոնք սովորողները պետք է կատարեն զույգերով, երբեմն նաև՝ խմբով: Այսպես՝ փոխադարձ ստուգման և գնահատման տարբերակ կարող են լինել.

1. գրավոր/ բանավոր պատասխանների փոխադարձ ստուգումը,
2. ինքնուրույն աշխատանքների ստուգումը, շտկումը, ամփոփումն ու ներկայացումը,
3. փոխստուգման թերթիկներ մշակելն ու կիրառելը,
4. որպես «խորհրդատուներ» հանդես գալով՝ փոխօգնություն ցուցաբերելը և այլն:

Այս պարագայում կարևոր է ոչ այնքան փոխստուգման փաստը, որքան այն, որ այս մոտեցումը սովորողներին մղում է ակտիվության, զարգացնում է համագործակցելով աշխատելու, սեփական գործողությունները վերահսկելու, գործունեության արդյունքում ձեռք բերածը գնահատելու ունակություններ և հմտություններ:

Ըստ ուսումնական գործընթացի նպատակի՝ կիրառվում են գնահատման հետևյալ տեսակները.

1 *հայտորոշիչ/ նախնական գնահատում*, որը բացահայտում է սովորողների պատրաստվածության աստիճանը, ինչը օգնում է պլանավորել ուսուցման հետագա ընթացքը, ճշգրտվում է ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը,

2 *ձևավորող գնահատում*, որի միջոցով ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը,

3 *ամփոփիչ գնահատում*, երբ ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը,

Հարկ է նշել, որ ստուգման, գնահատման նշված գործընթացները տարրական դպրոցում իրականացվում են սովորողի ուսումնական գործունեության արդյունքը **վերլուծելու, որակավորելու, արժևորելու** շեշտադրմամբ:

*Գնահատման գործիքներ*

Սովորաբար գնահատման համար կիրառվում են հետևյալ միջոցները կամ գործիքները.

- առաջադրանքի կատարում (տարաբնույթ ստեղծագործական աշխատանքներ, որ պահանջում են որոշակի գիտելիքների, հմտությունների, արժեքների ու դիքորոշումների համակարգի դրսևորումներ)

- հարցում (հարցարան )

- թեստ

- գնահատման սանդղակ (ռուբրիկ)

- ուսումնական թղթապանակ

- ստուգատես

- ցուցադրություն և այլն:

Գնահատման գործընթացում անհրաժեշտ է.

- անհատական մոտեցում ցուցաբերել, հաշվի առնել սովորողի անձը և նրա հնարավորությունները,

- տարբերակված մոտեցում ցուցաբերել. միևնույն որակի գնահատումը պետք է տարբեր լինի կախված այն բանից, թե ում համար է նախատեսված՝ սովորողի (բացատրելու, մեկնաբանելու, վերլուծելու, մատնանշելու, ուղղորդելու հետագա գործողությունները), ծնողի (քննարկելու, ներկայացնելու, մեկնաբանելու, վերլուծելու, խորհրդակցելու և այլն), թե ուսուցչի (մշտադիտարկում, ուսումնասիրում, հետազոտում, պլանավորում և այլն),

- անձնային որակներին վերաբերող գնահատումը, որը նկարագրական կամ բնութագրական է, հրապարակայնորեն չանել,

- սովորողին բացատրել գնահատման չափանիշը, հիմնավորել, արժևորել դիտարկումները:

- գնահատումը չօգտագործել պիտակավորման նպատակով, գնահատել/արժևորել գիտելիքը, հմտությունը, արժեքները և չթիրախավորել անձը:

Արդյունավետ ուսուցում կարելի է իրագործել միայն այն դեպքում, երբ սովորողին պարզ լինի, թե ինքն ինչ գիտի, հասկանա, թե ուսումնական տվյալ փուլի վերջում ինչ պետք է իմանա, հասկանա առաջադրանքի բուն իմաստը և ուսումնական նյութի ուսուցման ավարտին ի վիճակի լինի կատարելու ամբողջ աշխատանքը:

Արդյունավետ ուսուցման համար խիստ կարևոր է աշակերտնե-րին քաջատեղյակ դարձնել իրենցից ակնկալվող վերջնարդյունքնե-րին, հստակ ներկայացնել դրանց հասնելու քայլերը: Անհրաժեշտ է աշակերտի մեջ արթնացնել սովորելու ցանկություն՝ ստանձնելով սեփական ուսումնառության պատասխանատվությունն ու վերա-հսկողությունը.

- ո՞րն է իմ ուսումնական մոտակա նպատակը,
- այդ նպատակին հասնելու ճանապարհին ի՞նչ ձեռքբերումներ ունեմ,
- այդ նպատակն իրականացնելու համար ի՞նչ պետք է անեմ:

***Հայտորոշում.*** ուսուցման գործընթացի հաջողությունը մեծա-պես պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ հայտորոշմամբ, ինչին ընդունակ է հենց ինքը՝ սովորողը: Հայտորոշիչ ուսում-նասիրման նպատակն է՝ պարզել ուսումնական նյութի կամ հմտու-թյան յուրացման գործում աշակերտի ձեռքբերումները, թերություն-ներն ու սխալները:

Գնահատման առանձնահատուկ տեսակ է **հայտորոշիչ թեստը:** Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյոք սովորողը պատրաստ է ուսումնառության հաջորդ քայլին:

Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններ են.

- կարճ ժամանակում, արագ կատարվող,
- որոշակի ուսումնական խնդրին ուղղված,
- արագ է ստուգվում և արժևորվում,
- սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է (միջին մակարդակ)
- արդյունքները հեշտ վերլուծելի են,

- արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարելի է որոշել աշակերտների հետագա անելիքները:

Նման թեստային փաթեթներում կարելի է ներառել հետևյալ տիպերի թեստային առաջադրանքների.

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ապացուցում պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,

Հանրակրթության նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական են այն աշխատանքները, որոնք վերաբերում են սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին, որոնց դրսևորումները (բնականաբար տարբեր մակարդակներով) հենց ձեռք բերածի գնահատականն են:

Գործնական աշխատանքները, փորձերը, ուսումնասիրությունները, նախագծային աշխատանքները, ստեղծագործական մոտեցումներ են ենթադրում և ուսուցումը բարձրացնում են Բլումի հայտնի տաքսոնոմիայի վերինմակարդակներ:

# Բլումի տաքսոնոմիա




Չմոռանանք շեշտել, որ գործնական, խմբային, նախագծային աշխատանքների հիմնական նպատակներից ու խնդիրներից են սոցիալական հմտություններ ձևավորել և զարգացնելը, որոնք գնահատելը, թերևս ամենաբարդն է:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջներին համապատասխան, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

- հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով,
- մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,
- ներկայացումներ պաստառների, ցուցափեղկերի (ստենդներ), տեսաֆիլմերի, էլեկտրոնային ռեսուրսների կիրառմամբ
- գործնական աշխատանքների կատարում,
- երևակայական, ստեղծագործական գաղափարնեի կերպավորման փորձեր և այլն:

Գործնական աշխատանքները գնահատվում են տարբեր ստուգատեսների, ունկնդրումների, ցուցադրությունների, ցուցա հանդեսների, զեկույցների ու ներկայացումների միջոցով՝ տրված գործնական առաջադրանքին բնորոշ գիտելիքների հմտությունների, ինչպես նաև արժեքի և դիրքորոշման դրսևորումներին համապատասխան:

Այս ամենը բարեխղճորեն վերլուծելու, քննարկելու և հաղորդելու կարիք ունի՝ հաշվի առնելով.

- առաջադրանքի կատարման համար նախապես առաջադրված չափանիշներին համապատասխան (բնութագրական չափանիշներով ռուբրիկ) արդյունքի դրսևորումը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ և նպատակային քայլեր կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու և ներկայացնելու կարողությունը:

# ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրթական բարեփոխումների ներկա փուլում առավել արդիական է դառնում գնահատումը դիտարկել որպես ուսուցման արդյունքների խորացման, զարգացման, ամրապնդման միջոց: Ասել է, թե գնահատումը ուսուցման գործընթաց է իր գործիքակազմով և մեթոդներով:

Ձևավորող գնահատումը սովորողի կրթական առաջընթացն ապահովելու նպատակով ուսուցումը յուրովի կարգավորող և ուղղորդող գործընթաց է: Նման գնահատման նպատակն է՝ ճշգրտել ուսումնական նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, ընտրել արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել յուրացման մակարդակները, և դրանց օգնությամբ աշակերտի համար ըմբռնելի դարձնել ուսման նպատակները:

Ձևավորող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը:

Գնահատման այս ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապի մշտական առկայությունը: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է **բացառապես ինքն իր հետ**՝ պարզելով իր առաջընթացը:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխգնահատումներով պարզում են տվյալ ուսումնական նյութի ա-

մեն մի քայլի յուրացման աստիճանը և իրենց առաջադիմության իրական պատկերը:

***Հետադարձ կապը*** առաջադրվող ջանքերի ու առաջարկվող լուծումների, ուղիների բարելավման մասին է: Սա յուրովի շփում է ուսուցման գործընթացում ներգրավված սուբյեկտների միջև (աշակերտ, ուսուցիչ, տնօրենություն, ծնող և այլք)՝ անդրադարձ, արձագանք, մեկնաբանություն, վերաբերմունք, փոխազդեցություն, ներգործություն, օգնություն, խորհրդատվություն, համագործակցություն և այլն:

Ձևավորող գնահատումը՝ ձեռքբերումների և հնարավորությունների առկա և ցանկալի մակարդակների միջև եղած ճեղքվածքի վրա ուշադրության սևեռումն է, հնարավոր բոլոր ձևերով սովորելուն աջակցելը: Ձևավորող գնահատումն, իր հերթին, ուսուցանող գնահատման ենթամաս է, որի գործառույթը ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում աշակերտի թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտնաբերելը և դրանք վերացնելն է համատեղ աշխատանքով:

Ուսուցանող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերն ու տարատեսակները՝

- **բանավոր հարցում,**
- **տնային հանձնարարություն,**
- **նախագիծ,**
- **բաց հարցերով քննարկում,**
- **ինքնագնահատում,**
- **փոխադարձ գնահատում,**
- **գործնական աշխատանք:**

# ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանրակրթության պետական նոր չափորոշչի հիմնական կարողունակություններից է **սովորել սովորելու** կարողունակությունը. «Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների հնարավորությունները: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ…»:

Սովորողի՝ ինքնավերլուծության, ինքնաճանաչման և ինքնագնահատման կարողությունների խթանմանը և ինքնազարգացմանը էապես նպաստում են նաև ձևավորող գնահատման գործիքները, մասնավորապես՝ ինքնագնահատումը:

Ինքնագնահատում իրականացնելիս սովորողը ոչ թե զուտ մեխանիկական աշխատանք է իրականացնում, այլ գործի է դնում իր իմացությունը, վերաբերմունքը, մտածողությունը՝ հիմքեր ստեղծելով ստեղծագործական մտածողության համար: Ինքնագնահատման հիմքը վերլուծությունն է, անդրադարձը՝ կատարվածին (ռեֆլեքսիա), որը վերաբերում է ոչ միայն արդյունքներին, այլև գործընթացին, ներդրած ջանքերին, վերաբերմունքին, անցած ճանապարհին և այլն: Ինքնագնահատման համար օժանդակող գործիք կարող է դառնալ սանդղակաշարը (ռուբրիկ)՝ հստակ մշակված չափանիշներով:

Ինքնագնահատման մի գործիք է «Գնահատման անիվը»: Օրինակ խմբային աշխատանքի ավարտին աշակերտներից յուրաքանչյուրին կարելի է առաջարկել  ընդհանուր առմամբ այսպիսի տեսք ունեցող «գնահատման անիվ»:



Գործիքն ուղղելով առարկայական վերջարդյունքների ապահովմանը՝ աշակերտին կարելի է ուղղել հետևյալ հարցը և հանձնարարել լրացնել անիվը:

Ինչպե՞ս ես գնահատում քո մասնակցությունը թիմային աշխատանքներին: Գնահատի՛ր՝ յուրաքանչյուր գույնի մեջ գրելով «Շատ լավ» «Լավ», «Ոչ այնքան լավ», «Վատ» բառերից մեկը:

Մեկ այլ դեպքում, աշակերտներին օժանդակելու նպատակով անիվի յուրաքանչյուր բաժնի համար կարելի է առարկայի վերջնարդյունքներից տվյալ թեմայի կամ նյութի ուսումնասիրման արդ-

յունքի չափանիշներ ընտրել: Այսինքն չափանիշները մշտապես կարելի է փոփոխել՝ կապված ուսումնական նյութից անկնկալվող ձեռքբերումների:

# ՓՈԽԱԴԱՐՁ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Փոխադարձ գնահատումը ձևավորող գնահատման գործիքներից է և կարող է իրականացվել հետևյալ փոխներգործություններով..

*սովորող - սովորող,*

*խումբ - խումբ,*

*սովորող - խումբ:*

Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները բացահայտում են իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, սխալները, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու սխալները շտկելու համար:

Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ: Այն կօգնի սովորողին գնահատել իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնահատելիս լինի օբյեկտիվ և պարզաբանի դիտարկումները և հարցեր տա:

Այլ միջոցների հետ մեկտեղ, փոխադարձ գնահատումը նպաստում է կրթության որակի բարելավմանը և պահանջում է անձնական պատասխանատվություն, անդրադարձ կատարելու սեփական ուսումնառությանը, դիտարկումների հիմնավորվածություն և փաս-

տարկվածություն ապահովելու, արդյունքում՝ ինքնագնահատում ի-րականացնելու:

Փոխադարձ գնահատման համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան միջավայր, ապահովել սովորողների կողմից դրական վերաբերմունք, համագործակցային փոխհարաբերություններ, աջակցող, արձագանքող որակներ: Փոխադարձ գնահատում կարելի է իրականացնել բանավոր, մշակված ռուբրիկներով, հարցաշարերով և այլն:




Փոխադարձ գնահատում իրականացնելու համար կազմակերպչական կարևոր պայման է, որ ուսուցիչը աշակերտների հետ միասին ընտրի առաջադրանքը, նրանց հետ մշակի և քննարկի ռուբրիկը (գնահատման սանդղակը)՝ համապատասխան չափանիշներով:

Փոխադարձ գնահատման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ քայլաշարով



## ԲԱԺԻՆ VII

# ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Գիտենք՝ ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է դրա նախապես պլանավորմամբ, որպեսզի ապահովվեն գործողությունների քայլերի հաջորդականությունը, դրանց կապերն ու անցումները, որպեսզի աշխատանքը դառնա նպատակային և արդյունավետ՝ ծախողումները հնարավորինս բացառելու համար:

Պլանավորման գործընթացում կարևորվում է դասի նպատակի, խնդիրների և վերջնարդյունքների սահմանումը:

Գիտենք՝ **նպատակը** նկարագրում է ուսուցման ցանկալի արդյունքը կամ արդյունքները: Այսինքն՝ այն ինչին ձգտում է հասնել ուսուցիչն իր և աշակերտների ջանքերով:

Նպատակները պետք է լինեն՝

- իրատեսական,
- կոնկրետ
- չափելի
- ցանկալի արդյունքը նկարագրող:

**Խնդիրը** քայլ է դեպի նպատակը, մատնանշված գործողություններ, որոնք տանում են դեպի նպատակի իրականացում:

Այսինքն, դրանք այն քայլերն են, որոնք օգնելու են հասնել նպատակին:

Միևնույն նպատակի համար կարող են առաջադրվել տարբեր խնդիրներ, որոնք կլինեն միջոց՝ նպատակին հասնելու համար: Եթե դասի ընթացքում չեք հասել նպատակին, մի՛ փոխեք այն (եթե, իհարկե, այն հստակ ու ճիշտ է ձևակերպված և բխում է

Չափորոշչից) հարկավոր է փոխել խնդիրները, որոնք կօգնեն արձանագրելու ակնկալվող արդյունքները՝ վերջնարդյունքները: Կարողունակահեն դաս պլանավորելու համար անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել մայրենի պետական, առարկայական չափորոշիչները և առարկայական ծրագիրը
- ծանոթանալ ՀՊՉ-ով և առարկայական ծրագրով սահմանված վերջնարդյունքներին,
- դիտարկել ՀՊՉ-ով և առարկայական ծրագրով սահմանված վերջնարդյունքների կապը,
- տեղայնացնել ՀՊՉ-ով և առարկայական ծրագրով սահմանված վերջնարդյունքները տվյալ դասի շրջանակում,
- պլանավորել օրվա դասը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կարողունակությունների զարգացման այն չափաբաժնին, որը պետք է ընդգրկել տվյալ դասի բովանդակության մեջ,
- ապահովել անհրաժեշտ գիտելիքների յուրացման, հմտություններ, արժեք և դիրքորոշում ձևավորելու մանկավարժական պայմանները,
- կատարել դասագրքում տրված առաջադրանքները՝ առաջնորդվելով դրանք սովորողների կարիքներին նպատակաուղղելու և վերջնարդյունքներն ապահովելու խնդիրներին:
- կիրառել հետադարձ կապ՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ստորև դասի պլանավորման նմուշօրինակներ են, որոնք կօգնեն կողմնորոշվելու կարողունակահեն/վերջնարդյունքահեն դաս պլանավորելու համար:

Առաջարկում ենք դասի պլանավորման քայլաշար.

1. առարկա

2. դասարան
3. թեմա
4. նպատակ
5. խնդիրներ
6. վերջնարդյունքներ
7. կարողունակություն
8. խաչվող հասկացություն
9. միջառարկայական և ներառարկայական կապ
10. անհրաժեշտ ռեսուրսներ
11. դասի ընթացք*
12. հետադարձ կապ /ռեֆլեքսիա/:

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված դասի պլաններն ընդամենը կարողունակությունների զարգացմանն ուղղված դասի պլաններ են: Դրանք կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով դասի տեսակը, նպատակը, սովորողների կարիքները և այլն:

**ՄԱՅՐԵՆԻ**

**2-րդ դասարան**

| | |
|---|---|
| *Դասի լայն թեման* | Ես կարող եմ: |
| *Դասի նեղ թեման* | Համառ մրջյունը |
| *Դասի նպատակը* | • ընթերցել տեքստը՝ ճիշտ, վարժ և հասկանալով<br>• վերարտադրել տեքստի բովանդակությունը<br>• ձևավորել ստեղծագործական կարողություններ<br>• ստանձնել պատասխանատվություն իր կատարած գործի և մարդկանց նկատմամբ: |
| *Դասի խնդիրները* | • լուռ ընթերցել տեքստը<br>• պատասխանել հարցադրումներին<br>• կատարել առաջադրանք 8-9-րդ<br>• կատարել առաջադրանք 12-13-րդ |
| *Դասի ընթացքում զարգացող վերջնարդյունքները* | • ընթերցի գրական պարզ տեքստեր<br>• վերարտադրի պատմությունը<br>• հարցերի միջոցով պատմի իր տեսածի, ցանկությունների մասին<br>• հասկանա տեքստի հիմնական միտքը<br>• խոսքի մեջ տարբերակի վանկը, բառը<br>• համագործակցի ընկերների հետ |
| *Կարողունակություն* | • լեզվական<br>• տնտեսական |
| *Կապը ՀՊՉ ի հետ* | ***S1*** ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).<br>***S7*** մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ |

| | |
|---|---|
| | դասակարգումներ.<br>**S8** դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.<br>**S15** օգտագործի տարբեր եղանակներ թեման պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար.<br>**S25** ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում.<br>**S26** արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը. |
| *Խաչվող հասկացությունները* | Համակարգ և մոդել<br>Միմյանց հետ որոշակի կապեր ունեցող տարրերի ամբողջություն: |
| *Միջառարկայական կապ* | • ես և շրջակա աշխարհը |
| *Գնահատում* | • Ձևավորող գնահատման գործիքների կիրառմամբ կստուգվեն սովորողների ուսումնական ձեռքբերումների մակարդակը: |

**ՄԱՅՐԵՆԻ**
**2-րդ դասարան**

| | |
|---|---|
| *Դասի լայն թեման* | Եկե՛ք՝ տանեմ: |
| *Դասի նեղ թեման* | «Քո տունը» հեղ.՝ Լիպարիտ Սարգսյան |
| *Դասի նպատակը* | • զարգացնել տեքստն անգիր վերարտադրելու կարողություն<br>• մտքերն անկաշկանդ արտահայտելու, տարբեր փաստարկներով խոսելու կարողությունների ձևավորում<br>• գիտակցել հայրենիքում մեծանալու, հայրենիքի բարգավաճման համար իր սեփական ներդրումն ունենալու, միգրացիայի /մարդկանց տեղաշարժի/ հնարավոր անհարմարությունները վեր հանե- |

| | |
|---|---|
| | լու կամ միգրացիայի պայմաններում՝նոր միջավայրին հարմարվելու անհրաժեշտության մասին: |
| *Դասի խնդիրները* | • անգիր վերարտադրել բանաստեղծությունը<br>• պատասխանել բնագրին կից հարցերին<br>• կատարել առաջադրանք 9-րդ, 10-րդ /բնակավայրում իր ներդրումն ունենալ, հարազատ մնալ իր հայրենիքին, նպաստել նրա բարգավաճմանը<br>• կատարել առաջադրանք 6-րդը /մարդկանց տեղաշարժեր, հարմարումներ կամ հնարավոր անհարմարություններ/ |
| *Դասի ընթացքում զարգացող վերջնարդյունքերը* | • անգիր վերարտադրի բանաստեղծությունը<br>• հարցերի միջոցով պատմի իր տեսածի, ցանկությունների մասին<br>• հասկանա տեքստի հիմնական միտքը<br>• նկարագրի իր բնակավայրը, վերլուծի առկա խնդիրներն ու մտածի դրանց լուծման ուղիների մասին՝ կազմակերպելով խմբային քննարկումներ:<br>• խոսքի մեջ օգտագործի հոմանիշ, հականիշ բառեր<br>• համագործակցի ընկերների հետ<br>• ցուցաբերի պատասխանատվություն, հոգատար վերաբերմունք իր բնակավայրի նկատմամբ |
| *Կարողունակություն* | • լեզվական գրագիտության<br>• տնտեսական |
| *Կապը ՀՊՉ ի հետ* | ***S1*** ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).<br>***S7*** մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դա- |

| | |
|---|---|
| | սակարգումներ.<br>***Տ8*** դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.<br><br>***Տ15*** օգտագործի տարբեր եղանակներ թեման պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար.<br>***Տ25*** ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում. |
| *Խաչվող հասկացությունները* | **Կառուցվածք և գործառույթ**<br>Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ:<br>Մարդու բնակվելու վայրի փոփոխությունը հանգեցնում է նրա միջավայրի փոփոխությանը: |
| *Միջառարկայական կապ* | • Ես և շրջակա աշխարհը |
| *Գնահատում* | • Ձևավորող գնահատման գործիքների կիրառմամբ կստուգվի սովորողների ուսումնական առաջընթացը: |

**ՄԱՅՐԵՆԻ**

**2-րդ դասարան**

| | |
|---|---|
| *Առարկա* | մայրենի |
| *Լայն թեմա* | Մի տանիքի տակ |
| *Նեղ թեմա* | Մեկ և յոթ /հեղ. Ջանի Ռոդարի/ |

| | |
|---|---|
| *Դասի նպատակը* | • զարգացնել կարդալու և գրելու կարողությունները<br>• ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողություններ<br>• ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները |
| *Դասի խնդիրները* | • բնագիրը լուռ կընթերցեն<br>• բովանդակության հիմնական միտքը կվերհանեն ՝առաջադրված հարցերի միջոցով (առաջ. 1-5-րդ)<br>• գրավոր կկատարեն ( առաջ. 6-12-րդ)<br>• խմբային աշխատանք՝ ներկայացնեն հերոսներին, կխոսեն նրանց առանձնահատկությունների մասին,<br>  • կստեղծեն խաղ՝ աշխարհի երեխաների հետ խաղալու համար՝ անկախ լեզվի իմացությունից,<br>  • կպատրաստեն տարբեր ազգություններ հիշեցնող դիմակների հավաքածու<br>  • կկազմակերպեն ցուցադրություն: |
| *Դասի ընթացքում զարգացող վերջնարդյունքները* | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի արձակ տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>• լսի հրահանգեր, իրեն ուղղված խոսքը և արձագանքի.<br>• ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին<br>• ճանաչի բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց): |

| | |
|---|---|
| | • ներկայացնի իր և մյուսների, ինչպես նաև տարբեր մարդկանց միջև առկա նմանություններն ու տարբերությունները, խոսի մարդկանց առանձնահատկությունների մասին:<br>• կարևորի ընկերական հարաբերությունները, համագործակցի, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը: |
| *Կարողունակություն* | • լեզվական գրագիտության<br>• ժողովրդավարական և քաղաքացիական |
| *Կապը ՀՊՉ ի հետ* | ***Տ1.*** ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).<br>***Տ7.*** մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ.<br>***Տ8.*** դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն<br>**Տ9.** հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.<br>***Տ24*** ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի, հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը: |

| | |
|---|---|
| *Խաչվող հասկացություն* | **Պատճառ և հետևանք**<br>Մարդկանց միջև առողջ փոխհարաբերությունները հանգեցնում են դրական, խաղաղ միջավայրի ապահովման, որը երաշխիք է կայուն զարգացման: Եվ հակառակը՝ կոնֆլիկտներն ու անհամաձայնությունները, միմյանց նկատմամբ անհանդուրժողականության հետևանք են՝ հարաբերությունների սրման և խաղաղության վտանգմանն ամբողջ աշխարհում: |

| | | | |
|---|---|---|---|
| *Անհրաժեշտ նյութեր և պարագաներ* | *Ուսուցչի համար* | *Աշակերտի համար* | |
| | Ուսումնական գործընթացի մինչ այս պահը կատարած աշխատանքների հետ կապված նյութեր: Թեմատիկ պլանավորում: Ցուցադրության համար անհրաժեշտ նյութեր, նշումներ: | պաստառ քարտեր յուղամատիտներ | |
| *Դասի ընթացքը* | *Սկիզբ* | Աշխատանքների կազմակերպում, անելիքների նախանշում, վերջնարդյունքների սահմանում | *5 ր* |
| | *Աշխապանք բնագրի շուրջ* | Բնագրի լուռ ընթերցում, ըմբռնման հարցերին պատասխանում և մեկնաբանում լեզվական նյութի ճանաչում տեքստում | *15 ր* |
| | *Գրավոր կարողությունների զարգացում* | Գրավոր առաջադրանքների կատարում | *10ր* |
| | *Ամփոփում* | Ստեղծել պաստառ՝ «Խաղաղություն» թեմայով | *10ր* |

| | | | |
|---|---|---|---|
| | *Գնահատում* | Ձևավորող գնահատում. ինքնագնահատման սանդղակ | *5ր* |

**Հուշում՝**

«Մեկ և յոթ» բնագրում նախատեսվում են աշխարհի երեխաների համար՝ անկախ լեզվի իմացությունից, խաղ ստեղծելու (տե՛ս էջ 50 -րդ՝ առաջ. 13-րդ) և տարբեր ազգություններ հիշեցնող դիմակների հավաքածու պատրաստելու (տե՛ս էջ 50 -րդ՝ առաջ. 14-րդ)/ և ցուցադրություն կազմակերպելու առաջադրանքներ:

Նշենք, որ վերոնշյալ առաջադրանքները պահանջում են առանձին դասաժամեր՝ իրենց բնորոշ դասի կառուցվածք և պլանավորում:

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ներկայացված թեմատիկ պլանավորումն ամբողջ տարվա ուսումնական ծրագրային նյութի բաշխումն է ժամանակի մեջ. 32 ուսումնական շաբաթ, շաբաթական՝ 7 ժ, տարեկան՝ 224 ժ:

Ցանկանում ենք հիշեցնել, որ վերոնշյալ օրինակելի թեմատիկ պլանավորումն ուսուցիչը կարող է ենթարկել փոփոխությունների՝ հաշվի առնելով սովորողների առանձնահատկություններն ու կարիքները:

Թեմատիկ պլանի **առաջին սյունակում** ներկայացված է թեմատիկ խմբի վերնագիրը:

**Երկրորդ սյունակում**՝ թեմատիկ խմբի նպատակն է:

**Երրորդ սյունակում**՝ թեմատիկ խմբի ընդհանրական վերջնարդյունքներն են:

**Չորրորդ սյունակում՝** դասանյութի վերնագիրն է, կից ներկայացված լեզվական նյութով:

**Հինգերորդ սյունակում՝** դասանյութի չափելի վերջնարդյունքներն են:

**Վեցերորդ սյունակում՝** տվյալ թեմային ***պայմանականորեն*** հատկացված ժամաքանակն է

**Յոթերորդ սյունակում ՝** դասանյութին հատկացված էջերի համարներն են:

# ՄԱՅՐԵՆԻ 2
## ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ
## 2023-2024 ուսումնական տարի

| ԹԵՄԱՏԻԿ ԽՈՒՄԲ | ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՆՊԱՏԱԿԸ | ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ ՆԵՐԸ | ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ԹԵՄԱՆ | ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐ-ԴՅՈՒՆՔՆԵՐԸ | ԺԱՄԱ-ՔԱՆԱ-ԿԸ | ԷՋԸ |
|---|---|---|---|---|---|---|
| **ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ** | | | | | | |
| **1-ին շաբաթ** | | | | | | |
| **ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ** | **զարգացնել** ընթերցողական կարողությունը՝ կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ<br>**ձևավորել** սեփական աշխարհը բացահայտելու,<br>իր հույզերի, ցանկությունների մասին խոսելու, ինք- | ✓ հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր<br>✓ բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>✓ մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային<br>✓ լսի իրեն ուղղված | Դասագրքի կառուցվածքը, կազմման սկզբունքներն ու առանձնահատկությունները: | - **ճանաչի** դասագրքում կիրառված պայմանական նշանները<br>- **բացատրի** դրանց օգտագործման տրամաբանությունը<br>- **կարողանա** օգտագործել դասագրքի ծածկագրերը՝ ըստ անհրաժեշտության | **1** | **3-րդ** |
| | | | - Թեմատիկ | - **իմանա** ծիածանի | **3** | **4-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նարտահայտման, ինքնաընդունման կարողություններ **խթանել** բարեկիրթ շփումը **նպաստել** իր մասին ունեցած պատկերացումների ընդլայնմանը | խոսքը<br>✓ կատարի հրահանգներ և արձագանքի<br>✓ պատասխանի ընթերցածի, լսածի վերաբերյալ հարցերին<br>✓ համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները | խմբի մուտքի խոսքը **(QR կոդ)**<br>- «Ծիածան»: *Հնչյուն և տառ (կրկնություն):* | մասին՝ որպես բնության երևույթի<br>- **իմանա** այբուբենը հնչյունի և տառի մասին<br>- **կիրառի** բարեվարքության կանոններ<br>- **օգտագործի** առօրյայում բարեկիրթ բառապաշար՝ ըստ անհրաժեշտության<br>- **հարգի** յուրաքանչյուրի անհատականությունը<br>- **դրսևորի** բարեկիրթ վարքագիծ հասակակիցների և մեծահասակների հետ շփումներում | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Համատեղ ընթերցանություն[1] | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք[2] | | 2 | |
| **2-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ** | | | - «Մի օրով էլ մեծացա»: *Հնչյուն և տառ (կրկնություն)* | - **անվանի** բնության երևույթները<br>- **բացատրի** կերպարի հույզերը<br>- **իմանա** հնչյունների տեսակները<br>- **տարբերակի** բաղաձայն և ձայնավոր հնչյունները | 2 | **8-րդ** |

[1] Համատեղ ընթերցանություն՝ անհատական, զույգով, թիմով (համագործակցային, ընդհանուր հետաքրքրություններ ունեցող խմբով, ընտանիքով և այլն): Նկատի է առնվում այն հանգամանքը, որ ընթերցանությունն ուղղորդվում է նախապես սահմանված ընդհանուր նպատակով: Համատեղ քննարկվում, վերլուծվում են ընթերցանության արդյունքները, ստացված տեղեկությունը:
[2] Գրավոր աշխատանքների տեսակների և ձևերի ընտրության հարցում ուսուցիչն ազատ է, սակայն անպայմանորեն հարկավոր է առաջնորդվել առարկայական ծրագրի վերջնարդյունքներով:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | «Ես»: | - **ճանաչի** կենդանիներին<br>- **իմանա** որոշ կենդանիների կենսակերպի մասին<br>- **տարբերակի** կենդանիների խմբերը<br>- **իմանա** հնչյունների տեսակները<br>- **տարբերակի** բաղաձայն և ձայնավոր հնչյունները: | 2 | 11-րդ |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **3-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ** | | | - «Ես»:<br>*Հնչյուն և տառ (կրկնություն):* | - **բնութագրի** իրեն<br>- **դրսևորի** իրեն՝ մարդկանց հետ փոխհարաբերություններում և շփումներում | 1 | 11-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | - «Շաբաթվա իմ յոթ գույնե-րը»:<br>*Ձայնավոր և բաղաձայն հնչյունների արփաասանու-թյունն ու գրու-թյունը (կրկնություն)* | - **իմանա** շաբաթվա օրերը<br>- **պլանավորի** սե-փական քայլերը<br>- **կազմի** օրվա կա-նոնակարգը,<br>- **վերլուծի** իր գոր-ծողությունների հետևանքները<br>- **զգա և գնահատի** ժամանակը | **3** | **14-րդ** |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |
| **4-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ** | | | - «Շնորհակա-լությունը, Ներեցեքը, Խնդրեմը»:<br>*Ձայնավոր և բաղաձայն հնչյունների* | - **կիրառի** բարեվար-քության կանոններ<br>- **քննարկի** մարդ-կանց՝ բարեվար-քության և բարե-կրթության դրսևո-րումները տարբեր | **4** | **18-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *արտասանու-թյունն ու գրու-թյունը:* | իրավիճակներում<br>- **օգտագործի** առօրյայում բարե-կիրթ բառապա-շար՝ ըստ անհրա-ժեշտության | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **5-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ** | | | «Հարցերի պարը»: | - **բացահայտի** իրեն շրջապատող աշ-խարհը՝ ըստ բնա-գրի<br>- **ձևակերպի** հարցեր<br>- **վերարտադրի** տեքստն արձակ ձևով | 3 | 22-րդ |
| | | | **Ամփոփում** | - **իմանա** այբուբենը<br>- **բնութագրի** իրեն<br>- **ձևակերպի** քաղա-քավարության և | 1 | 25-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | բարեկրթության կանոններ<br>- **ներկայացնի** իր իրավունքներն ու պարտականությունները | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 1 | |
| | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | | 1 | |
| **6-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ** | - **զարգացնել** ընթերցողական կարողությունը՝ կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ<br>- **ձևավորել պատկերացումներ՝**<br>- մարդկանց փո- | ✓ կարդա արձակ և չափածո գրական տեքստեր<br>✓ բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>✓ բացատրի բառերը՝ կապելով իր կենսակերպի հետ<br>✓ լսի իրեն ուղղված | - Թեմատիկ խմբի մուտքի խոսքը **(տե՛ս QR կոդ)**<br>- «Արագիլն ու սագը»:<br>*Վանկ:* | - **ճանաչի** կենդանիներին<br>- **իմանա** որոշ կենդանիների կենսակերպի մասին<br>- **տարբերակի** կենդանիների խմբերը<br>- **գրի** հաղորդագրություն | 3 | **27-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | խիարաբերություն-ների,<br>- պատասխանա-տվության և կյան-քում ստանձնած սոցիալական դե-րերի,<br>- միմյանց հետ ունեցած ընկերա-կան կապերի,<br>- օգնության և փոխգործակցու-թյունների մասին<br>- **նպաստել** իրենց իրերի, գույքի պահպանմանը, իրավունքների գի-տակցմանն ու պարտականութ-յունները կատարե-լու կարևորմանը | խոսքը<br>✓ կատարի հրա-հանգներ և արձա-գանքի,<br>✓ պատասխանի ըն-թերցածի, լսածի վերաբերյալ հարցերին<br>✓ ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթեր-ցածի, իրեն հետա-քրքրող հարցերի մասին | | - **մեկնաբանի** կեր-պարների արարքները<br>- **արտահայտի** սեփական տեսա-կետը<br>- **գնահատի** իր հնարավորություն-ները՝ ներկայաց-նելով սեփական ես-ի «ուժեղ» և «թույլ» կողմերը<br>- **օգնի** ձմեռող թռչուններին | | |
| | | | - «Կանաչ գորտի հեքիաթը»:<br>*Միավանկ և բազմավանկ բառեր:* | - **իմանա** երկկեն-ցաղ կենդանիների մասին<br>- **տարբերակի** ջրա-յին և ցամաքային կենդանիները<br>- **որոշի** վանկերի քանակը բառերի մեջ | **1** | **30-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **7-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ** | | | - «Կանաչ գորտի հեքիաթը»: ***Ը** գաղտնավանկ:* | - **ճանաչի** իր ծննդավայրն ու բնակավայրը<br>- **նկարագրի** իր բնակավայրը<br>- **համեմատի** բնակության տարբեր վայրեր<br>- **կարողանա** արագ և ճիշտ կողմնորոշվել ցանկացած իրավիճակում<br>- **վանկատի ը** գաղտնավանկ ունեցող բառեր<br>- **հաշվի** տառերի և հնչյունների քանակը **ը** գաղտ- | 2 | 30-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | նավանկ ունեցող բառերում | | |
| | | | - «Համառ մրջյունը»:<br>*Բառ:* | - **իմանա** միջատների (մրջյուն, ճպուռ և այլն) կենսակերպը<br>- **ստանձնի** պատասխանատվություն՝ իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ<br>- **հոգ տանի** մտերիմ մարդկանց մասին՝ չընկրկելով դժվարությունների առջև<br>- **ճանաչի** բառը որպես պատկերավորման միջոց | **2** | **34-րդ** |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |

| 8-րդ շաբաթ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ** | | | «Համառ մրջյունը»: | - **իմանա** միջատների (մրջյուն, ճպուռ և այլն) կենսակերպը<br>- **ստանձնի** պատասխանատվություն՝ իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ<br>- **հոգ տանի** մտերիմ մարդկանց մասին՝ չընկրկելով դժվարությունների առջև<br>- **ճանաչի** բառը որպես պատկերավորման միջոց | **1** | **34-րդ** |
| | | | - «Փիղն ու մրջյունները»: *Բառակապակցություն:* | - **իմանա** փղի և մրջյունի մասին՝ որպես բնության էակների | **3** | **38-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | - **բնութագրի** փղին և մրջյուններին՝ ըստ բնագրի<br>- **ներկայացնի** իր և մյուսների առկա նմանություններն ու տարբերություն-ները<br>- **խոսի** մարդու անձ-նական տարածք ունենալու մասին<br>- **կազմի** բառակա-պակցություններ<br>- **գնահատի** իր ձեռքբերումները | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 1 | |
| | | | Թեմատիկ գրա-վոր աշխատանք | | 1 | |
| **9-րդ շաբաթ** | | | | | | |
| | | | - «Մոռացված | - **իմանա** իր և իր | **4** | **41-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ** | | | ծննդյան օրը»: *Առարկա ցույց փվող բառեր:* | մտերիմների ծննդյան օրերը<br>- **օգտվի** օրացույցից<br>- **արտահայտի** վերաբերմունք ընտանեկան ավանդույթների նկատմամբ<br>- **արտահայտի** հույզերը կար-դացած ստեղծա-գործության վերաբերյալ<br>- **պլանավորի** իր գործողությունները | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **10-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ** | | | - «Տատիկի ժամացույցը»: *Առարկա ցույց* | - **հասկանա** տեքս-տի բովանդա-կության և իր | 3 | **46-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *փվող բառեր:* | կենսակերպի կապը<br>- **արտահայտի** հույզերը կարդացած ստեղծագործության վերաբերյալ<br>- **ներկայացնի** իր ընտանիքի մոդելը<br>- տեքստից հարցերի միջոցով<br>- **առանձնացնի** առարկա ցույց տվող բառերը<br>- **ուշադիր լինի** սեփական իրերի նկատմամբ<br>- **կարևորի** աշխատանքը, դրա արդյունքները<br>- **լինի** խնայող | | |
| | | | **Ամփոփում** | - **իմանա՝** ինչ է բառը և բառակա- | **1** | **51-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | պակցությունը<br>- **սիրի** ինքն իրեն, իր ընտանիքը, հարգի ընկերներին, ուսուցիչներին, հոգատար վերաբերմունք դրսևորի մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ<br>- **խոսի** իր ձեռքբերումների մասին | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |
| **11-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՐԲ ՆԱ ՓՈՔՐ ԷՐ** | **ծանոթացնել** նշանավոր մարդկանց կյանքին և գործունեությանը | ✓ կարդա արձակ և չափածո գրական տեքստեր<br>✓ բացատրի որոշ բառերի իմաստը | - Թեմատիկ խմբի մուտքի խոսքը **(QR կոդ)**<br>- «Մեծ երևակա- | - **իմանա** հեքիաթագրի մասին որոշ կենսագրական տվյալներ, դրվագներ նրա | **4** | **53-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նրանց կյանքի՝ մանկության տարիների որոշ դրվագներ<br>**տանել** զուգահեռներ իրենց առօրյայի և հետաքրքրությունների հետ<br>**օգնել** սովորողին բացահայտելու իր հետաքրքրությունները, նախասիրությունները **ճանաչել** որոշ մասնագիտություններ | համատեքստում<br>✓ բացատրի բառերը՝ կապելով իր կենսակերպի հետ<br>✓ նկարագրի մարդկանց, խոսի նրանց գործերի մասին<br>✓ պատասխանի ընթերցածի, լսածի, վերաբերյալ հարցերին<br>✓ ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին<br>✓ վարի երկխոսություններ և զրույցներ բնագրի շուրջ<br>✓ ձևակերպի հարցեր և վարի երկխո- | յողը»:<br>*Առարկա ցույց տվող բառեր:* | կյանքից<br>- **վերարտադրի** բնագիրը,<br>- **պատասխանի** հարցերին<br>- **համապատասխանեցնի** «Անճոռնի ճուտիկը» հեքիաթի բովանդակությունը առօրյա որևէ իրողության հետ<br>- **փոփոխի** հեքիաթի բովանդակությունը<br>- **վերլուծի** տեքստի կերպարների վարքագիծը,<br>- **կատարի** պարզ դատողություններ<br>- **խոսի** իր նախասիրությունների, դրանք՝ հետագա- | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սություն, նշումներ անի | | յում գործի վերածելու պլանների մասին<br>- **կարևորի** հանդուրժողականության դրսևորումները ցանկացած իրավիճակում<br>- **գնահատի** իր կատարած աշխատանքը<br>- **ինքնարտահայտվի** | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | | |
| **12-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՐԲ ՆԱ ՓՈՔՐ ԷՐ** | | | - «Կախարդված հանդիսատեսը»:<br>*Գործողություն ցույց փվող բառեր:* | - **իմանա** երաժշտագետի մասին որոշ կենսագրական տվյալներ, դրվագներ<br>- **վերարտադրի** | **4** | **57-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | բնագիրը, պատասխանի հարցերին<br>- **վերլուծի** տեքստի կերպարի վարքագիծը<br>- **կատարի** պարզ դատողություններ<br>- **խոսի** իր նախասիրությունների, դրանք՝ հետագայում գործի վերածելու պլանների մասին<br>- հարցերի միջոցով **առանձնացնի** գործողություն ցույց տվող բառերը<br>- գնահատի իր կատարած աշխատանքը<br>- ինքնարտահայտվի<br>- դրսևորի ողջամիտ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | և հարգալից վերաբերմունք մշակութային գործիչների նկատմամբ | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 1 | |
| | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | | 1 | |
| **13-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՐԲ ՆԱ ՓՈՔՐ ԷՐ** | | | - «Ծաղրածուների արքան»: *Գործողություն ցույց տվող բառեր:* | - **իմանա** կրկեսի մասին<br>- **ճանաչի** Լեոնիդ Ենգիբարյանին<br>- **իմանա** նրա մասին որոշ կենսագրական տվյալներ, դրվագներ նրա կյանքից<br>- **վերարտադրի** բնագիրը, պատաս- | 4 | **63-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | խանի հարցերին<br>- **վերլուծի** կերպարի վարքագիծը<br>- **կատարի** պարզ դատողություններ<br>- **խոսի** իր նախասի-րությունների, դրանք հետագա-յում գործի վե-րածելու պլանների մասին<br>- **գնահատ**ի իր կա-տարած աշխա-տանքը<br>- **ինքնարտահայտվի**<br>- **դրսևորի** ողջամիտ և հարգալից վերա-բերմունք մշակու-թային գոր-ծիչների նկատմամբ | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **14-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՐԲ ՆԱ ՓՈՔՐ ԷՐ** | | | - «Աշխարհա-հռչակ շախմա-տիստը»: *Հապկանիշ ցույց տվող բառեր:* | - **իմանա** շախմատի մասին<br>- **ճանաչի** Տիգրան Պետրոսյանին,<br>- **իմանա** նրա մա-սին որոշ կենսա-գրական տվյալներ<br>- **վերարտադրի** բնագիրը, պատաս-խանի հարցերին<br>- **վերլուծի** կերպարի վարքագիծը<br>- **կատարի** պարզ դատողություններ<br>- **խոսի** իր նախասի-րությունների, դրանք՝ հետագա-յում գործի վերածե-լու պլանների մա-սին | 2 | **67-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | - **ինքնարտահայտվի**<br>- **գնահատի** իր կատարած աշխատանքը<br>- **դրսևորի** ողջամիտ և հարգալից վերաբերմունք՝ մշակութային գործիչների նկատմամբ<br>- **զգա** ժամանակը<br>- **կարևորի** համբերատարությունը և հանդուրժողականությունը՝ որպես բնավորության գծեր, որոնք օգնում են մարդուն իր նպատակին հասնելու համար | | |
| | | | «Մեծ լոռեցին»: | - **իմանա** Հովհաննես Թումանյանի մասին որոշ կենսագրական տվյալ- | **2** | **70-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներ, դրվագներ նրա կյանքից<br>- **վերարտադրի** բնագիրը<br>- **պատասխանի** հարցերին<br>- **վերլուծի** կերպարի վարքագիծը<br>- **կատարի** պարզ դատողություններ<br>- **խոսի** իր նախասի-րությունների, դրանք՝ հետագայում գործի վերածելու պլանների մասին<br>- գնահատի իր կա-տարած աշխա-տանքը<br>- ինքնարտահայտվի<br>- դրսևորի ողջամիտ և հարգալից վերա-բերմունք՝ մշակու-թային գործիչների | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | նկատմամբ | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **15-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵՐԲ ՆԱ ՓՈՔՐ ԷՐ** | | | - «Մեծ լոռեցին»: *Հապկանիշ ցույց տվող բառեր:* | - **ձևակերպի** հետա-զոտական հարցեր<br>- **նկարագրի** դրանց պատասխանները գտնելու քայլերը<br>- **օգտվի** անհրաժեշտ տեղեկույթից<br>- **կարողանա** տեղե-կատվությունն ըստ անհրաժեշտության օգտագործել,<br>- հարցերի միջոցով **գտնի** հատկանիշ ցույց տվող բառերը | 2 | **70-րդ** |
| | | | **Ամփոփում** | - **իմանա՝** առարկա, գործողություն, հատկանիշ ցույց | 2 | **76-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | տվող բառերը, դրանց տրվող հարցերը<br>- **ճանաչի** անվանի մարդկանց՝ ըստ թեմատիկ խմբի բովանդակության<br>- **ներկայացնի** անվանի մարդկանց կատարած գործերը<br>- **դրսևորի** վերաբեր-մունք մասնագի-տությունների նկատմամբ՝ ըստ թեմատիկ խմբի բովանդակության | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **1** | |
| | | | Թեմատիկ գրա-վոր աշխատանք | | **1** | |

| ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 16-րդ շաբաթ | | | | | | |
| **ԵԿԵ՛Ք՝ ՏԱՆԵՄ** | **ծանոթացնել** Հայաստանի բնաշխարհի հետ<br><br>**ներկայացնել** հայ ժողովրդի կյանքում ժամանակի մեջ տեղի ունեցած փոփոխությունները<br><br>**զարգացնել** չափածո գրական ստեղծագործություններն անգիր արտասանելու կարողությունը | ✓ կարդա արձակ և չափածո գրական տեքստեր<br>✓ բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>✓ բացատրի բառերը՝ կապելով իր կենսակերպի հետ<br>✓ նկարագրի իր երկրի տեսարժան վայրերը<br>✓ լսի, հասկանա արձագանքի լսածին<br>✓ պատասխանի ընթերցածի, լսածի վերաբերյալ հարցերին | - Թեմատիկ խմբի մուտքի խոսքը **(QR կոդ)**<br>- «Հայաստանյան խճանկար»: *Հատուկ անունների գրությունը:* | - **ճանաչի** իր երկիրը<br>- **թվարկի** Հայաստանի վայրերը՝ ըստ բնագրի<br>- **նկարագրի** Հայաստանի վայրերը՝ ըստ բնագրի<br>- **կարևորի** իր երկիրը ճանաչելու անհրաժեշտությունը<br>- հոգատար վերաբերմունք **դրսևորի** իր երկրի նկատմամբ<br>- **իմանա** հատուկ անունների գրությունը | **4** | **4-րդ** |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ✓ ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին<br>✓ վարի երկխոսություններ և զրույցներ բնագրի շուրջ<br>✓ **ձևակերպի** հարցեր և վարի երկխոսություն, նշումներ անի<br>✓ անգիր արտասանի չափածո տեքստերը<br>✓ **արտահայտի** մտքերն անկաշկանդ<br>✓ **խոսի** ըստ էության<br>✓ **հայտնի** կարծիք և տարբեր փաստարկներով հիմնավորի այն | Գրավոր աշխատանք | | **2** | |

| 17-րդ շաբաթ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԵԿԵ՛Ք՝ ՏԱՆԵՄ** | | | - «Իմ հայրենի-քը» *Հատուկ անունների գրությունը:* | - **իմանա** Հայաստանի պետական խորհրդանշանները<br>- **նկարագրի** իր ծննդավայրը<br>- **հավաքագրի** տվյալներ և դրանք քարտեզագրի<br>- **ստեղծի** իր «անձնագիրը»<br>**իմանա** հատուկ անունների գրությունը<br>- **գիտակցի** իր դերն ու պատասխանատվությունը հայրենիքի պաշտպանության գործում | 3 | 10-րդ |
| | | | - «Անուշ անուններ»:<br>- *Իմաստով մոտ* | - **իմանա** ընտանիքի անդամների անունները | 1 | 14-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *բառեր:* | - **սիրի** իր ընտանիքը<br>- հոգատար վերաբերմունք<br>- **դրսևորի** իր հարազատների նկատմամբ<br>- **առանձնացնի** հոմանիշ բառերը խոսքի մեջ | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **18-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵԿԵ՛Ք՝ ՏԱՆԵՄ** | | | «Անուշ անուններ»: | - **իմանա** ընտանիքի անդամների անունները<br>- **սիրի** իր ընտանիքը<br>- հոգատար վերաբերմունք **դրսևորի** իր | 1 | 14-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հարազատների նկատմամբ<br>- **առանձնացնի** հոմանիշ բառերը խոսքի մեջ<br>- **անգիր** վերար-տադրի բանա-ստեղծությունը<br>- **գիտակցի** մարդու՝ իր անունը պատվով կրելու կարևորությունն ու պատասխա-նատվությունը | | |
| | | | - «Քո տունը»: *Իմաստով հակառակ բառեր:* | - **ճանաչի** իր հայրե-նիքը<br>- **բացահայտի** իր ծննդավայրը/ բնակավայրը՝ կարդալու, լսելու, քննարկելու միջոցով<br>- **առանձնացնի** | **3** | **18-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հականիշ բառերը խոսքի մեջ<br>- **քննարկի** միգրա-ցիայի /մարդկանց տեղաշարժի/ հնարավոր ան-համարություն-ները վեր հանելու կամ միգրացիայի պայմաններում՝ նոր միջավայրին հարմարվելու անհրաժեշտության մասին հարցերը<br>- **գիտակցի** հայրենիքում մեծանալու, հայենիքի բար-գավաճման համար իր սեփական ներ-դրումն ունենալու կարևորությունը | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **19-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵԿԵ՛Ք՝ ՏԱՆԵՄ** | | | - «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը»: *Իմաստով հակառակ բառեր:* | - **իմանա** գրերի գյուտի մասին<br>- **կազմի** պլան<br>- **վերաշարադրի** տեքստը՝ ըստ պլանի<br>- **գրավոր փոխա-դրի** տեքստը<br>- **գտնի** պատճառա-հետևանքային կապեր՝ գրերի գյուտի և հայ ժողովրդի գոյատևման միջև<br>- **գնահատի** հայոց լեզուն՝ որպես ազգապահպան միջոցի | 4 | 21-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | - **արժևորի** մայրենի դերը, հարգալից վերաբերմունք ունենա մայրենի լեզվի հանդեպ<br>- **առանձնացնի** հականիշ բառերը խոսքի մեջ | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **20-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԵԿԵ՛Ք՝ ՏԱՆԵՄ** | | | - «Նյուտոնի թիկնոցը»:<br>*Իմաստով մոտ և իմաստով հակառակ բառեր:* | - **ճանաչի** Վիկտոր Համբարձումյանին<br>**իմանա** Բյուրականի աստղադիտարանի մասին<br>- **վերլուծի** տեքստի կերպարի | 3 | **24-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | վարքագիծը<br>- **կատարի** պարզ դատողություններ<br>- **խոսի** իր նախասիրությունների, դրանք՝ հետագայում գործի վերածելու պլանների մասին<br>- **արժևորի** հայ նշանավոր մարդկանց դերը հայ ժողովրդի պատմության կերտման գործում՝ ունենալով այն որպես օրինակ սեփական նախաձեռնություններում | | |
| | | | Ամփոփում | - **իմանա** իմաստով մոտ և հակառակ իմաստ ունեցող | 1 | 28-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | բառերի մասին<br>- **իմանա** Հայաս-տանի մասին՝ ըստ թեմատիկ խմբի բովանդակության<br>- **կարողանա** ներկայացնել իր հայրենիքը, ծննդավայրը | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **1** | |
| | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | | **1** | |

<table>
<tr><th colspan="7">21-րդ շաբաթ</th></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr>
<td>ՄԻ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ</td>
<td>ծանոթացնել մարդկանց կատարած լավ ու վատ գործերին, արարքներին<br>նպաստել բնակավայրի զարգացման գործում իր դերի ու պատասխանատվության բարձրացմանը<br>ներկայացնել մարդկանց տեղաշարժերի հնարավոր ռիսկերը<br>խթանել հայենիքում ապրելու ու արարելու</td>
<td>✓ հասկանալով և սահուն ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր,<br>✓ բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>✓ հարստացնի խոսքը նոր բառերով<br>✓ մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային<br>✓ լսի իրեն ուղղված խոսքը<br>✓ կատարի հրահանգներ և արձագանքի,<br>✓ պատասխանի</td>
<td>- Թեմատիկ խմբի մուտքի խոսքը<br>(QR կոդ)<br>- «Ես իմ բաժին երկինքն եմ պահում»:<br>Արմափ, ածանց:</td>
<td>- իմանա բնագրի թռչունների մասին<br>- վերաշարադրի տեքստը որևէ հերոսի անունից<br>- գրավոր պատասխանի բնագրից հետո որևէ հարցի՝ իր ընտրությամբ<br>- առանձնացնի գլխավոր միտքը և մեկնաբանի<br>- ձևակերպի հետազոտական հարց՝ «Ես ի՞նչ եմ անում իմ բաժին «երկինքը» պահելու համար»<br>- օգտվելով օրինակից՝ հորինի նմանօրինակ</td>
<td>4</td>
<td>30-րդ</td>
</tr>
</table>

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գաղափարը | ընթերցածի, լսածի, վերաբերյալ հարցերին<br>✓ համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով խմբային աշխատանքի սահմանված կանոնները | | պատմություն:<br>- **ճանաչի** բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց) | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |
| **22-րդ շաբաթ** | | | | | | |
| **Մի ՏԱՆԻՔԻ ՏԱԿ** | | | - «Ամենից լավ տունը»:<br>*Արմատ, ածանց:* | - **իմանա** իր բնակավայրի հասցեն<br>- **ներկայացնի** բնակավայրը,<br>- **հավաքագրի** և ամբողջացնի տվյալներ՝ իր բնակավայրի | **3** | **34-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | վերաբերյալ<br>- **ներկայացնի** մարդկանց տեղաշարժերը, հարմարումը նոր միջավայրին,<br>- **բացատրի** այդ երևույթի շարժառիթը և բերի օրինակներ<br>- **կանխատեսի** իր բնակավայրը/քա-ղաքն ավելի բարե-կարգ, մաքուր պահելու քայլերը<br>- **գիտակցի** իր դերակատա-րության ու պատասխանատ-վության ազդեցու-թյունը շրջակա միջավայրի վրա, իր պարտականու- | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | թյունը համարի աշխարհն ավելի լավը դարձնելը<br>- **ճանաչի** բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց) | | |
| | | | - «Ինչքա՞ն է կշռում մի փաթիլ ձյունը»:<br>*Արմատ, ածանց:* | - **նկարագրի** ծմեռն՝ ըստ բնագրի<br>- **բնութագրի** կերպարներին<br>**կազմի** երկ-խոսություններ<br>- **վերլուծի** ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբեր-մունքը նկարագրվող իրա-դարձությունների շրջանակում<br>- **կազմի** նոր բառեր տրված արմատով և ածանցով | 1 | 39-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկ** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **23-րդ շաբաթ** | | | | | | |
| **ՄԻ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ** | | | - «Ինչքա՞ն է կշռում մի փաթիլ ձյունը»: *Արմափ, ածանց:* | - **քննարկի** մեր հայրենիքը, կամ առհասարակ աշխարհն ավելի խաղաղ ու ապահով դարձնելու՝ մարդկանց պատասխանատվությանը վերաբերող հարցեր<br>- **գիտակցի** իր դերն ու պատասխանատվությունը աշխարհն ավելի խաղաղ ու ապահով դարձնելու համար<br>- **խմբավորի** բառերն ըստ կազմության | 2 | 39-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | - «Ո՞րն է լավ»: *Արմատ, ածանց:* | - **իմանա** տեքստի կենդանիների մասին՝ որպես բնության էակների<br>- **բնութագրի** հերոսներին<br>- **համեմատի** նրանց կենսակերպը<br>- **գտնի** դժվար իրավիճակից դուրս գալու մի քանի ելքեր<br>- **կազմի** նոր բառեր տրված արմատով և ածանցով | **2** | **43-րդ** |
| | | | Համատեղ ընթերցանություն | | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |

| 24-րդ շաբաթ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ՄԻ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ** | | | - «Ո՞րն է լավ»: *Արմաս, ածանց:* | - **սինթեզի** իրական կյանքից դեպքեր, երբ մարդիկ օգնում են իրար՝ իրենց հնարավորություն-ների շրջանակում<br>- **գնահատի** իր ուժեղ և թույլ կողմերը,<br>- **ունենա** բարձր ինքնագնահատա-կան | 1 | 43-րդ |
| | | | - «Մեկ և յոթ»: *Արմատ, ածանց:* | - **իմանա** տարբեր ազգությունների մա-սին՝ ըստ բնագրի<br>- **իմանա** մասնագիտու-թյունների մասին՝ ըստ բնագրի<br>- **շարունակի** տեքստը՝ ավելացնե-լով մի քանի հերոս<br>- **բացատրի** | 3 | 47-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընտրության մոտիվացիան<br>- **վերլուծի** միջանձնային փոխհարաբերությունները<br>- **քննարկի** աշխարհն ավելի խաղաղ ու ապահով դարձնելու՝ մարդկանց պատասխանատվությանը վերաբերող հարցեր<br>- **կարևորի** սեփական կարծիքն ու որոշումը՝ որևէ խնդրում դրական տեղաշարժ արձանագրելու համար<br>- **խմբավորի** բառերն՝ ըստ կազմության | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **25-րդ շաբաթ** | | | | | | |
| **ՄԻ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ** | | | - «Տարբեր, բայց նույնը»:<br>*Արմատ, ածանց:* | - **նկարագրի** կերպարներին<br>- **ապրումակցի** կերպարներին<br>- ոչ խոսքային միջոցներով **գնահատի** հերոսների զգայական վիճակը<br>- **առանձնացնի** դուր եկած կամ դուր չեկած հատվածները և հիմնավորի ընտրությունը<br>- **ընդգծի** արմատն ու ածանցը տրված բառերում | 3 | 51-րդ |
| | | | **Ամփոփում** | - **իմանա՝** արմատի և ածանցի մասին<br>- **տարբերակի** բառերն՝ ըստ | 1 | 57-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | կազմության<br>- **լինի** հանդուրժող, համագործակցող<br>- **բացառի** բռնությունն ու խտրականությունը | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկ** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 1 | |
| | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | | 1 | |
| **26-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԹԵ ԻՆՉՈՒ...** | **Ճանաչել** բնության երևույթները:<br>**Բացահայտել** աշխարհի մասին սովորողներին հետաքրքրող մատչելի օրենքներն ու գործընթացները: | ✓ հասկանալով և արտահայտիչ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր<br>✓ բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում | Թեմատիկ խմբի մուտքի խոսքը<br>**(QR կոդ)**<br>- «Եթե ուզում ես»:<br>*Նախադասություն:* | - **իմանա՝** ինչ կարող են ստեղծել փայտից<br>- **բացատրի** ինչից ինչ է առաջանում՝ ըստ բանաստեղծության - արձակ<br>- **շարադրի** բանաստեղծության | **3** | **59-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Նպաստել** սովորողի՝ շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը:<br>**Գնահատել և արժևորել** բնության դերը մարդու կյանքում: | ✓ հարստացնի բառապաշարը նոր բառերով<br>✓ մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային<br>✓ լսի իրեն ուղղված խոսքը<br>✓ կատարի հրահանգներ և արձագանքի<br>✓ պատասխանի ընթերցածի, լսածի վերաբերյալ հարցերին<br>✓ համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի | | բովանդակությունը<br>- **սիրի** աշխատանքը<br>- **կարևորի** բնության դերն իր կյանքում<br>- **իմանա**՝ ինչ է նախադասությունը | | |
| | | | - «Սիրիր կանաչը»: *Նախադասություն:* | - **նկարագրի** առարկաներ, երևույթներ՝ ըստ բնատեղծության (այգի, ծիլ, անտառ և այլն)<br>- **գրի** նամակ կամ հաղորդագրություն՝ ուղղված ծառին<br>- **արտահայտի** իր տպավորություններն ու զգացողությունները՝ բնության մասին<br>- **սովորի** բանաս- | 1 | 63-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սահմանված կանոնները | | տեղծությունն անգիր | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **27-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԹԵ ԻՆՉՈՒ...** | | | «Սիրիր կանաչը» | - **մեկնաբանի՝** «Ծառը դարձավ պահարան» արտահայտությունը<br>- **գնահատի** բնության դերը որպես մարդկանց կյանքը բարեկեցիկ դարձնելու միջոց<br>- **կազմի** նախադասություններ | 2 | 63-րդ |
| | | | - «Արտասովոր եղջերուն»: *Ընդարձակ* | - **իմանա** եղջերուի մասին<br>- **թվարկի** | 2 | 67-րդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *նախադասու-<br>թյուն:* | հերոսներին<br>- **դասակարգի** կենդանիներին (վայրի, ընտանի)<br>- **կազմի** պատմելու պլան<br>- **պատասխանի** ընթերցածի, զգացածի վերաբերյալ հար-ցերին<br>- **կազմի** ընդարձակ նախադասություն-ներ | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 2 | |
| **28-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԹԵ ԻՆՉՈՒ...** | | | - «Արտասովոր եղջերուն»:<br>*Ընդարձակ նախադասու-* | - **առանձնացնի** այն հատվածները կամ մտքերը, որոնք իրատեսական են | 2 | **67-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *թյուն:* | կամ երևակայա-<br>կան<br>- **ներկայացնի** այդ մտքերը աղյուսակով և ավելացնի շարքերը սեփա-<br>կան 1-2 օրինակով<br>- **ստեղծի** ոչ ծավալուն երևակայական տեքստ | | |
| | | | «Ձկնիկը»: | - **իմանա** ձկների ապրելակերպի մասին<br>- **ճանաչի** բնության երևույթները<br>- **իմանա** ջրվեժի մա-<br>սին (տե՛ս «Հայաս-<br>տանյան խճանկար» դասը )<br>- արտահայտիչ **արտասանի** ոտա- | **2** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | նավորը արձակ **շարադրի** ոտա-նավորը<br>- **մեկնաբանի** «Առուն ճամփա ընկավ դեպի ծով» արտա-հայտությունը<br>- **նկարի/պատկերի** «Առուն ցած ընկավ քարափից» նախա-դասությունը և **ներ-կայացնի** այն մեկ բառով (ջրվեժ)<br>- **պահպանի** բնու-թյունը՝ ծանոթ լինելով բնության օրենքներին | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |

| 29-րդ շաբաթ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԹԵ ԻՆՉՈՒ…** | | | - «Անձրևը» : *Համառոտ նախադասու-թյուն:* | - **ճանաչի** բնության երևույթները<br>- **իմանա՝** ինչ է անձրևը<br>- **ներկայացնի** պատ-մվածքի բովանդա-կությունը՝ խոսքա-յին և ոչ խոսքային միջոցներով<br>- **կազմի** համառոտ նախադասու-թյուններ<br>- **լինի** ներողամիտ<br>- **առաջնորդվի** մարդկանց համար բարօրություն անելու գաղափա-րով | **2** | **75-րդ** |
| | | | - «Առավոտ»: *Նախադասու-թյան գլխավոր անդամներ:* | - **իմանա** օրվա պա-հերը<br>- **նկարագրի** օրվա պահերը՝ ըստ | **2** | **79-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | բանաստեղ-ծության<br>- **կազմակերպի** իր առօրյան՝ օրվա տարբեր պահերին<br>- ժամացույցի վրա ցույց տա՝ որ պահը ժամը քա-նիսի հետ է համընկնում<br>- **գտնի՝** որ տողերն են մարդու աշ-խատանքի ու գործերի մասին<br>- **կարևորի** օրվա պահերը՝ որևէ օգտակար գործ կա-տարելու տեսան-կյունից | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 1 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | | **1** | |
| **30-րդ շաբաթ** | | | | | | |
| **ԹԵ ԻՆՉՈՒ…** | | | - «Ո՞ւմ համար է խնձորը»։ *Նախադասության գլխավոր անդամներ։* | - **իմանա** խնձորի **օգտակար** հատկությունների մասին<br>- **պատմի** ընթերցածի, զգացածի վերաբերյալ հարցերին<br>- **կազմի** համառոտ նախադասություններ՝ հարցերի միջոցով առանձնացնելով գլխավոր անդամները<br>- **շարունակի** տեքստը՝ ավելացնելով մի քանի հերոս<br>- **մոդելավորի** | **3** | **83-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | պատմվածքը՝ կազմելով գործողությունների քայլաշարը<br>- **կարողանա** օգտվել բնության բարիքներից՝ ըստ անհրաժեշտության | | |
| | | | «Ջրոս ցանկություն»: | - **իմանա** տարվա եղանակները<br>- **ճանաչի** բնության երևույթները<br>- **բնութագրի** հերոսին<br>- **գրի առնի** իրեն դուր եկած հատվածը նոթատետրում | **1** | **87-րդ** |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | **1** | |
| | | | Գրավոր աշխատանք | | **2** | |

| 31-րդ շաբաթ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԹԵ ԻՆՉՈՒ...** | | | «Զորս ցանկություն»: | - **իմանա** տարվա եղանակների մասին<br>- **գրի** որևէ ցանկություն՝ բացատրելով մոտիվացիան<br>- **գնահատի** բնության անկրկնելիությունն ու հրաշագործությունը, բերի օրինակներ<br>- **գիտակցի** բնության կարևորությունը մարդու կյանքում | **2** | **87-րդ** |
| | | | **Ամփոփում** | - **իմանա՝** ինչ է նախադասությունը<br>- **տարբերակի** նախադասության տեսակները<br>- **ճանաչի** բնության երևույթները | **2** | **92-րդ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | - **կարևորի** բնության դերն ու նշանակությունն իր կյանքում | | |
| | | | Համատեղ ընթերցանություն | **տե՛ս մեթոդական ձեռնարկը** | 1 | |
| | | | Գրավոր աշխատանք | | 1 | |
| | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | | 1 | |
| **32-րդ շաբաթ** | | | | | | |
| **Ուսումնական ձեռքբերումների ամփոփում ամրապնդում** | | | | | | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ** | | | | | | |
| S1, S3, S7, S8, S10, S12, S13, S14, S16, S17, S18, S21, S22, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S31, S32, S33, S34, S35 | | | | | | |

Հարկ ենք համարում նաև ներկայացնել «Համատեղ ընթերցանություն» իրականացնելու մեթոդաբանությունը՝ օգնելով ուսուցչին արդյունավետ կազմակերպելու վերոնշյալ դասաժամը (տե՛ս թեմատիկ պլանը):

## ՀԱՄԱՏԵՂ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընթերցելու կարողությունների ձևավորումը տարրական դպրոցի հիմնական խնդիրներից է ոչ միայն աշակերտներին գիտելիքներով զինելու, այլև անձի ձևավորման, որոշակի կարողունակությունների (իմաստասիրություն, մտածական ու ստեղծագործական կարողություններ, վարքագիծ և այլն) զարգացման համար հիմք նախապատրաստելու տեսանկյունից:

Այս առումով դժվար է թերագնահատել փոքրուց ձևավորվող այնպիսի կարողություններն ու հմտությունները, ինչպիսիք են ընթերցածն ընկալելը, մտապահելը, սեփական վերաբերմունք դրսևորելով վերարտադրելը, ստացած բառապաշարն հաղորդակցման ժամանակ օգտագործելը:

Համատեղ ընթերցանությունն առավելապես համագործակցային ուսուցման և ուսումնառության վառ դրսևորում է, որտեղ պահանջվում են այնպիսի կարողություններ ինչպիսիք են՝ աշխատանքը խմբում, որոշումների համատեղ ընդունում, փոխուսուցում, կարևոր սոցիալական հմտությունների զարգացում, որոնք ենթադրում են դրական, կառուցողական անդրադարձ, հանդուրժողականություն այլակարծության նկատմամբ, բարեկրթություն, հարգանք և այլն:

Որպես ուսումնական խնդիր յուրաքանչյուր անհատի կարդալու տեմպը, ընթերցողական կարողությունների զարգացման աստիճա-

նը հաշվի առնելով՝ մենք գործ ունենք սովորելու մի գործիքի հետ, ինչն օգնում է անհատին մտածելու և զարգանալու: Այն ներառում է լուռ և բարձրաձայն ընթերցանությունը, մտքերի փոխանակումը ընթերցածի շուրջ, ընթերցվող նյութի հետ կապված տարատեսակ աշխատանքները, ինչպես նաև բանավոր կամ գրավոր անդրադարձը:

Ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որն ստիպում է խորհել ընթերցվող նյութի մասին՝ մտքերի, գաղափարների, կարծիքների, դատողությունների, եզրահանգումների բանավոր և գրավոր փոխազդեցությամբ: ***Այս իմաստով, մենք առանձնահատուկ շեշտում ենք համատեղ ընթերցանությունը, որի իրականացման կարևորագույն նախապայմաններն են կարդալու նպատակի հստակ և ընկալելի սահմանումը, ինչպես նաև փոխներգործուն քննարկումներն ընթերցածի շուրջ***:

Կարդալը կրտսեր դպրոցականի համար բարդ գործընթաց է՝ մտածողության, հիշողության, կամքի, ուշադրության և զգացմունքների դրսևորմամբ: Աշակերտներին բովանդակության պասիվ ընկալողներից գաղափարների ակտիվ կառուցողներ դարձնելը նախ և առաջ նշանակում է հետևել, որ աշակերտները ոչ թե սոսկ կարդան տեքստը, այլ կարդացածը կիրառեն ակտիվ հաղորդակցության ժամանակ: Այն օգնում է աշակերտներին տեքստային նյութերի ընթերցանությունն ավելի արդյունավետ և կիրառելի դարձնել: Ստորև ներկայացնում ենք մի գծապատկեր, որով փորձել ենք մասամբ ամբողջացնել համատեղ ընթերցանության բովանդակությունն ու տեսակները:




Շատ կարևոր են **ընթերցանության բարձրաձայն և լուռ ձևերը**, երբ առավելագույնս մշակվում են կարդալու հմտություններ:

Ընթերցողական գործունեության կարողություններն ու հմտությունները ապահովում են ստեղծագործության բազմաշերտ ընկալումը: Սրա հիմքում տեքստի շուրջ կազմակերպվող համակողմանի աշխատանքն է, որի արդյունքը կլինի յուրաքանչյուր աշակերտի ընթերցողական կարողությունների զարգացումը:

Ընդունելով, որ գերնպատակը տեքստի հասկանալը և հաճելի ընթերցանությունն է՝ իրականացվում է համատեղ, ուղղորդված և անհատական ընթերցանության տարբեր մեթոդներով: Առավել կարևորը ընթերցանությունը վայելելու համատեքստում **ընկալելն է:** Համատեղ ընթերցանության ժամանակ ընդունելի են տարբեր եղանակներ.

- կարդում է ուսուցիչը (կամ որևէ մեծահասակ)՝ սովորողներին ցուցադրելով նկարներ, տեսանյութեր ընթերցածի շուրջ,
- աշակերտներին ներգրավում են ընթերցանության մեջ՝ հարցադրումներ անելով, թե ինչ են նրանք մտածում՝ ինչ կպատահի հետո, այսպիսով՝ առաջարկելով նրանց մեկնաբանել պատմությունը,
- համատեղ ընթերցանության գիրքն ընտրվում է աշակերտների կողմից. աշակերտները կարող են վերցնել իրենց նախընտրած տարբերակը և կարդալ այն անհատապես կամ զույգերով:
- կարդալուց հետո սովորողները նկարում, գրում, բեմադրում են պատմությունը կամ յուրացնում են պատմության հետ առնչվող նոր բառապաշարը,
- ընթերցանությանը հաճելի տրամադրվածություն են ապահովում պատմության վերաբերյալ աշակերտների կողմից արված կանխագուշակումներն ու դատողությունները, որոնք բացահայտվում են պատմության վերընթերցման միջոցով,
- ընթերցանությունը և հաղորդակցությունը ներառում են հարցադրումներ այն մասին, թե հաջորդիվ ինչ է լինելու պատմության մեջ,
- համատեղ ընթերցանության համար մոտիվացնող հանգամանք է մեծածավալ ստեղծագործությունների կամ պատմվածաշարերի շարունակական, պարբերական ընթերցումը,
- ընթերցանությունը խթանող հանգամանքներ են գրքի վերնագրի և պատմության նկարազարդումների ուսումնասիրությունն ու քննարկումը:

Ուզում ենք առանձնակի շեշտել այն սկզբունքը, որով առաջնորդվել ենք մեր «Մայրենի 2» դասագիրքը ստեղծելիս: Դասագրքում զետեղված նկարները հիմնականում վկայակոչված են ուղղորդելու, կողմնորոշելու, օգնելու կատարել տրված առաջադրանքնե-

րը, բայց ոչ պատկերավորելու, լուսաբանելու տեքստերի բովանդակությունը: Մենք կարևորորում ենք հենց աշակերտների կողմից բնագրերի ընկալումը և պատկերազարդումը:

Մինչև կարդալ սկսելը կարևոր է խոսել այն մասին, թե ինչ նախնական տեղեկություններ ունի աշակերտը թեմայի մասին: Խոսվում են բանալի բառերի մասին, քննարկվում, պարզաբանվում, հիմնավորվում են դատողությունները:

**Ընթերցանությունը խթանող որոշ հանգամանքներ.**

- աշակերտի համար գիրք ընտրելու հնարավորություն ստեղծել,
- առաջարկել աշակերտներին հետաքրքրող թեմաներ և ընթերցանության աղբյուրներ,
- աշակերտներին առաջարկել ընթերցել իրենից կրտսեր կամ ավագ /տատիկ, պապիկ…/ ունկնդիրների համար,
- մեկմեկու իրենց կողմից ընթերցված և հավանության արժանացած գրքեր նվիրել,
- լուռ կարդալը. լուռ կարդալու ընթացքում ուսուցիչն էլ կարող է կարդալ.
- ինքնաշեն գրքեր պատրաստել և ներկայացնել. նշենք, որ այս աշխատանքը համագործակցային է և թիմային, խմբային, զույգով և ընկերական շփումների մեծ հնարավորություն է տալիս:
- իրականացնել ընտանեկան ընթերցանություն գրադարանում:

Գրադարաններում ընթերցանության դեպքում բազմաթիվ առումներով աշակերտը կատարում է իր առաջին քայլերը: Երբ օրինակ ծնողները և երեխան հաճախ գիրք են վերցնում, ապա ընտանիքում տիրում է հոգևոր միասնություն, խաղաղություն և սեր: Ընթերցանության մթնոլորտը պետք է դառնա ընտանեկան ավանդույթ, լինի պարբերական: Կարևոր է, որ գրքերը պարզապես չվերածվեն տեղեկատվության աղբյուրների կամ ժամանցի միջոցների, այլ ունենան ընդհանուր կրթական և մշակութային դեր: Երեխանե-

րի և ծնողների համատեղ ընթերցանությունը տանը և գրադարաններում շարունակական հոգեբանական և մանկավարժական գործընթացի գործողություններ են: Ստեղծագործությունների վերլուծությունը կարող է լինել բանավոր, գրավոր, խաղային և այլն: Ընտանեկան ընթերցանությունը առանձնահատուկ դեր է խաղում: Միասին ընթերցված մի պատմությունը, դրա քննարկումը ընտանիքի անդամներին ավելի է մտերմացնում, հոգևոր կերպով միավորում նրանց:

Ընթերցանությունը դիտվում է որպես կրթական միջավայր: Դրա կարևորությունն ունի իր գործոնները.

- ընթերցանության ակտիվությունն ու մշակույթը ձևավորվում է լսելու և խոսելու զուգորդմամբ,
- նպաստում է երեխաների ուշադրության խորացմանը,
- օգնում է երեխաներին դառնալ շփվող,
- ձևավորվում է իրողությունների հուզական և գեղագիտական ընկալումը (հաղթել, ուրախանալ, տխրել, տխրել, կատակել, ծիծաղե):
- կարևոր է անհրաժեշտ է ընթերցանության ֆիզիկական միջավայրը տրամադրող դարձնելը, ինչպես նաև հիգիենիկ պայմանների և անվտանգության ապահովումը առումով՝ յուրաքանչյուր անկյունում այն գրավիչ ու ապահով դարձնելով:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Կրթության մասին›› ՀՀ օրենք:
2. ‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենք:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, ՀՀ կառավարության նիստի N 33 արձանագրային որոշում, 26.08.2004:
4. ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշում:
5. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում:
6. Հանրակրթության պետական չափորոշիչ
7. Կ. Թորոսյան, Կ. Չիքուխչյան «50 հարց ու պատասխան», Զանգակ-2013
8. Ամիրջանյան Յ.Ա. Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Երևան 2005
9. Ա. Արնաուդյան և ուրիշներ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: ԿԱԻ հրատարակչություն, Երևան 2004.
10. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ. և ուրիշ. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ.-Եր.:Անտարես, 2006.
11. Օ. Ս. Միքայելյան... Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան «ԿԱԻ», Երևան, 2010
12. Пидкасистый П.И., Педагогика, Москва, 2002:

**15. В.А.Сластенин. “Общая педагогика”, в двух томах. М. 2002:**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք ..........................................................3
Ձեռնարկի մասին ....................................................8
**Բաժին I**
Առարկայական ծրագիր ........................................10
**Բաժին II**
Խաչվող հասկացություններ ..................................20
**Բաժին III**
«Մայրենի-2» դասագրքի կազմման
սկզբունքներն ու առանձնահատկությունները...........30
**Բաժին IV**
«Մայրենի-2» դասագրքի բովանդակային
քարտեզը ..............................................................54
**Բաժին V**
Աշխատենք այսպես.................................................71
**Բաժին VI**
Գնահատում ..........................................................88
Ձևավորող գնահատում...........................................96
Ինքնագնահատում .................................................98
Փոխադարձ գնահատում ......................................100
**Բաժին VII**
Կարողունակահեն դասի պլանավորում..................103
Օրինակելի թեմատիկ պլանավորում .....................115
Համատեղ ընթերցանություն .................................172
Օգտագործված գրականության ցանկ ....................178

**Անահիտ Արնաուդյան**

**Մարինե Մանուկյան**

*Երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության,*
*մշակույթի և սպորտի նախարարության կողմից*

# Մայրենի 2

## Մեթոդական ձեռնարկ

Խմբագիր՝
Համակարգչային ձևավորումը՝
Կազմի ձևավորումը՝


ՄԱՅՐԵՆԻ 2
I

ՄԱՅՐԵՆԻ 2
II